

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԵՍԱՅԱՆ ԱՆԱՅԻՏ ՍԱՐՄԵՆԻ

<<ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ>>

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԲ.00.02-Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մոլորիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի

գիտական աստիճանի հայցման համար

**Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների**  
**դոկտոր,**

**արոՖեսոր Գ. Բ. Դանիելյան**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ** -----

3

**ԳԼՈՒԽ 1. ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐԸ և դրանց իրավական հիմքերը**

§1. <<Ընտրական վեճ>> եզրույթի բնորոշման հիմնախնդիրները ----  
----- 13

§2. Ընտրական վեճերի առաջացման պատճառները -----  
--- 27

§3. Ընտրական վեճերի դասակարգումը -----  
--- 39

§4. Իրավասու բյեկտությունն ընտրական վեճերի քննության  
տեսանկյունից ----- 55

**ԳԼՈՒԽ 2. ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ՎԱՐՋԱԻՐԱՎԱԿԱՆ քննության  
առանձնահատկությունները**

§1. Ընտրական հանձնաժողովները որպես ընտրական վեճեր քննող  
մարմիններ ---70

§2. Ընտրական հանձնաժողովների կողմից ընտրական վեճերի  
քննության առանձնահատկությունները -----  
----- 90

§3. Ընտրական վեճերի քննությունն այլ վարչական մարմինների  
կողմից ----- 100

**ԳԼՈՒԽ 3. ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ դատական քննության  
առանձնահատկությունները**

§1. ՀՀ վարչական դատարանի կողմից ընտրական վեճերի քննության սահմաններն ու առանձնահատկությունները -----  
----- 109

§2. ՀՀ սահմանադրական դատարանը որպես ընտրական վեճեր քննող մարմին -- 127

**ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ** -----  
139

**ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ** -----  
147

## **ՆԵՐԱՆՈՒ ԹՅՈՒՆ**

### **Թեմայի արդիականությունը և հետազոտության վիճակը:**

Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական, իրավական պետության կառուցման գործընթացն ուղղորդող կարևոր գործոններից են հնարավորինս կատարյալ ընտրական օրենսդրությունը և ընտրական համակարգը: Գործնական հետազոտությունները վկայում են ընտրական օրենսդրության խոցելիության, անկայունության և նվազ արդյունավետության մասին: Դեռևս գտնվելով ձևավորման փուլում, վերջինս անհարկի հաճախակի է ենթարկվում առանցքային, արմատական փոփոխությունների, ինչը թույլ է տալիս փաստել, որ այն առնվազն անհրաժեշտ չափով չի բավարարում ընտրական գործընթացների նվազագույն պահանջներին: Չնայած միջազգային փորձագիտական խմբերի, մասնավորապես, Վենետիկյան հանձնաժողովի ներկայացուցչության՝ ՀՀ ընտրական օրենսդրության վերաբերյալ արտահայտած, հիմնականում, դրական եզրակացությանը, այնուամենայնիվ, գործնական զարգացումները ցույց են տալիս, որ

օրենսդրությունը չի հանգեցնում ընտրախախտումների, ընտրական վեճերի նվազեցմանը, ուստի անհրաժեշտ է փոխել, վերափաստավորել նշված ինստիտուտների առնչությամբ օրենսդրության բարելավման վերաբերյալ ձևավորված պատկերացումները:

Կարծում ենք, որ, առաջին հերթին, դա պայմանավորված է իրավական մշակույթի պակասով, ինչը հանդիսանում է իրավական բարեփոխումների ողջ գործընթացը կանխորոշող կարևոր գործոն, և առանց որի հնարավոր չէ ապահովել ինչպես բնականոն իրավաստեղծ գործունեություն, այնպես էլ իրավաչափ իրավակիրառ պրակտիկա, այսինքն, հասարակության շրջանակներում առանց բավարար իրավական մշակույթի ձևավորման՝ արտասահմանյան և ավագույն օրենսդրական փորձի ներդրումը դատապարտված է ձախողման: Այս խնդիրն արդիական է ողջ աշխարհում և, հատկապես, հետխորհրդային երկրներում:

Վերոգրյալից ելնելով կարելի է նշել, որ ընտրական վեճերի համակողմանի քննությունն երաշխավորող ընթացակարգերի մշակումը նույնպես հանդիսանում է ընթացող իրավական բարեփոխումների դրսևորումներից մեկը: Դրանց քննության և և՛ ուժման արդյունքում վեր են հանվում նաև ընտրական օրենսդրության մեջ առկա անկատարություններն ու իրավակիրառ պրակտիկայում դրսևորվող թերությունները: Այդ իսկ պատճառով, թեմայի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ոչ միայն մշակել ընտրական վեճերի օբյեկտիվ քննություն և և՛ ուժում երաշխավորող ընթացակարգերի վերաբերյալ անհրաժեշտ տեսական դրույթներ, աջակցել գործող ընտրական օրենսդրության կատարելագործմանն ու ներդաշնակեցմանն ուղղված գործընթացներին, հատկապես, ներկայումս ընթացող սահմանադրական բարեփոխումների համատեքստում, այլ և նպաստել ողջամիտ իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը:

Թեմայի արդիականությունը թելադրված է նաև մեր երկրում ընթացող սահմանադրաիրավական բարեփոխումների առանցքային միջարք ինստիտուտների առնչությամբ համալիր գիտական հետազոտություններ նախաձեռնելու և նշված բարեփոխումների բնականոն ընթացքը երաշխավորող հայեցակարգային հիմնադրույթներ առաջադրելու անհրաժեշտությամբ: Ինչպես հայտնի է, ընտրական համակարգն ինքնին դարձել է սահմանադրական բարեփոխումների կարևորագույն թիրախներից մեկը՝ ինչպիսին կլինի հայրենական ընտրական համակարգը, ի գորու կլինի այն նվազեցնելու ընտրական վեճերը. այս և նմանաբնույթ հարցադրումներին հնարավորինս սպառիչ ու, ընդ որում, գիտագործնական չափանիշներով պատասխաններ առաջադրելու համար անհրաժեշտ է կոնկրետ հարցադրումներով համակողմանի տեսական հետազոտություն:

Ընտրական վեճերի վերաբերյալ որոշ դատողությունների կարելի է հանդիպել հայրենական իրավագետների առանձին աշխատություններում, սակայն դրանք դեռևս չեն հետազոտվել որպես ինքնուրույն ուսումնասիրման նյութ, համակողմանիորեն չեն ուսումնասիրվել դրա սահմանադրաիրավական և վարչաիրավական ասպեկտները: Վերը նշված հեղինակներն ընտրական վեճերին անդրադարձել են այնքանով, որքանով այն անհրաժեշտ է եղել այլ հարցադրումներով իրենց ուսումնասիրությունն առավել ամբողջական ներկայացնելու համար, այնինչ տվյալ աշխատության շրջանակներում հետազոտվում է ընտրական վեճ իրավական երևույթն ու դրա քննությանն ու լուծմանն առնչվող այն հարցերը, որոնք ինքնուրույն ուսումնասիրության կարիք ունեն:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Տվյալ ուսումնասիրության նպատակն է ընտրական վեճի՝ որպես միջճյուղային ինստիտուտի էության բացահայտումը, դրա

առաջացմանը նպաստող պայմանների և պատճառների վերհանումը, քննության և լուծման եղանակների համալիր ուսումնասիրությունը, ինչպես նաև դրա արդյունքում ընտրական վեճերի կարգավորմանն ուղղված օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանը նպաստելը:

Ուսումնասիրությունը լիարժեք դարձնելու նկատառումներից ելնելով աշխատությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- <<ընտրական վեճ>> իրավական եզրույթի վերաբերյալ առկա բնորոշումների բազմազանության ուսումնասիրությունն ու դրանց համեմատական վերլուծության արդյունքում հնարավորինս համապարփակ և կոնկրետ իրավահարաբերությունների էությանը համապատասխան բնորոշման մշակումը, ինչը կնպաստի այդ ինստիտուտի իրավական կարգավորման բարելավման ուղենիշների բացահայտմանը,

- ընտրական վեճերի առաջացման պատճառների ու նպաստող պայմանների վերհանումն ու դրանց վերացմանն ուղղված կազմակերպական-իրավական ուղիների առաջադրումը,

- ընտրական վեճերի տեսակների ուսումնասիրությունը, դրանց առանձնահատկությունների բացահայտումը և համարժեք իրավական լուծումների առաջադրումը,

- ընտրական վեճերի սուբյեկտային կազմի կարգավիճակի ու լիազորությունների առանձնահատկությունների ուսումնասիրությունն ու դրանց դերի և նշանակության պարզաբանումն ընտրական վեճերի քննության և լուծման համատեքստում,

- ընտրական վեճերի՝ վարչական և դատական կարգով քննության և լուծման օրենսդրական թերությունների բացահայտումն ու դրանց համալիր լուծման համար գիտականորեն հիմնավորված առաջարկությունների ներկայացումը,

- ընտրական վեճերի քննության և լուծման ընթացքում ՀՀ սահմանադրական դատարանի դերի ու գործունեության համակողմանի հետազոտությունը և այդ առնչությամբ ծագած հիմնախնդիրների լուծմանը միտված եզրահանգումների առաջարկումը:

**Ուսումնասիրության օբյեկտը և առարկան:**

Ուսումնասիրության օբյեկտ են հանդիսանում այն իրավական լծակները, որոնք ուղղված են ընտրական գործընթացի ժամանակ քաղաքացիների խախտված ընտրական իրավունքների պաշտպանության իրականացմանը:

Ուսումնասիրության առարկա են հանդիսանում մասնագիտական գրականության մեջ տեղ գտած տեսական դրույթները, որոնք բացահայտում են ընտրական վեճի, որպես միջճյուղային ինստիտուտի էությունը, ընտրական վեճերի քննությունն ու լուծումը կարգավորող իրավական ակտերում ամրագրված նորմատիվ դրույթները, ինչպես նաև ընտրական վեճերի լուծման առնչությամբ ձևավորված իրավակիրառ պրակտիկան, միջազգային փորձագիտական եզրակացություններն ու սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները:

**Գիտական նորույթը:** Ատենախոսությունն առաջին փորձերից է՝

ներկայիս իրավաքաղաքական իրողությունների վերլուծության արդյունքներով Հայաստանի Հանրապետությունում ընտրական վեճերի, դրանց քննության և լուծման սահմանադրաիրավական և վարչաիրավական ասպեկտների համալիր հետազոտության, ինչպես նաև ընտրական վեճերի լուծման՝ որպես անձի ընտրական իրավունքների պաշտպանության իրավական միջոցի համալիր ներկայացման ուղղությամբ: Վերոնշյալ համատեքստում փորձ է արվել ներկայացնել ընտրական վեճերի քննության կատարելագործմանն ուղղված օրենսդրական մի շարք առաջարկություններ, որոնք կարող են նպաստել ընտրական

իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Մասնավորապես, հիմնավորվել է ՀՀ օրենսդրությամբ ամրագրված ընտրական իրավասուբյեկտության շրջանակի ընդլայնման, ընտրական վեճերի քննության համատեքստում ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կարգավիճակի որոշակիացման և լիազորությունների սահմանափակման անհրաժեշտություն: Առաջին անգամ փորձ է արվել ներկայացնելու խմբային հայցի ինստիտուտը՝ որպես կոլեկտիվ ընտրական իրավունքների պաշտպանության միջոց՝ սահմանելով դրա կիրառման համար անհրաժեշտ նախադրյալներ:

**Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:**

Ելնելով առաջադրված նպատակներից և դրանցից հետևող խնդիրներից, պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները.

1. <<Ընտրական վեճ>> իրավական եզրույթի համալիր հետազոտությունը թույլ է տալիս հանգել ու այն եզրակացության, որ այն հանդիսանում է միջճյուղային ինստիտուտ և չի կարող ամբողջովին ներառվել որևէ ինքնուրույն իրավունքի ճյուղի մեջ ու դրա սահմաններում դառնալ ամբողջական կանոնակարգման առարկա: Այս տեսական մեկնակետը կանխորոշում է նաև հիշյալ եզրույթի իրավական կարգավորման առանձնահատկությունները: Նույնաբանությամբ հարաբերություններ կարգավորող իրավական ակտերում հիշյալ եզրույթը կիրառվում է տարբեր տերմիններով, ինչը ոչ միայն չի նպաստում օրենսդրության ներդաշնակեցմանը, այլ և իրավական որոշակիության տեսանկյունից դժվարություններ է առաջացնում իրավակիրառ գործունեության ընթացքում՝ առավել խոցելի դարձնելով կարգավորվող ոլորտը: Ուստի, կարծում ենք, որ նպատակահարմար է օրենսդրությամբ ամրագրել «ընտրական վեճ» եզրույթի համապարփակ բնորոշումը, որը կիրառելի կլինի նաև այլ



իրավական ակտերով կարգավորվող ընտրաիրավական հարաբերությունների կարգավորման ընթացքում:

2. Առաջարկվում է արմատապես վերանայել ընտրական վեճերի առաջացման պատճառների ողջ համակարգի ուսումնասիրության վերաբերյալ ձևավորված մեթոդաբանությունը, որի դեպքում ընտրական իրավունքի խախտման հանգեցնող յուրաքանչյուր գործոն, որպես կանոն, ինքնըստինքյան դիտարկվում է որպես ընտրական վեճի առաջացման պատճառ՝ խեղաթյուրելով տվյալ հասկացության էությունն ու նպատակային նշանակությունը: Յետագոտության շրջանակներում վեր է հանվել «պատճառ» եզրույթի էությունը և այդ համատեքստում ներկայացվել ընտրական վեճի առաջացման միակ պատճառ՝ իրավախախտումը, և դրան նպաստող գործոնների համակարգը:

3. Ընտրական վեճի, որպես ընտրական հարաբերության մասնակիցների իրավասուբյեկտության համակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բացի քաղաքացիական իրավասուբյեկտությանը բնորոշ ընդհանուր պահանջներից, քննարկվող դեպքում անհրաժեշտություն է ծագել սահմանելու լրացուցիչ չափանիշներ (անձի քաղաքացիությունը, առողջական վիճակը՝ դատական կարգով անգործունակ ճանաչելը, ազատագրման վայրում պատիժ կրելը, բնակության վայրը և այլն), որոնք պայմանավորված են ոչ այնքան զուտ դատավարության, որքան ներկայացուցչական ժողովրդավարության կայացման խնդիրներով:

Մինչդեռ, հայրենական օրենսդրության հիմքում ավանդաբար դրվել են զուտ դատավարական շահերով թելադրված իրավակարգավորումներ, արդյունքում անհիմն սահմանափակելով ընտրական իրավունքների լիարժեք պաշտպանությունն ապահովելու հնարավորությունը: Այս նկատառումով համակարգված ներկայացվել են սուբյեկտների շրջանակի և դրանց ներկայացվող

պահանջների վերանայման վերաբերյալ գիտագործնական  
չափանիշները:

4. Կարևորելով ընտրական իրավունքների հանրային  
նշանակությունը՝ ատենախոսությունում առաջարկվում է որպես  
կոլեկտիվ իրավունքների պաշտպանության միջոց կիրառել  
խմբային հայցը: Ընտրական վեճերի քննության ընթացքում այս  
ինստիտուտի կիրառման նպատակահարմարությունը բխում է այն  
հանգամանքից, որ ընտրությունների ընթացքում պետական մարմնի  
կայացրած որոշմամբ հաճախ խախտվում են ոչ թե մեկ անձի, այլ մի  
որոշակի ընտրազանգվածի ընտրական իրավունքներ: Միաժամանակ,  
նկատի ունենալով խմբային հայցի ինստիտուտի առնչությամբ առկա  
սուր տարածայնությունները, առաջարկվում է նախապատվությունը  
տալ ոչ թե ավանդաբար ձևավորված խմբային հայցին, այլ միայն  
որոշակի վերապահումներով դրակիրառման տարբերակին:

5. Ընտրական հանձնաժողովների կողմից ընտրական վեճերի  
քննության սկզբունքների կազմում առանձնահատուկ դեր ունի  
հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքը:  
Այս սկզբունքի առնչությամբ, հիմնականում դրանք համարժեք  
ընկալման հիմքով, ի սկզբանե գործնականում անհարկի բացասական  
վերաբերմունք է ձևավորվել՝ հայեցողական լիազորությունն  
ինքնին դիտարկելով որպես կոռուպցիոն ռիսկեր պարունակող  
գործոն: Ատենախոսությունում հիմնավորվել է այն  
դիրքորոշումը, որ հայեցողական լիազորությունը  
սահմանափակելու նախադրյալները բոլորովին այլ ենթատեքստ  
ունեն, որ հարկ է ոչ թե նշված սկզբունքի իրացման պատրվակով  
անվերապահորեն սահմանափակել վարչական մարմինների, այդ  
թվում՝ ընտրական վեճեր քննող մարմինների հայեցողական  
լիազորությունները, այլ հստակեցնել դրանց կիրառման հիմքերն  
ու պայմանները:

6. ՀՀ ընտրական օրենսգրքով կարգավորված է բացառապես  
ընտրական հանձնաժողովի որոշումների, գործողությունների

(անգործության) բողոքարկման կարգը, ինչը վկայում է այն մասին, որ տվյալ դեպքում ելակետ է ընդունվել այն դիրքորոշումը, որ կուեգիալ մարմնի պարագայում իրավաչափ չէ վերջինիս առանձին անդամների գործողությունները (անգործությունը)՝ վարչական կարգով բողոքարկելու իրավական հիմքեր սահմանելը: Ատենախոսությունում հիմնավորվել է, որ վերը նշված իրավակարգավորումը բավարար չէ ընտրական իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու համար, ուստի անհրաժեշտ է վերանայել այս դիրքորոշումը և սահմանել նաև ընտրական հանձնաժողովի անդամի գործողությունն ու անգործությունը բողոքարկելու հնարավորություն:

7. Ատենախոսությունում ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին վերապահված լիազորությունների այն հատվածը, որն առնչվում է և առանցքային նշանակություն ունեցող հարցերով որոշումներ կայացնելուն, և, միաժամանակ, դրանց վերաբերյալ բողոքները քննելուն, գնահատվել է ոչ իրավաչափ, իսկ վերլուծության արդյունքներով առաջադրվել են այդ մարմնի կարգավիճակին առավել համահունչ լիազորություններ վերապահելու չափանիշներ: Միաժամանակ, առաջարկվել է վերանայել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ձևավորման կարգը՝ ելնելով չեզոքության, անկողմնակալության և շահերի հավասարակշռության սկզբունքներից, քանի որ գործող ընթացակարգն ի գործում չէ բացառելու սուբյեկտիվ դրսևորումներ:

8. Հիմք ընդունելով այն իրողությունը, որ ընտրական իրավունքների պաշտպանության ոլորտում վարչական արդարադատության ինստիտուտի կիրառումը տարաբնույթ մեկնաբանությունների առիթ է հանդիսացել, առաջադրվել է եզրահանգում այն մասին, որ, թեև այդ նորամուծությունն արդարացված է (նկատի է ունեցվել այն, որ հիմնականում ընտրական վեճերի կողմ են հանդիսանում որոշակի վարչարարություն

իրականացնող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ ու դրանց պաշտոնատար անձինք), այնուամենայնիվ, ընթացակարգերի մի որոշակի հատված ճշգրտման կարիք ունի և չի բխում վարչական արդարադատության էությունից, մասնավորապես, ընտրական գործերի ընդդատությանը, վարչական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակին, դատական ակտի ուժի մեջ մտնելուն և այլն: Ատենախոսությունում համակարգված անդրադարձ է արվել վերջիններին և ներկայացվել կոնկրետ առաջարկություններ դրանք վերանայելու նկատառումով:

**Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը:** Հետազոտության ընթացքում օգտագործվել են գիտական ուսումնասիրման ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ մեթոդներ: Մասնավորապես, ընդհանուր մեթոդներից օգտագործվել են վերլուծության (անալիզ) և սինթեզի, ինդուկցիայի և դեդուկցիայի, ձևական տրամաբանության և այլ մեթոդներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընտրական վեճերն անընդհատ զարգացող, հարափոփոխ երևույթներ են, հեղինակի կողմից կիրառվել է դիալեկտիկայի մեթոդը՝ հատկապես ընտրական օրենսդրության ուսումնասիրության ընթացքում: Լայնորեն կիրառվել է նաև համակարգային-կառուցվածքային մեթոդը: Հատուկ մեթոդներից կիրառվել են համեմատական-իրավական, գործառնության, ձևական-իրավական և այլ մեթոդներ:

Ատենախոսությունում, պայմանավորված հետազոտության կոնկրետ նպատակով և խնդիրներով, կիրառվել են նաև քաղաքագիտական, սոցիոլոգիական, տրամաբանական, փիլիսոփայական, էթիկական հնարքներ, որի համար օգտագործվել են նաև համապատասխան գիտական-տեսական դրույթներ:

**Աշխատության տեսական հիմքը:** Ելնելով <<ընտրական վեճ>> եզրույթի բազմակողմանի ուսուցիչ ատենախոսության համար

տեսական հիմք են հանդիսացել իրավունքի տարբեր ճյուղեր ներկայացնող գիտնականների աշխատությունները, որոնց մեջ, հատկապես, պետք է առանձնացնել սահմանադրական իրավունքի, վարչական իրավունքի և վարչական դատավարության, պետության և իրավունքի տեսության հիմնախնդիրների հետազոտմանը նվիրված գիտական ուսումնասիրությունները:

Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են հայրենական և արտասահմանյան հեղինակների, մասնավորապես՝ Գ. Գ. Հարությունյանի, Ն. Ա. Այվազյանի, Գ. Բ. Դանիելյանի, Ռ. Հ. Եղյանի, Է. Շաթիրյանի, Ա. Մանասյանի, Ս. Ա. Ավազյանի, Վ. Բ. Իսրաելյանի, Լ. Գ. Ալեխիչևայի, Յու. Ա. Դմիտրիևի, Ա. Վ. Իվանչենկոյի, Ե. Պ. Իշչենկոյի, Ա. Ե. Իշչենկոյի, Մ. Ս. Մատեյկովիչի, Մ. Կ. Տրեուշնիկովի, Օ. Վ. Տուպիկովի, Ա. Ա. Վեշնյակովի, Յու. Ա. Վեդենենի, Ա. Ե. Պոստնիկովի, Ն. Յու. Խամանյովայի, Դ. Փեթիթի, Դ. Շոնի, Ա. Ռուֆելի և ուրիշների աշխատությունները:

**Աշխատության նորմատիվ-իրավական և փորձառնական (Էմպիրիկ)**

**հիմքը:** Ատենախոսության նորմատիվ հիմքն են կազմում ՀՀ Սահմանադրությունը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական Կոնվենցիան, ընտրական իրավունքին առնչվող միջազգային իրավական այլ փաստաթղթերը, ՀՀ ընտրական օրենսգիրքը, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ սահմանադրական դատարանի և վարչական դատարանի՝ ընտրական վեճերի քննության ու լուծման վերաբերյալ որոշումները, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, ինչպես նաև ստորադաս ընտրական հանձնաժողովների որոշումներ, միջազգային փորձագիտական խմբերի եզրակացություններ և այլն:

**Ուսու մնասիրության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը** պայմանավորված է ատենախոսության մեջ շարադրված դրույթներով ու եզրահանգումներով, որոնք ուղղված են քաղաքացու ընտրական իրավունքների պաշտպանությունն իրականացնող ընթացակարգերի կատարելագործմանը:

Ատենախոսության տեսական նշանակությունը պայմանավորված է ընտրական վեճերի կարգավորմանն ուղղված գիտական մտածողության մեջ արվող տեսական ներդրումով, քանի որ աշխատանքը պարունակում է համապարփակ եզրահանգումներ ու ընդհանրացումներ, որոնք կարող են հետագայում օգտագործվել ընտրական վեճերի լուծմանն ուղղված տեսական խնդիրների քննարկման ընթացքում:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատությունը պարունակում է առաջարկություններ, որոնք ուղղված են ընտրական օրենսդրության կատարելագործմանն ու իրավասու մարմինների կողմից ձևավորվող իրավակիրառ պրակտիկայի արդյունավետության բարձրացմանը: Ուսու մնասիրության արդյունքները կարող են օգտագործվել նաև ուսու մնական գործընթացում:

**Ատենախոսության արդյունքների փորձարկումը:** Աշխատանքը կատարվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնում, որտեղ անցկացվել է դրա քննարկումը և գրախոսությունը: Ատենախոսությունում արտացոլված եզրահանգումներն ու հիմնարկային ամփոփվել են մի շարք գիտական հրապարակումներում, ինչպես նաև ընտրական օրենսդրության մեջ կատարվելիք փոփոխությունների և առաջարկությունների ամփոփ փաթեթ է ուղարկվել ՀՀ Ազգային ժողով:

**Ատենախոսության կառուցվածքը:** Ատենախոսության ամբառաջադրված խնդիրների արդյունավետ լուծման նպատակով նախատեսվել է աշխատանքի այնպիսի կառուցվածք, որի միջոցով հնարավոր կլինի համակողմանիորեն ներկայացնել հետազոտվող նյութը: Աշխատությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են ինը պարագրաֆներ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

**ԳԼՈՒԽ 1. ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

**§1. <<Ընտրական վեճ>> եզրույթի բնորոշման հիմնախնդիրները**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն, Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին, որն այն իրականացնում է նաև ազատընտրությունների

միջոցով: Այս հիմնադրույթից բխում է, որ ընտրական գործընթացը կրում է «անընդհատ» բնույթ, որը պայմանավորված է պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների բնականոն ձևավորման անհրաժեշտությամբ: Ընտրությունների ընթացքում, պայմանավորված օրենսդրության անկատարությամբ, ընտրական գործընթացի մասնակիցների շահերի բախմամբ, նրանց իրավագիտակցության, իրավական և քաղաքական մշակույթի անընդունելի մակարդակով, հաճախ առաջանում են ընտրական վեճեր, որոնք յուրաքանչյուր ընտրական գործընթացի անբաժանելի, ինչպես նաև անցանկալի ուղեկիցներն են: Ընտրությունների նախապատրաստման, անցկացման և ամփոփման ընթացքում հնարավոր չէ խուսափել ընտրական գործընթացի մասնակիցների իրավունքների խախտումներից, քանի որ այդ խախտումների հիմքում հաճախ լինում են ոչ միայն սուբյեկտիվ, այլ նաև օբյեկտիվ գործոններ<sup>1</sup>:

Ընտրական վեճերը բնորոշ են բոլոր ընտրություններին, անկախ այն հանգամանքից, թե ժողովրդավարության կայացվածության ինչ մակարդակ ունեցող երկրում են դրանք տեղի ունենում: Կատեսակետ, որի համաձայն, ընտրական վեճերի առկայությունը վկայում է ոչ թե քաղաքական համակարգի անկատարության, այլ դրա բաց, թափանցիկ լինելու մասին, իհարկե, եթե իրականացվում է դրանց օբյեկտիվ քննություն և լուծում<sup>2</sup>: Այլ կերպ ասած, ընտրական վեճի առկայությունը փաստում է քաղաքական համակարգի պատրաստակամությունը՝ ապահովելու անձի խախտված ընտրական իրավունքի վերականգնումը: Կարծում ենք, որ սովյալ տեսակետի վերագրումը այսօրվա ՀՀ քաղաքական համակարգին ցանկալի է, սակայն ոչ այնքան իրատեսակ:

<sup>1</sup> St' u Izбирательное право и избирательный процесс в Российской Федерации. / С. А. Авакьян, Л. Г. Алехичева, В. В. Альхименко и др; Отв. Ред. А. В. Иванченко-М., 1999.- էջ 408:

<sup>2</sup> St' u Resolving election disputes in the area: OSCE. Towards a standard election dispute monitoring system. By Dennis Petit. ODIHR.Warsaw. 2000.էջ 4-6:



Ինչպես նշվեց, ընտրական վեճերն անխուսափելի են, սակայն հարկ է ոչ թե համակերպվել դրանց առկայության հետ, այլ ձգտել դրանք հասցնել նվազագույնի: Միաժամանակ, օգտվելով դրանց առկայությունից, անհրաժեշտ է փորձել վեր հանել ընտրական օրենսդրության մեջ առկա բացթողումներն ու իրավակիրառ գործընթացում տեղի ունեցող խախտումները: Ճիշտ է, օրենսդրության թերությունների բացահայտման համար գոյություն ունենալու առավել արդյունավետ լծակներ, սակայն կարելի է այդ առումով որոշակի օգուտ քաղել նաև արդեն իսկ գոյություն ունեցող այնպիսի բացասական երևույթի համակողմանի ուսումնասիրությունից, ինչպիսին է ընտրական վեճը:

Ընտրական վեճերի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նաև դրանց՝ քաղաքացիների ընտրական իրավունքների հետ ունեցած անբախտելի կապով, քանի որ ընտրական վեճի իրավական կարգավորման ինստիտուտը, ըստ էության, հանդիսանում է քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության եղանակ: Քաղաքացիների ընտրական իրավունքներ ասելով հասկանում ենք միմյանց հետ փոխկապակցված իրավունքների ամբողջական համակարգ, որի հիմքում ընկած է ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածը, և որից բխում է անձի ընտրելու և ընտրվելու իրավունքը:

Վերը նշված հանգամանքներով է պայմանավորված ընտրական վեճի բնորոշման, դրա առաջացման պատճառների և նպաստող պայմանների, ինչպես նաև քննության և լուծման ընթացակարգերի ուսումնասիրության անհրաժեշտությունը: Միջազգային հանրությունը նույնպես մեծ ուշադրություն է դարձնում ընտրական վեճերին, դրանց առաջացման պատճառներին, ինչպես նաև արդար և թափանցիկ քննության համար անհրաժեշտ ընթացակարգեր

մշակելու ն ուղղված հիմնախնդիրներին<sup>3</sup>: Այնուամենայնիվ, «ընտրական վեճ» եզրույթն օգտագործվում է միայն մասնագիտական գրականության մեջ, իսկ օրենսդրությամբ ընտրական հարաբերություններ կարգավորող յուրաքանչյուր նորմատիվ իրավական ակտ այս խնդրի վերաբերյալ յուրովի մոտեցում է ցուցաբերել, քանի որ ընտրական վեճերը բազմազան են՝ կախված ընտրությունների անցկացման մակարդակից, հակասության առարկայից, իրավահարաբերության կողմերի կազմից, վեճը լուծող մարմնից և այլն:

Բացի այդ, ընտրական վեճերը հեղհեղուկ բնույթ ունեն և մեկ սահմանման միջոցով փորձել ամբողջությամբ բացահայտել տվյալ երևույթի էությունը, կարծում ենք, որ իրատեսական չէ: Այնուամենայնիվ, իրավաբանական գրականության մեջ «ընտրական վեճ» հասկացության վերաբերյալ կան տարբեր ձևակերպումներ, սակայն դրանցից ոչ մեկը, մեր կարծիքով, չի բացահայտում դրա էությունը և չի բավարարում իրավական եզրույթի հատկանիշների համակողմանի բացահայտման պահանջին: Դամասամբ պայմանավորված է նաև նրանով, որ ընտրությունները ենթադրում են անընդհատ կրկնվող գործընթաց, և յուրաքանչյուր նոր ընտրություն, հետևաբար, նաև դրաարդյունքում առաջացող ընտրական վեճ, ձեռք է բերում առանձնահատկություններ, որոնք նախապես կանխատեսել հնարավոր չէ: Փորձենք քննարկել դրանցից մի քանիսը:

Ընտրական վեճը հակասություն է, որն առաջանում է քաղաքացու ընտրական իրավունքի խախտման արդյունքում պետական կառավարման (պետության նախագահ, խորհրդարան) և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, ինչպես նաև հանրաքվեի անցկացման ընթացքում և լուծվում է վարչական կամ

---

<sup>3</sup> St' u Guide to electoral dispute resolution. The Carter center. 2010 Atlanta. GA 30307. [www.cartercenter.org](http://www.cartercenter.org), :

դատական կարգով:<sup>4</sup> Տվյալ հասկացության մեջ ընդգծվում են հետևյալ քաղաքիչները. ա) ընտրական վեճը՝ որպես հակասություն, բ) ընտրական վեճի առաջացման պատճառը քաղաքացիների ընտրական իրավունքի խախտումն է, գ) ընտրական վեճի տեսակները դատակարգվում են, ըստ ընտրությունների մակարդակի՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, ինչպես նաև հանրաքվեներ և դ) ընտրական վեճը քննվում է վարչական կամ դատական կարգով:

Մեր կարծիքով, այնքան էլ ճիշտ չէ ընտրական վեճերի առաջացման միակ պատճառ համարել քաղաքացիների ընտրական իրավունքների խախտումը, քանի որ այդ դեպքում արդարադատության և օրինականության ապահովման նկատառումներից ելնելով պետք է ընտրական իրավախախտումների վերաբերյալ բոլոր բողոքները բավարարվեն: Բացի այդ, ընտրական վեճի առարկա կարող է հանդիսանալ նաև ընտրական իրավունքի խախտման հնարավորությունը, քանի որ ինչպես ՀՀ ընտրական օրենսգրքից (այսուհետ՝ Ընտր. օր.), այնպես էլ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքից (այսուհետ՝ ՎԴՕ) բխում է, որ անձը իր ընտրական իրավունքի պաշտպանության համար կարող է դիմել համապատասխան մարմին, երբ ոչ միայն խախտվել է, այլ նաև կարող է անմիջականորեն խախտվել վերջինիս իրավունքը: Ուստի անհրաժեշտ է վերաձևակերպել նշված սահմանումը և ընտրական վեճերի առաջացման պատճառը դիտարկել քաղաքացիների ընտրական իրավունքի ոչ միայն իրական, այլ նաև հնարավոր խախտումը:

Մեկ այլ դիրքորոշման կողմնակիցներ գտնում են, որ ընտրական վեճերն ընտրական օրենսդրության կիրառման կապակցությամբ վեճերն են, որոնք առաջանում են

---

<sup>4</sup> St' u Izбирательное право и избирательный процесс в Российской Федерации. // С. А. Авакьян, Л. Г. Алехичева, В. В. Альхименко и др; Отв. Ред. А. В. Иванченко-М., 1999.- էջեր 408-409:

ընտրությունների նշանակման, կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման ընթացքում և լուծվում են ընտրական հանձնաժողովների և դատարանների կողմից:<sup>5</sup> Այս բնորոշման համաձայն. ա) ընտրական վեճը բնութագրվում է որպես վեճ, բ) ընտրական վեճի առաջացման ժամանակահատված է համարվում ընտրությունների նշանակման, կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման ընթացքը, գ) ընտրական վեճի լուծումն իրականացվում է հանձնաժողովների և դատարանների կողմից, դ) ընտրական վեճի առաջացման պատճառ է հանդիսանում ընտրական օրենսդրության կիրառումը:

Այս բնորոշման մեջ ակնհայտ է իմաստային, բովանդակային անհամապատասխանությունը, քանի որ «ընտրական վեճը՝ վեճ է» ձևակերպումը ոչ միայն չի բացահայտում տվյալ եզրույթի էությունը (անկախ այն բանից, թե դա երբ է առաջացել, ինչ պատճառով և ինչպիսի կարգով է լուծվում), այլ և ինքնին արժեզրկում է բնորոշման նշանակությունը, սպառիչ չի բացահայտում դրա բովանդակությունը:

Ընտրական վեճերը՝ ընտրական հանձնաժողովների և դատարանների կողմից լուծելու առնչությամբ դիտարկման հետևողական չի կարելի համաձայնվել, քանի որ ընտրական վեճերն ընտրական հանձնաժողովներից և դատարաններից բացի լուծվում են նաև ընտրական գործընթացի կազմակերպմանն ու անցկացմանն աջակցող այլ վարչական մարմինների, մասնավորապես, ոստիկանության, տեղական ինքնակառավարման մարմինների և այլոց կողմից: Չե տևաբար, տվյալ բնորոշման մեջ ընտրական հանձնաժողովներին այլ վարչական մարմիններից առանձնացնելու

---

<sup>5</sup> Ст'а Избирательное право и избирательный процесс в Российской Федерации. / Отв. Ред. А. А. Вешняков.-М., 2003. Ёз 490:

անհրաժեշտությունն չկա, քանի որ այդ հանգամանքը տվյալ բնորոշումն ավելի խոցելի է դարձնում:

Ինչ վերաբերում է տվյալ բնորոշմամբ ընտրական վեճի առաջացման պատճառին՝ ընտրական օրենսդրության կիրառմանը, ապա հայտնի է, որ կիրառումը իրավունքի իրացման ձևերից մեկն է, իսկ իրացումը իրավունքի կարգադրագրերի դրսևորումն է իրավունքի սուբյեկտների վարքագծում՝ **իրավունքների կենսագործման, պարտականությունների պահպանման, կատարման և կիրառման** միջոցով:

Իրավունքի կենսագործումն արտահայտվում է հնարավորությունների իրացման մեջ, որոնք իրավունքի նորմերով տրամադրվում են իրավահարաբերության մասնակիցներին: Տվյալ դեպքում ընտրական իրավահարաբերության մասնակիցն իր հայեցողությամբ է որոշում իրացնել իրեն պատկանող ընտրական իրավունքը, թե՛ ոչ:

Պարտականության պահպանման, որպես իրացման ձևի էությունը կայանում է իրավունքի սուբյեկտի կողմից իրավունքի նորմով արգելված գործողության կատարումից զերծ մնալը, օրինակ, ընտրելու իրավունքի գաղտնիության սկզբունքը չխախտելը: Կատարումը պահանջում է իրավունքի սուբյեկտի ակտիվ գործունեությունն իր պարտականությունների կատարման ուղղությամբ, օրինակ, ընտրական հանձնաժողովը պարտավոր է կատարել օրենքով սահմանված կարգով իր վրա դրված պարտականությունները:

Ինչ վերաբերում է կիրառմանը, ապա սա իրացման հատուկ ձև է: Այն պետական իրավասու մարմինների և դրանց պաշտոնատար անձանց իշխանագոր գործունեությունն է՝ ուղղված կենսական կոնկրետ

դեպքերի և անհատապես որոշակի անձանց վերաբերյալ իրավական նորմերի իրացմանը<sup>6</sup>:

Վերը նշվածից ակնհայտ է դառնում, որ ընտրական վեճերն առաջանում են ոչ միայն ընտրական օրենսդրության կիրառման, այլև ընդհանուր առմամբ ընտրական իրավունքի իրացման արդյունքում, ուստի տվյալ սահմանման մեջ «կիրառում» եզրույթը նպատակահարմար է օգտագործել:

«Ընտրական վեճ» հասկացության վերաբերյալ այլ հեղինակների կողմից նույնպես տրվել են զանազան բնորոշումներ<sup>7</sup>, որոնք, սակայն բովանդակային առումով քիչ են տարբերվում վերը նշվածներից, հետևաբար, նմանատիպ վերլուծությունից գերծմնալու համար դրանց քննարկումը նպատակահարմար է նաև համարում:

Իրավաբանական գրականության մեջ գոյություն ունի ընտրական վեճի հասկացության հետազոտության վերաբերյալ մեկ այլ ուղղություն, որն ընտրական վեճի հիմքում դնում է «կոնֆլիկտը (բախումը)»՝ հակասությունը, և ինչպես յուրաքանչյուր վեճ, ընտրական վեճը նույնպես ներկայացնում է որպես կոնֆլիկտ՝ նվազագույնը երկու (և ավելի) կողմերի միջև: Ընդ որում, նշվում է, որ ընտրական վեճն ուղղակի կոնֆլիկտ է, որն առաջացել է ընտրական գործընթացում, դա, նախ և առաջ, իրավական վեճ է<sup>8</sup>:

Ի հակադրություն այս տեսակետի՝ առաջ է քաշվում այն մոտեցումը, որ «ընտրական վեճն» ավելի լայն հասկացություն է,

<sup>6</sup> Տե՛ս Վ. Ն. Խրոպանյուկ. Պետության և իրավունքի տեսություն. Գոշ հրատ., 1997. Էջ 308:

<sup>7</sup> Տե՛ս, օրինակ Գ. Մուրադյան, Յ. Թովմասյան-Ընտրական վեճեր. Ուսումնական ձեռնարկ. Ասոդիկ 2007. Էջ 9: Охотников Р.А. К вопросу о понятии избирательного спора // Актуальные проблемы государства и права: Материал конференции молодых ученых, аспирантов и студентов. Владивосток, 2002. Էջ 57:

<sup>8</sup> Տե՛ս Юридическая конфликтология/отв. ред. В. Н. Кудрявцев.-М. 1995, онлайн библиотека, <http://www.koob.ru>, Էջ 37:

քան կոնֆլիկտը, քանի որ այն ընտրական վեճի սկզբնական փուլն է<sup>9</sup>: Սակայն իրավաբանական կոնֆլիկտի կողմնակիցներն իրենց տեսակետը հաստատում են, նշելով, որ իրավաբանական կոնֆլիկտը կողմերի միջև առկա այն հակասությունն է, որի տարրերը (սուբյեկտ, օբյեկտ, սուբյեկտիվ կողմ, օբյեկտիվ կողմ) իրավական բնույթ են կրում, և այդ հակասությունը պետք է լուծվի իրավական միջոցներով՝ իրավական ընթացակարգի օգնությամբ<sup>10</sup>: Այսպես, ընտրական վեճի առկայությունը ենթադրում է անձի ընտրական իրավունքի իրական, հնարավոր կամ ենթադրյալ խախտում կամ այդ իրավունքի իրականացման խոչընոտում, ինչը նույնպես հանդիսանում է ընտրական իրավունքի խախտում, և այդ խախտումը վերացնելու և անձի ընտրական իրավունքները պաշտպանելու կապակցությամբ առկա դիմում: Դիմող կողմը, իրավասու մարմիններ կայացնելով ընտրաիրավական հարաբերության սուբյեկտի ոչ իրավաչափ գործողությունը (անգործությունը) կամ որոշումը, պահանջում է ճանաչել այն անօրինական, իսկ հակադիր կողմը իրավասու է ապացուցել իր գործողությունների հիմնավորվածությունն օրինականությանը:

Ինչպես տեսնում ենք, ընտրական վեճը որպես կոնֆլիկտ դիտարկելու ուղղության համաձայն, ընտրական վեճի կողմերն օժտված են հակադիր իրավական շահերով: Կողմերի գործողությունների օրինականության ստուգումը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրականացվում է իրավասու մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով՝ ընտրական վեճերի լուծման համար նախատեսված ընթացակարգային առանձնահատկություններին համապատասխան: Իրավասու մարմինը քննում է երկու միմյանց բացառող պահանջներ, որոնք վերաբերում

<sup>9</sup> Ст'ю Пошивайлова А.В., Понятие и особенности избирательного спора // Право и политика. 2005. № 11 (17). Стр 124–133:

<sup>10</sup> Ст'ю Баранов В. М., Худойкина Т. В. Теория юридического конфликта: философские и социолого-правовые аспекты// Юрист-правовед.-2000. N 1, Стр 25:

են միևնույն հարցին, ուստի նա պարտավոր է որոշել, թե կողմերից որի պահանջն է բավարարում օրենքին: Յետևաբար, ընտրական վեճ քննող մարմնի խնդիրն է գործով բոլոր ապացույցների օբյեկտիվ քննությունն ու դրանց համապատասխան օրինական որոշում կայացնելը, որը կվերացնի ընտրական իրավունքների իրացման խոչընդոտը:

Այսպիսով, ընտրական վեճն իրավական կոնֆլիկտների տեսանկյունից ուսումնասիրության կողմնակիցների մոտեցման համաձայն, ընտրական վեճն իրարամերժ ընտրական շահերով օժտված կողմերի միջև առկա հակասությունն է, որը լուծվում է օրենքով սահմանված կարգով<sup>11</sup>: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ այս սահմանումը բովանդակային առումով ավելի նեղ է: Ոչ այն պատճառով, որ կոնֆլիկտն ընտրական վեճի սկզբնական փուլն է, ինչպես որ մեկնաբանում են հակառակ դիրքորոշում ունեցող մասնագետները<sup>12</sup>, այլ այն հիմքով, որ երբեմն ընտրական վեճերն առաջանում են ոչ թե իրավունքի խախտման, այլ դրա անհրաժեշտ պաշտպանության պարագայում, ինչը բացառում է իրարամերժ ընտրական շահերով օժտված կողմի առկայությունը: Յետևաբար, իրավաբանական կոնֆլիկտի այդ կողմից ընտրական վեճի բնորոշումը նույնպես ամբողջությամբ չի բավարարում այս եզրույթի հատկանիշների համակողմանի բացահայտման պահանջին:

Իրավաբանական կոնֆլիկտի առանձնահատկությունն ը կայանում է նրանում, որ հաճախ դրա առաջացմամբ է պայմանավորված ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև իրավունքի այլ սուբյեկտների միջև իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը և դադարումը, ուստի կարելի է եզրակացնել, որ իրավաբանական կոնֆլիկտները (իրավաբանական

<sup>11</sup> Ст'ю Князев С. Д., Охотников Р. А. Избирательные споры: юридическая природа и порядок рассмотрения: Монография.-Владивосток, Изд-во Дальневост. ун-та, 2005., էջեր 5-15:

<sup>12</sup> Ст'ю Пошивайлова А.В., նշված աշխատությունը, էջ 124-133:



կոնֆլիկտոլոգիայի տեսանկյունից), իսկ սովյալ դեպքում ընտրական վեճերը, իրենց բնույթով, ըստ էության, հանդիսանում են իրավահարաբերությունների<sup>13</sup>:

Ճիշտ է, ընտրական վեճն ինքնին հանդիսանում է հասարակական հարաբերություն, սակայն սույն հետազոտության ուսումնասիրության առարկա է հանդիսանում այն պահից, երբ վեր է ածվում իրավահարաբերության, այսինքն երբ այն կոնկրետ իրավաբանական փաստի հիմքով տեղափոխվում է իրավական հարաբերություն և գտնվում է վեճ լուծելու իրավասություն ունեցող համապատասխան մարմնի վարույթում:

Այսպիսով, ելնելով վերը նշված վերլուծությունից, հանգում ենք այն եզրակացության, որ **ընտրական վեճն իրավական հարաբերություն է, որն առաջանում է ընտրական գործընթացի մասնակիցների ընտրական իրավունքի իրական, հնարավոր կամ ենթադրյալ խախտման հիմքով՝ ընտրությունների նշանակման, նախապարաստման, անցկացման և ամփոփման ընթացքում, և լուծվում է վարչական կամ դատական կարգով՝ անհրաժեշտության դեպքում ենթադրելով պատասխանատվության միջոցի կիրառում:**

Ինչպես տեսնում ենք, ընտրական վեճի վերաբերյալ ներկայացված սահմանումներից և ոչ մեկն ընտրական վեճի բնութագրման ընթացքում պատասխանատվության միջոցի կիրառում չի նախատեսում՝ որպես առանձին հատկանիշ: Չավանաբար, հեղինակները <<վարչական կամ դատական կարգով լուծում>> արտահայտության ներքո ներառում են նաև ենթադրյալ պատասխանատվության միջոցի կիրառումը: Սակայն, կարծում ենք, որ սովյալ դեպքում անհրաժեշտ է իրավաբանական պատասխանատվությունն առանձնացնել, որպես ընտրական վեճի բաղկացուցիչ տարր, քանի որ ընտրական վեճի բնույթին

<sup>13</sup> Стѣу Катков. Д. Б., Корчиго Е. В. Избирательное право: учебное пособие. Юриспруденция. М. 2001, էջ 31:

համատեքստում այն օժտված է որոշակի առանձնահատկություններով:

Ինչպես վերը նշվեց, ընտրական վեճերը հանդիսանում են իրավահարաբերություններ, ուստի դրանց շրջանակներում ընտրական իրավունքների խախտման մեջ մեղավորների նկատմամբ կիրառվում են պատասխանատվության միջոցներ, եթե, իհարկե, դրան հրաժեշտությունը կա: Վերևում արդեն նշվել է, որ ընտրական վեճի առաջացման պատճառ կարող է հանդիսանալ անձի՝ իր ընտրական իրավունքի խախտման վերաբերյալ մոլորության մեջ լինելը, այսինքն, երբ անձը կարծում է, որ իր ընտրական իրավունքը խախտվել է, սակայն իրականում խախտում տեղի չի ունեցել: Բնականաբար, վերը նշված պատասխանատվության միջոցի կիրառումը վերաբերում է ոչ թե նմանատիպ ընտրական վեճերին, այլ այնպիսիներին, որոնց քննության և լուծման արդյունքում օբյեկտիվորեն հայտնաբերվում են իրավախախտումներ:

Իրավունքի տեսության մեջ ընտրաիրավական օրենսդրության խախտման համար նախատեսված պատասխանատվության վերաբերյալ տրվել են բազմաթիվ սահմանումներ: Մասնավորապես, ընտրությունների և հանրաքվեի վերաբերյալ օրենսդրության խախտման համար իրավաբանական պատասխանատվությունը սահմանվում է որպես իրավախախտի պարտականություն՝ կրելու օրենքով սահմանված իրավունքի սահմանափակումները, որոնք կիրառվում են իրավասու մարմինների կողմից<sup>14</sup>: Մեկ այլ մոտեցմամբ էլ իրավաբանական պատասխանատվությունն ասելով, հեղինակը հասկանում է իրավախախտի նկատմամբ այնպիսի իրավական նորմերի կիրառում, որոնք ենթադրում են պետական հարկադրանքի կիրառում պետական մարմինների կողմից, որն արտահայտվում է

<sup>14</sup>Ст'ю Табиханов А. Д. Проблемы ответственности за нарушения избирательного законодательства/ Академический юридический журнал.-2002. - N1. Стр 58-60:

անձնական կամ գույքային բնույթի իրավասահմանափակումներով<sup>15</sup>:  
Ընդհանուր առմամբ, վերլուծելով վերը նշված սահմանումները,  
կարելի է ասել, որ ընտրական իրավունքների խախտման համար  
նախատեսված պատասխանատվությունը ենթադրում է իրավախախտի  
նկատմամբ պետական հարկադրանքի միջոցի կիրառում՝ իրավասու  
մարմինների կողմից:

Կախված կիրառվող նորմատիվ իրավական ակտի ճյուղային  
պատկանելությունից՝ ընտրաիրավական խախտումների համար  
առանձնացվում է՝ ա) պատասխանատվությունն ըստ ընտրական  
իրավունքի, բ) վարչական պատասխանատվությունն և գ) քրեական  
պատասխանատվություն<sup>16</sup>:

Սույն աշխատության շրջանակներում, հատկապես,  
ուշադրության է արժանի պատասխանատվությունն ըստ ընտրական  
իրավունքի, որն իրավաբանական գրականության մեջ անվանվում է  
սահմանադրաիրավական պատասխանատվություն և դիտվում է որպես  
իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ, որը  
նախատեսում է սանկցիաներ և հատուկ սուբյեկտային կազմ<sup>17</sup>:  
Սահմանադրաիրավական պատասխանատվության կիրառման համար հիմք  
է հանդիսանում ընտրությունների ժամանակ ընտրական իրավունքի  
այնպիսի խախտումը, որը չի ենթադրում վարչական կամ քրեական  
պատասխանատվություն: Այն արտահայտվում է իրավախախտի  
նկատմամբ իրավասու մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով  
պետական հարկադրանքի կիրառմամբ: Սակայն ՀՀ ընտրական  
օրենսդրությամբ համակարգված մոտեցում ցուցաբերված է

<sup>15</sup>Տե՛ս Իзбирательное право и избирательный процесс в Российской Федерации// С. А. Авакьян, Л. Г. Алехичева, В. В. Альхименко и др; отв. Ред. Иванченко А. В., 1999- էջ 553:

<sup>16</sup> Տե՛ս Իгнатенко В.В. Юридическая ответственность в избирательном процессе. М.,РЦОИТ. 2002. էջեր 12-13:

<sup>17</sup> Տե՛ս, օրինակ, Авакьян С. А. Актуальные проблемы конституционно-правовой ответственности // Конституционно-правовая ответственность: проблемы России, опыт зарубежных стран. М., 2001.- էջեր 14-31; Штурнев А. Е. Конституционно-правовая ответственность за избирательные правонарушения в Российской Федерации: общеправовая характеристика и юридическая природа мер.- Владивосток.-2004, էջեր 11-17:

ընտրաիրավական խախտումների համար նախատեսված սահմանադրաիրավական պատասխանատվության միջոցների նկատմամբ, ինչը, կարծում ենք, արդարացված չէ, քանի որ այն կարելի է դիտարկել որպես ընտրական գործընթացների օբյեկտիվությունը կանխորոշող գործոններից մեկը: Այդպիսին կարող է լինել, օրինակ, թեկնածուի գրանցումը մերժելը, անվավեր ճանաչելը, ընտրական հանձնաժողովի որևէ անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ընտրությունների արդյունքների անվավեր ճանաչելը և այլն՝ որպես պատասխանատվության միջոցի կիրառում:

Ինչպես վերը նշվեց, պատասխանատվության միջոցները կիրառվում են ըստ կիրառվող նորմատիվ ակտերի ճյուղային պատկանելության, հետևաբար, պատասխանատվության մյուս տեսակները (վարչական և քրեական) կիրառվում են վարչական դատավարության և քրեական դատավարության օրենսդրության շրջանակներում: Սակայն, հարկ է նշել, որ արդարացի է Գ. Դանիելյանի մոտեցումն այն մասին, որ <<պատասխանատվություն>> եզրույթը բնորոշ է խորհրդային իրավական համակարգին, որն, այնուամենայնիվ, այսօր արմատավորված է ժամանակակից իրավական համակարգում, իսկ տվյալ դեպքում <<պատասխանատվություն>> եզրույթն առավել համահունչ է <<հատուցում>> եզրույթին<sup>18</sup>:

Քանի որ ընտրական վեճերն իրավահարաբերություններ են, իսկ յուրաքանչյուր իրավահարաբերություն կարգավորվում է համապատասխան իրավունքի ճյուղի առանձին հատվածի նորմերով՝ ձևավորելով համապատասխան իրավունքի ինստիտուտ, ուստի վերը նշված վերլուծության արդյունքում կարելի է հանգել այն եզրակացության, որ **ընտրական վեճը հանդիսանում է**

<sup>18</sup> Տե՛ս Գ. Դանիելյան <<Վարչական վարույթ և դատավարություն>>. Ուսումնական ձեռնարկ, Տիգրան Մեծ հրատ., Երևան 2011թ. Էջեր 126-127:

**միջճյուղային ինստիտուտ** քանի որ այն կարող է հանդիսանալ իրավունքի տարբեր ճյուղերի կարգավորման առարկա:

Ինչպես նշվեց, իրավունքի ինստիտուտները հանդիսանում են իրավունքի կոնկրետ ճյուղի բաղկացուցիչ տարրեր, որոնք ներառում են համապատասխան իրավունքի ճյուղի առանձին հատվածի նորմեր: Սակայն այս ընդհանուր կանոնը չի տարածվում ընտրական վեճերի վրա, քանի որ ընտրական վեճերը, կախված դրանց առարկայից, անցկացվող ընտրության մակարդակից, վեճը քննող մարմնից և այլն, կարգավորվում են իրավունքի տարբեր ճյուղերով, օրինակ, սահմանադրական, վարչական, քրեական և այլն: Սրանով է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ գործող օրենսդրության մեջ ընտրաիրավական հարաբերություններ կարգավորող յուրաքանչյուր իրավական ակտ յուրովի մոտեցում է ցուցաբերել «ընտրական վեճ» իրավական երևույթի ինչպես բովանդակային, այնպես էլ կարգավորման ընթացակարգային առանձնահատկությունների նկատմամբ:

Մասնավորապես, Ընտր. օր-ը, որն ընտրական հարաբերություններ կարգավորող հիմնական իրավական ակտն է, «վեճ» կամ «ընտրական վեճ» հասկացություններն առհասարակ չի գործածում, այլ կիրառում է «բողոքարկում» տերմինը, բայց ոչ թե ընդհանուր առմամբ «քաղաքացիների խախտված ընտրական իրավունքների բողոքարկում», ինչպես կիրառվում է այլ երկրների օրենսդրության մեջ<sup>19</sup>, այլ «ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների և անգործության բողոքարկում» (Ընտր. օր. 46-րդ հոդվ.): Սույն հոդվածի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ «բողոքարկումը» վերաբերում է ընտրական իրավունքի

<sup>19</sup> Ст'а Федеральный закон от 12.06.2002 N 61-ФЗ, «Об основных гарантиях избирательных прав и права на референдум гражданам Российской Федерации»// Собрание законодательства Российской Федерации.-17.06.2002г.-N 24:

սուբյեկտների խախտված իրավունքին, որը կարելի է բողոքարկել ինչպես վարչական, այնպես էլ դատական կարգով. այն է յուրաքանչյուր ընտրական հանձնաժողովի վերադաս ընտրական հանձնաժողով, վարչական կամ Սահմանադրական դատարաններ, սակայն թե որ վարչական, և որ դատական ատյան պետք է բողոքարկել համապատասխան խախտումը (որոշումը, գործողությանը, անգործությանը), կախված է այն թույլ տված մարմնի և անցկացվող ընտրության տեսակից: Մասնավորապես, տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությանը (անգործությանը), ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները կարող են բողոքարկվել ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությանը (անգործությանը) (բացառությամբ՝ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի և համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների ընտրությանը արդյունքների վերաբերյալ որոշումների) կարող են բողոքարկվել կենտրոնական ընտրական հանձնաժողով: Համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների ընտրությանը արդյունքների վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությանը (անգործությանը) (բացառությամբ համապետական ընտրությանը արդյունքների վերաբերյալ որոշումների) կարող են բողոքարկվել վարչական դատարան: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ համապետական ընտրությանը արդյունքների վերաբերյալ որոշումները, Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությանը արդյունքների վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել սահմանադրական դատարան (Ընտր. օր. 46-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ մասեր):

Սակայն Ընտր. օր-ի կողմից բոլոր դեպքերի համար օգտագործվող «բողոքարկում» եզրույթի հետ ամբողջությամբ համաձայնվել չենք կարող, քանի որ ընտրական վեճերն առաջանում են ոչ միայն բողոքների, այլև դիմումների հիման վրա: Չնայած «դիմում» և «բողոք» հասկացությունների վերաբերյալ միասնական բնորոշում չկա, բայց, այնուամենայնիվ, դրանք տեսության և իրավակիրառ կտրվածքով տարբեր կերպ են ընկալվում. «բողոք» ասելով հասկանում ենք անձի (\$իզիկական անձ, իրավաբանական անձ) դիմումը հանրային իշխանությունն իրականացնող մարմին կամ դրա պաշտոնատար անձին՝ իր խախտված իրավունքների և շահերի պաշտպանության խնդրով<sup>20</sup>, իսկ «դիմում» եզրույթը ենթադրում է անձի պահանջը համապատասխան մարմին՝ Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված իր իրավունքների իրացման կապակցությամբ<sup>21</sup>: Այլ կերպ ասած «դիմում» ներկայացնելը չի ենթադրում խախտված իրավունքի առկայություն, իսկ բողոքարկումը՝ կայացված որոշման հետ համաձայն չլինելու դեպքում դրսևորվող համարժեք գործողությունն է: Յետևաբար, օրենսդրի կողմից դրանց նույնացումը չի բխում վարչարարության իրավական հիմքերից:

Այնուամենայնիվ, Ընտր. օր-ը մանրամասնորեն սահմանում է ընտրական հանձնաժողովների կողմից ընտրական իրավախախտումների քննության կարգը, իսկ ինչ վերաբերում է վարչական և սահմանադրական դատարաններ ներկայացված բողոքների քննությանը, ապա դա թողնված է համապատասխան ոլորտները կարգավորող օրենսդրական ակտերին: Այսպիսով, այս հանգամանքը ևս մեկ անգամ հաստատում է ընտրական վեճի միջճյուղային ինստիտուտ լինելը, ինչը ենթադրում է, որ վերը

<sup>20</sup> Ст'ю Толковый словарь. Справочно-правовая система «Гарант». 2004. Ст 125:

<sup>21</sup> Ст'ю Дмитриев Ю. А., Израелян В. Б. Избирательное право и процесс в Российской Федерации. Изд-во Феникс, Ростов-на-Дону, 2004.- էջ 785:

նշված իրավական ակտերի միջև անհրաժեշտ է ապահովել ներքին ներդաշնակություն, ինչը, ցավոք, ոչ բոլոր դեպքերում է առկա:

ՎԴՕ-ն չի կիրառում ոչ «ընտրական վեճ», ոչ էլ «բողոքարկում» տերմինները, այլ մեկ ամբողջ գլուխ նվիրում է «Ընտրական իրավունքի պաշտպանությանը», իսկ վերջինիս վերաբերյալ գործերն անվանում է ընտրական գործեր: Օրենսգիրքն ամրագրում է մի շարք առանձնահատկություններ, որոնք, որպես հատուկ վարույթ, բնորոշ են ընտրական գործերին: Այդ առանձնահատկություններին առավել մանրամասն կանդիդատանք հաջորդ գլխում:

Ի տարբերություն վերը նշված երկու իրավական ակտերի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը կիրառում է «վեճ» տերմինը, որն ամրագրված է ՀՀ Սահմանադրության ամբ (ՀՀ Սահմ. 100-րդ հոդվ., 3.1-ին կետ), սակայն չի բացահայտում այդ ձևակերպման բովանդակային բաղադրիչները, ուղղակի ամրագրելով՝ Հանրապետության Նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի լուծման կարգը, ինչը նույնպես տարաբնույթ մեկնաբանությունների առարկա է դարձել<sup>22</sup>:

Ինչպես տեսնում ենք, վերը նշված իրավական ակտերից և ոչ մեկը չի կիրառում «ընտրական վեճ» եզրույթը: Սակայն Ընտր. օր-ի համապատասխան նորմերի վերլուծության արդյունքում ստանում ենք այն հիմնական հատկանիշների ամբողջությունը, որոնցով, ըստ էության, պետք է օժտված լինի ընտրական վեճը. (դա բնական է, քանի որ ընտրական հարաբերություններ կարգավորող հիմնական նորմատիվ ակտը ՀՀ ընտրական օրենսգիրքն է), այն է՝ ա) իրավախախտման (իրական, հնարավոր կամ ենթադրյալ) արդյունքում առաջացած իրավահարաբերություն, բ) վեճը քննող մարմիններ

<sup>22</sup> Տե՛ս Գ. Մուրադյան, Հ. Թովմասյան-Ընտրական վեճեր. Ուսումնական ձեռնարկ. Ասողիկ 2007. Էջ 37:



(վարչական կամ դատական) և գ) իրավահարաբերության կարգավորման սահմանված ընթացակարգ:

Ինչ վերաբերում է մյուս երկու իրավական ակտերին, ապա այս ակտերի դրույթները կարգավորում են ընտրական վեճերի կոնկրետ տարատեսակներ (վարչական դատարանի կողմից քննվող վեճեր և Սահմանադրական դատարանի կողմից քննվող վեճեր), այսինքն՝ առկա է իրավախախտման արդյունքում առաջացած իրավահարաբերությունը՝ վեճը, հստակ սահմանված է այդ վեճի լուծման ընթացակարգը և վեճ լուծող մարմինները. մի դեպքում դա վարչական դատարանն է, իսկ մյուս դեպքում՝ Սահմանադրական դատարանը: Ընտրական վեճերի դասակարգման հիմքերն<sup>23</sup> ուսումնասիրելիս կտեսնենք, որ դրանք դասակարգվում են նաև ըստ վեճը լուծող մարմինների, ինչն էլ կիրառված է ՀՀ օրենսդրությամբ:

Այնուամենայնիվ, մեր կարծիքով, նույնաբնույթ հարաբերություններ կարգավորող իրավական ակտերում տարբեր եզրույթների կիրառումը ոչ միայն չի նպաստում օրենսդրության ներդաշնակեցմանը, այլև դժվարություններ է առաջացնում իրավակիրառ գործունեության ընթացքում՝ առավել խոցելի դարձնելով կարգավորվող ոլորտը: Ուստի, կարծում ենք, որ նպատակահարմար է Ընտր. օր-ում ամրագրել «ընտրական վեճ» եզրույթի համապարփակ բնորոշումը, որը կիրառելի կլինի նաև այլ իրավական ակտերով կարգավորվող ընտրաիրավական հարաբերությունների կարգավորման ընթացքում:

## **§2. Ընտրական վեճերի առաջացման պատճառները**

<sup>23</sup> Ст' у Ищенко Е. П., Ищенко А. Е. Избирательные споры: возникновение, разрешение, предупреждение.-М., РЦОИТ . 2002. – էջ 21:

Ընտրական վեճերը յուրաքանչյուր ընտրական գործընթացի անցանկալի և անխուսափելի ուղեկիցներն են, հետևաբար, դրանք նվազագույնի հասցնելու համար անհրաժեշտ է վերհանել և վերլուծել դրանց նպաստող պայմաններն ու առաջացման պատճառները, մշակել վերջիններիս հաղթահարման կազմակերպական-իրավական ուղիները, ինչպես նաև ընտրական վեճերի քննության և լուծման գործընթացն իրականացնել այնպիսի իրավական հարթության վրա, որպեսզի յուրաքանչյուր լուծված ընտրական վեճ վկայի ինչպես բաց քաղաքական, այնպես էլ անաչառ իրավական համակարգի առկայության մասին:

Մասնագիտական գրականության մեջ ներկայացվում են ընտրական վեճերի առաջացման բազմաթիվ պատճառներ, վկայակոչվում են տարատեսակ գործոններ, որոնք այս կամ այն կերպ կարող են նպաստել ընտրական վեճերի առաջացմանը: Սակայն ընտրական վեճը, որպես միջճյուղային ինստիտուտ, շատ բազմատեսակ և յուրօրինակ է, հատկապես, որ յուրաքանչյուր ընտրական գործընթաց ունի իր քաղաքական առանձնահատկությունները, որոնք իրենց ազդեցությունն են թողնում ընտրական վեճերի առաջացման պատճառների վրա, ուստի, կարծում ենք, որ համապարփակ հնարավոր չէ թվարկել այն բոլոր պատճառները, որոնք կարող են ընտրական վեճ առաջացնել: Այնուամենայնիվ, անդրադառնանք մի քանի հեղինակների, որոնք փորձել են ներկայացնել ընտրական վեճերի առաջացման պատճառների համակարգի իրենց տարբերակը:

Մասնավորապես, Ե. Պ. Իշչենկոյի կարծիքով, ընտրական վեճերի առաջացման պատճառներ են հանդիսանում. ա) ընտրական օրենսդրության խախտումը ընտրողների, քաղաքական ընտրական միավորումների և բլոկների, դրանց տարածքային բաժանմունքների, նախաձեռնող խմբերի կողմից, բ) ընտրական օրենսդրության սխալ ընկալումը և կիրառումը ընտրական

հանձնաժողովների անդամների կողմից, գ) ընտրական օրենսդրության պահանջների խախտումը օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց կողմից, դ) ընտրական օրենսդրության խախտումը զանգվածային լրատվության միջոցների կողմից, ե) ընտրական օրենսդրության խախտումը թեկնածուների, նրանց ներկայացուցիչների, վստահված անձանց, դիտորդների և ընտրական հանձնաժողովների անդամների կողմից, զ) ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում «խարդախ» ընտրական հնարքների կիրառումը, է) ընտրական օրենսդրության անկատարությունը, ը) տեղական և դաշնային ընտրական օրենսդրությունների միջև առկա հակասությունները, թ) ընտրական օրենսդրության ոչ արդյունավետ կիրառումը պրակտիկայում, ժ) ընտրական օրենսդրության խախտումը դատական մարմինների կողմից:<sup>24</sup>

Վերը նշված պատճառների հետ ամբողջությամբ համաձայնվել չի կարելի, քանի որ դրանց մի մասն ուղղակի թվարկում է ընտրական իրավահարաբերությունների այն սուբյեկտների շրջանակը, որոնք կարող են ընտրական իրավունքի նորմ խախտել, իսկ որպես ընտրական վեճի առաջացման պատճառներ դրանց առանձին դիտարկել ու կարիք չկա, քանի որ բոլորն էլ հանդիսանում են իրավախախտումներ:

Դ. Վ. Մոստովչիկովն առանձնացնում է ընտրական վեճերի առաջացման հետևյալ պատճառները. ա) ընտրական հարաբերությունների օրենսդրական կարգավորման անկատարություն, բ) ընտրական գործընթացի մասնակիցների քաղաքական և իրավական մշակույթի ոչ բավարար մակարդակ, այդ թվում գործող օրենսդրության չիմացություն, գ) ընտրական օրենսդրության խախտումներն ընտրողների, թեկնածուների, ընտրական միավորումների և դաշինքների կողմից, դ) ընտրական

<sup>24</sup> Ст'ю Избирательное право и избирательный процесс в Российской Федерации. / Отв. ред. А. А. Вешняков.-М., 2003.- С 2 491:

օրենսդրության պահանջների խախտումները զանգվածային  
լրատվամիջոցների կողմից, ե) ընտրական վեճերի օգտագործումն  
ընտրական գործընթացի մասնակիցների կողմից որպես PR-  
տեխնոլոգիա, գ) ընտրական իրավունքի նորմերի ոչ ճիշտ  
մեկնաբանումը կամ կիրառումը ընտրական հանձնաժողովների  
կողմից<sup>25</sup>:

Ընտրական վեճերի առաջացման պատճառների այս թվարկումը  
նույնպես նման է Ե. Ե. Պ. Իշչենկոյի կողմից առաջադրված  
պատճառներին, մասնավորապես, այստեղ նույնպես առանձին  
պատճառներ են դիտարկվում տարբեր սուբյեկտների կողմից թույլ  
տրված իրավախախտումները, նշվում է օրենսդրության  
անկատարությունը, ինչը միանգամայն արդարացված է, սակայն  
ընտրական վեճի առաջացման անմիջական պատճառ է: Բացի այդ, այս  
թվարկման մեջ հարկ է առանձնացնել վերջին պատճառը, որտեղ  
նշվում է ընտրական հանձնաժողովների կողմից ընտրական  
իրավունքի նորմի ոչ ճիշտ մեկնաբանումը **կամ** կիրառումը: Քանի որ  
մեկնաբանումը կատարվում է ընտրական իրավունքի նորմի  
կիրառման ընթացքում, ուստի այս տերմինների միջև «կամ»  
շաղկապն օգտագործելը տեղին է, այլ կարելի է վերածնակերպել  
հետևյալ կերպ. <<ընտրական նորմի ոչ ճիշտ մեկնաբանումը՝ դրա  
իրացման ընթացքում>>:

Մեկ այլ հեղինակի կարծիքով, ընտրական վեճերի առաջացման  
պատճառ են հանդիսանում. ա) ընտրական օրենսդրության  
թերությունները, բ) ընտրական գործընթացի մասնակիցների մի  
մասի իրավաբանական գրագիտության և իրավական մշակույթի

---

<sup>25</sup> Ст'ю Мостовщиков В. Д. Территориальные избирательные комиссии: система, государственно-правовой статус, порядок формирования и компетенция/ Учебно-методическое пособие.- Екатеринбург, 2002.- էջ 143:

բավականին ցածր մակարդակը և գ) ընտրական գործընթացի մասնակիցների իրավախախտ գործունեությանը<sup>26</sup>:

Վերը նշված հեղինակներից յուրաքանչյուրը, այսպիսով, ներկայացրել է ընտրական վեճերի առաջացման պատճառների իր տեսակետը: Որպես ընտրական վեճերի առաջացման պատճառների առանձին համակարգ, դրանցից որևէ մեկի հետ ամբողջությամբ համամիտ չլինելով հանդերձ, այնուամենայնիվ, անգամ այդպիսին դիտարկելու դեպքում էլ դրանցից յուրաքանչյուրը, կարծում ենք, որոշակի կառուցվածքային փոփոխության կարիք ունի:

Ինչևէ, ելնելով ընտրական վեճերի առաջացման պատճառների վերը նշված վերլուծությանից, փորձենք ներկայացնել ընտրական վեճերի առաջացման պատճառների վերաբերյալ մեկ այլ տարբերակ, որը, ինչպես նշվեց, ելնելով ընտրական վեճերի բազմազանությունից և յուրօրինակությունից, չի հավակնում լինել վերջնական և բացարձակ, այլ մեր կողմից փորձ է ներկայացնել դրանք՝ հաշվի առնելով մեր օրերում ընթացող ընտրական զարգացումների առանձնահատկությունները:

Մինչ այդ, հարկ ենք համարում վերհանել «պատճառ» եզրույթի էությունը, ինչի վերլուծությունը սկզբունքային նշանակություն ունի սվյալ հիմնախնդրի ուսումնասիրության գործում: Այն նշանակում է երևույթ, կոնկրետ փաստական հանգամանք, որով պայմանավորված է մեկ այլ երևույթի առաջացումը<sup>27</sup>: Տվյալ աշխատության շրջանակներում ուսումնասիրվող երևույթն ընտրական վեճն է, իսկ դա պայմանավորող հանգամանքը, ինչպես վերը նշվեց, ընտրական իրավունքի խախտումը կամ հնարավոր խախտումն է, այսինքն

<sup>26</sup> Տե՛ս Գալուշկո Ի. Վ. Правосудие как способ разрешения юридических конфликтов в ходе выборов и источник судебной практики // Вестник Центральной избирательной комиссии Российской Федерации.-2003.-N 1. Էջեր 101-113:

<sup>27</sup> Տե՛ս Թ.Փ. Եֆրեմովա. Новый словарь русского языка. Толково-словообразовательный словарь (онлайн версия). 2010:

ընտրական վեճի առաջացման պատճառն իրավախախտումն է: Չէ որ քաղաքացին դիմում է վարչական կամ դատական ատյան՝ խախտված իրավունքի վերականգնման համար, իսկ խախտված իրավունքը վերականգնելուց հետո ընտրական վեճը համարվում է լուծված: Չետևաբար, ընտրական վեճի առաջացման անմիջական պատճառը հանդիսանում է իրավախախտումը:

Այսպիսով, ընտրական վեճի առաջացման պատճառ է հանդիսանում ընտրական գործընթացի մասնակիցների ընտրական իրավունքների **իրական, հնարավոր կամ ենթադրյալ խախտումը**: Իրական իրավախախտման դեպքում առկա է խախտված իրավունքի վերականգնման վերաբերյալ դիմում (բողոք), և համապատասխան ընտրական վեճեր լուծող մարմինը դիմումը (բողոքը) քննելու ընթացքում հայտնաբերում է օրենքի խախտում և կայացված որոշմամբ վերականգնում է խախտված իրավունքը:

Չհնարավոր իրավախախտման դեպքում առկա է անձի դիմումը՝ իր ընտրական իրավունքը խախտելու իրական հնարավորության առկայության վերաբերյալ, որը պետք է կանխվի համապատասխան ընտրական վեճ լուծող մարմնի կողմից և ապահովվի այդ իրավունքի ադյունավետ իրացում:

Ենթադրյալ իրավախախտման դեպքում առկա է խախտված իրավունքի վերականգնման վերաբերյալ դիմում (բողոք), սակայն ընտրական վեճ լուծող համապատասխան մարմինը օրենքի խախտում չի արձանագրում, այսինքն անձը կարծում է, որ իր ընտրական իրավունքը խախտված է, սակայն իրականում իրավախախտում չկա: Գործնականում ենթադրյալ իրավախախտումների թիվը բավականին մեծ է, հակառակ դեպքում բոլոր ընտրական վեճերը ենթակա են լուծման հոգուտ դիմողի:

Իրավախախտումներն իրենց հերթին պայմանավորված են մի շարք հանգամանքներով, և հաճախ հենց դրանցից որևէ մեկի կամ մի

քանիսի առկայությունը է պայմանավորված իրավախախտման առաջացումը: Մասնավորապես, այդպիսիք են.

1) ընտրական օրենսդրության անկատարությունը, որը կարող է արտահայտվել օրենսդրական ակտերի միջև առկա հակասություններով, օրենսդրության մեջ առկա բացթողումներով, հասկացությունների անհրաժեշտ որոշակիության բացակայությունը և այլն,

2) ընտրական գործընթացի մասնակիցների իրավագիտակցության և իրավական մշակույթի ցածր մակարդակով և այլն:

Նպատակահարմար ենք համարում առավել մանրամասն անդրադառնալ վերը նշված գործոններին:

Այսպես, ընտրական վեճերի առաջացման պատճառ հանդիսացող իրավախախտումները կարող են պայմանավորված լինել միևնույն ոլորտը կարգավորող իրավական ակտում կամ ակտերում ամրագրված նորմերի միջև առկա հակասություններով: Մասնավորապես, կարծում ենք, նմանատիպ հակասություն կա ՀՀ Սահմանադրության 27.1.-րդ հոդվածի և Ընտր. օր-ի 46-րդ հոդվածի 1-ին մասի միջև: Սահմանադրության 27.1.-րդ հոդվածի համաձայն. <<Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք>>, իսկ Ընտր. օր-ի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <<... ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողություններն ու անգործությունը կարող է բողոքարկել ....>>:

Ակնհայտ է, որ Ընտր. օր-ի սույն հոդվածի համաձայն, ընտրական հանձնաժողովի որևէ անդամի կողմից անձի ընտրական իրավունքները խախտելու դեպքում անձը չի կարող տվյալ անդամի

գործողությանը բողոքարկել վերադաս առյան (տվյալ դեպքում մի քանի օրեր անց), քանի որ օրենքը նախատեսում է միայն ընտրական հանձնաժողովի, որպես կոլեգիալ մարմնի, բայց ոչ նրա առանձին անդամի գործողության, անգործության բողոքարկման հնարավորություն, ինչն, ակնհայտորեն, սահմանափակում է ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածով անձին ընձեռնված կարևորագույն իրավունքից օգտվելու հնարավորությունը:

Ընտրական իրավախախտման առաջացումը կարող է պայմանավորված լինել նաև օրենսդրական բացերով, ինչից զերծ չեն նաև ընտրական օրենսդրությունը: Դրանց գիտական վերլուծությանը արված առաջարկություններն ու գործնական կիրառումը հնարավորություն կտան ինչ-որ չափով մեղմելու քննարկվող ոլորտում հասարակության կյանքում առկա հակասությունները և նպաստելու ժողովրդի ու իշխանության միջև վստահության վերականգնումը<sup>28</sup>: Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքում լուծված չեն անհրաժեշտության դեպքում թեկնածուների նախընտրական հիմնադրամները սպասարկող ժամանակավոր հատուկ հաշվեհամարների վրա կալանք դնելու կամ չդնելու հարցը: Այսպես, ՀՀ ընտրական օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն, թեկնածուի նախընտրական հիմնադրամը ձևավորվում է ոչ միայն իր միջոցներով, այլև «համալրվում է ընտրելու իրավունք ունեցող անձանց կամավոր մուծումներից», ուստի վերջիններիս կողմից իրենց նախընտրած թեկնածուի նախընտրական քարոզչությանն աջակցելու նպատակով նրա նախընտրական հիմնադրամ մուծված գումարներով մարել թեկնածուի՝ մինչև թեկնածուի կարգավիճակ ձեռք բերելը և

<sup>28</sup> Տե՛ս Այվազյան Ն. Ա., «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի բարելավման որոշ հիմնախնդիրներ», Բանբեր Երևանի Համալսարանի, 2014, N Իրավագիտություն, 143.3, 2014, 2, էջ 16:



ընտրություններին հետ չկապված քաղաքացիաիրավական պարտավորությունները, նույնպես ընտրելու իրավունք ունեցող անձանց՝ ընտրական օրենսդրությամբ ամրագրված իրավունքի խախտում է, որից ընտրական համակարգն օրենսդրությամբ պաշտպանված չէ, ուստի այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում թեկնածուի՝ մինչև թեկնածուի կարգավիճակ ձեռք բերելը նրա քաղաքացիական պարտավորությունները կատարելը երաշխավորելու համար կալանք դնել նրա հաշիվների վրա, ապա նպատակահարմար է, որ այն դրվի հաշվի այն մասի վրա, որը ձևավորվում է թեկնածուի անձնական միջոցներից կամ ամրագրվի համապատասխան պահանջ:

Սակայն, հարկ է նշել, որ օրենսդրության մեջ բացերի առկայությունն անխուսափելի է, քանի որ օրենքը հասարակական կյանքի բոլոր իրավիճակները սպառնչ կանխատեսել չի կարող<sup>29</sup>:

Բազմաթիվ են նաև դեպքերը, երբ ընտրական վեճերի պատճառ հանդիսացող իրավախախտումները պայմանավորված են ընտրական գործընթացի մասնակիցների իրավագիտակցության, իրավական մշակույթի ցածր մակարդակով և սոցիալական ծանր պայմաններով: Յուրաքանչյուր իրավական պետության կայացման գործում մեծ տեղ ունի հասարակության իրավագիտակցության, իրավական մշակույթի մակարդակն ու սոցիալական դրությունը, քանի որ մեծամասամբ դրանցով է պայմանավորված հասարակության պատկերացումը օրենսդրության, օրինականության և սոցիալական արդարության մասին: Պատահական չէ, որ մեր կողմից, որպես ընտրական իրավախախտումների առաջացմանը նպաստող հանգամանքներ, միասին են դիտարկվում հասարակության իրավագիտակցության մակարդակն ու սոցիալական դրությունը, քանի որ, կարծում ենք, սրանք սերտորեն փոխկապակցված և հաճախ

<sup>29</sup> St' u Вступительная статья в кн. Барак А. Судейское усмотрение. Норма. Пер. с англ; науч. Ред. В.А. Кикоть, Б.А. Страшун, М., 1999.- էջ 8:

միմյանցով պայմանավորված երևույթներ են: Այսինքն, հասարակության իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացմանն ուղղված միջոցառումներն արդյունավետ կլինեն այն հասարակության շրջանակներում, որը գտնվում է սոցիալապես բավարարվիճակում: Դրամասին է վկայում այն, որ Հայաստանի Հանրապետության լայն տարածում ունի <<ընտրական ձայնի վաճառք>> երևույթը<sup>30</sup>, ինչն, ըստ էության, իրավագիտակցության ցածր մակարդակի վառ դրսևորում է, որը բխում է սոցիալական ծանր վիճակից:

Այնուամենայնիվ, իրավագիտակցության ցածր մակարդակը ամբողջովին սոցիալական ծանր վիճակով պայմանավորելը նույնպես, կարծում ենք, ճիշտ չէ, քանի որ այն պայմանավորված է նաև հասարակության մեջ արմատավորված բարքերով, արժեհամակարգերով ու մենթալիտետով: Մասնավորապես, դրանցով են պայմանավորված բազմաթիվ ընտրակեղծիքների, քաղաքական անարդարությանների առկայությունը, ինչն էլ իր հերթին շատ իրավախախտումներ է առաջ բերում: Եթե ընտրողների շրջանակում այդ երևույթը կարելի է ընդունել՝ հաշվի առնելով հասարակության շերտերի զարգացվածության տարբերաստիճանները, ապա ընտրությաննների այն մասնակիցների մոտ, ովքեր համապատասխան սուբյեկտի կարգավիճակ են ձեռք բերում (վստահված անձ, դիտորդ) պետական մակարդակով մասնագիտացված դասընթացներ անցնելուց հետո, դա անընդունելի է, քանի որ պետության կողմից նմանատիպ դասընթացների կազմակերպումը միտված է ընտրական գործընթացների արդյունավետության ապահովմանն ու բացասական դրսևորումների հնարավորինս

<sup>30</sup> St' u Guide to electoral dispute resolution. The Carter center. 2010, Atlanta. GA 30307. [www.cartercenter.org](http://www.cartercenter.org), էջեր 51-55. Ամերիկյան այս կենտրոնն աշխարհի մասշտաբով իր անցկացրած մոնիթորինգի ամփոփման արդյունքում Հայաստանը դասել է այն երկրների շարքում, որտեղ մեծ ներուժ է պետք ներդնել <<ընտրական ձայնի վաճառք>> երևույթը վերացնելու համար, քանի որ այն արմատացած է հասարակության շրջանակում:

նվազեցմանը: Այսպես, 2012թ. մայիսի 6-ի ԱԺ ընտրությունների ընթացքում թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով է դիմել տվյալ ընտրատարածքում գրանցված թեկնածուներից մեկի վստահված անձը՝ թիվ 14/6, 14/10, 14/11, 14/20, 14/21, 14/22 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջով, սակայն վերը նշված ընտրատեղամասերից և ոչ մեկում ներկա չի գտնվել: Այնինչ, Ընտր. օր-ի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն, ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում կարող է ներկայացնել վստահված անձը, եթե ներկա է եղել տվյալ ընտրական տեղամասում: Ուստի թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը դիմումը քննելուց հետո կայացրել է վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում՝ ոչ իրավասու անձի կողմից ներկայացնելու հիմքով: Ստացվում է, որ մասնագիտական դասընթաց անցած և որակավորման ստուգաթիվ հանձնած վստահված անձը կամ չգիտի իր անմիջական իրավունքները, այսինքն մասնագիտական դասընթացներն անարդյունավետ են և ձևական բնույթ են կրում, կամ էլ ինչ-ինչ նկատառումներից ելնելով, ավելորդ լարվածություն է հաղորդում ընդհանրապես ընտրական գործընթացին, մասնավորապես ընտրական հանձնաժողովի աշխատանքին: Ավելին, լինում են դեպքեր, երբ ընտրական հանձնաժողովներն են խախտում ընտրական իրավունքները՝ սխալ մեկնաբանելով գործող օրենսդրությունը: Ընդ որում, խոսքն այնպիսի դեպքերի մասին է, երբ կիրառվող օրենսդրական ակտերը, ըստ էության, առանձնակի բարդություն չեն ներկայացրել:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ընտրությունների կազմակերպչների և մասնակիցների իրավագիտակցության և իրավական մշակույթի ցածր մակարդակը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունում պետական համակարգը, հետևաբար, նաև ընտրական գործընթացները գտնվում են

առավելապես կայացման փուլում, և տարեց տարի անցկացվող ընտրությունների ամփոփման արդյունքում արձանագրվում են դրական փոփոխություններ: Սակայն պետք է նաև նշել, որ այս տարիների ընթացքում եղել են բազմաթիվ դեպքեր, երբ թեկնածուները, փորձելով օգտագործել ցանկացած առիթ, ստեղծել են բախումնային իրավիճակներ և դրանց մեջ ներգրավել զանգվածային լրատվամիջոցներին ու ընտրական հանձնաժողովներին, որպեսզի հետագայում՝ չընտրվելու դեպքում, դրանք օգտագործեն ընտրությունների արդյունքների վիճարկման նախաձեռնություններին առավել տրամաբանական ու իրավաչափ տեսք հաղորդելու նկատառումով:

Այլ կերպ ասած, հաճախ արհեստականորեն հրահրել են ընտրական վեճեր, որպեսզի դրանք օգտագործեն որպես PR-հնարքներ: Բազմաթիվ ընտրախախտումներ են թույլ տրվել ընտրական գործընթացի բոլոր փուլերում, մասնավորապես, կեղծված ընտրացուցակների կազմում, լցունումներ, կրկնակի քվեարկություններ, ընտրակաշարք<sup>31</sup> և այլն: Սրանք ընտրախախտումներ են, որոնք վկայում են ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքների ոչ պատշաճ պաշտպանվածության և այդ իրավունքների պաշտպանությունն իրականացնող մարմինների քաղաքականացված և ոչ անաչ առ լինելու մասին: Կարծում ենք, դա նույնպես մասամբ պայմանավորված է ընտրական գործընթացի մասնակիցների իրավագիտակցության ցածր մակարդակով, պետական մտածելակերպի և մարդու իրավունքները՝ որպես բարձրագույն արժեք ընկալելու պատրաստակամության բացակայությամբ: Այս ամենը կարելի է դիտարկել որպես կայացող երկրի թերացումներ, որոնք անխուսափելի են, և վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում դեռևս չի ձևավորվել միջազգային

<sup>31</sup> St' u Guide to electoral dispute resolution. The Carter center. 2010, Atlanta. GA 30307. [www.cartercenter.org](http://www.cartercenter.org), էջեր 51-55:

չ ափանիշ ներին համարժեք երաշխավորված ժողովրդավարական ընտրությունների ինստիտուտ՝ ինչպես օրենսդրական նախադրյալների, ինստիտուցիոնալ որոշումների, այնպես էլ գործընթացի կազմակերպման և իրացման առումներով<sup>32</sup>:

Վերը նշվածից պարզ է դառնում, որ ընտրական վեճերի առաջացման հիմնական պատճառը՝ իրավախախտումը, և դա պայմանավորող գործոնները սերտորեն փոխկապակցված են, իսկ դրանք լիովին վերացնելն ահնար է, քանի որ նույնիսկ դասական ժողովրդավարական երկրներում անցկացվող ընտրությունների ընթացքում տարբեր քաղաքական ուժերի շահերը բախվում են, թույլ են տրվում ընտրախախտումներ և ծագում են ընտրական վեճեր: Այդ իսկ պատճառով, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը պետք է ուղղված լինի ոչ միայն ընտրական վեճերի առաջացման պատճառների հնարավորինս վերացմանը, այլև դրանք՝ օրենքի տարին համապատասխան քննելու արդյունավետ ընթացակարգերի մշակմանը:

Վերը նշված նյութի ամփոփվելու ծուծունը թույլ է տալիս հանգել այն եզրակացության, որ ընտրական վեճերի առաջացման պատճառների և դրանց նպաստող գործոնների հաղթահարմանն ուղղված գործընթացները պետք է իրականացվեն միաժամանակ երեք ուղղությամբ.

1) օրենսդրության նպատակասլաց կատարելագործում, որը պետք է իրականացվի օրենսդրական նախագծերի վերաբերյալ հասարակական լսումներ անցկացնելու, մշտադիտարկումներ կազմակերպելու, ինչպես նաև ընտրությունների անցկացման և ընտրական վեճերի լուծման արտասահմանյան լավագույն փորձի

---

<sup>32</sup> Ст'ю Арутюнян Г. Г. Вступительное слово на 12 Ереванской международной конференции <<Роль конституционных судов в обеспечении демократических выборов>> (5-7 октября 2006г.). Ер. 2006, т 2 5:

ուսումնասիրման ու Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգ համապատասխանեցված ներդրման միջոցով,

2) ընտրական գործընթացի մասնակիցների իրավագիտակցության, իրավական մշակույթի և սոցիալական պայմանների բարելավում, ինչը նշանակում է, որ քաղաքակիրթ, ազատ և արդար ընտրությունների անցկացման կարևոր երաշխիք է ինչպես իշխանությունների ցանկությունը, այնպես էլ պետության յուրաքանչյուր քաղաքացու գիտակցումն այն բանի, որ իր սեփական բարեկեցությունն ու ազատությունները մեծապես կախված է իրենից և պետության ու հասարակության զարգացման աստիճանից, որի բարձրացմանը կարող է նպաստել անձնապես, ընտրությունների մասնակցելով և իր ընտրական իրավունքը պաշտպանելով<sup>33</sup>: Չի կարելի սպասել, թե երբ ժողովուրդը <<կհասունանա>> իր ընտրական կամքն ազատ արտահայտելու համար, այլ պետք է նրան հնարավորությունը նձեռել սովորել, ձեռք բերել փորձ, անմիջապես իրականացնել իր ընտրական իրավունքները գործնականում: Նման արդյունք կարելի է ակնկալել միայն հասարակության իրավական դաստիարակության ընդարձակ ծրագրերի իրականացման, հասարակական կարծիքի ձևավորման, ժողովրդավարական օրենքների ընդունման և այլ միջոցառումների իրականացման ճանապարհով, ինչը կնպաստի հանրապետության ընտրական գվածի ազգային մտածողության և ընդհանուրի բարեկեցության խնդրի լուծմանն աջակցելու կամքի ձևավորմանը<sup>34</sup>: Իսկ այս ամենը հնարավոր է արդյունավետ իրագործել սոցիալական բավարար պայմաններում ապրող հասարակության հետ:

<sup>33</sup> Տե՛ս Խաչատրյան Լ. <<Ընտրական իրավունքն ու ընտրակեղծիքները>>. Հեղինակային հրատ., Երևան. 2010. Էջ 140:

<sup>34</sup> Տե՛ս Այվազյան Ն. Ա., Օհանյան Մ. Ս. <<Ազատ ընտրություններ և հանրաքվե կազմակերպելու հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում>>, Երևանի համալսարանի հրատ., Երևան. 2010, Էջ 80:

3) քաղաքական կամքի դրսևորման ազատություն:

Այս գործընթացները բարենպաստ արդյունք կունենան այն պարագայում, եթե իրականացվեն միաժամանակ, քանի որ ուսումնասիրվող ոլորտում վերը նշված գործընթացներից յուրաքանչյուրն առանցքային նշանակություն ունի, և նույնիսկ դրանցից մեկի թերացման պարագայում մյուսները սպասվելիք դրական արդյունքը չեն կարող ապահովել: Հատկապես, որ ընտրությունների կազմակերպման և անցկացման փորձը ցույց է տալիս, որ դրանց վրաեական ազդեցություն են գործում պետության սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակը, ազգային հոգեբանությունը, մտածելակերպը և այլ հանգամանքներ<sup>35</sup>: Այլ կերպ ասած, ընտրական գործընթացների արդյունավետության ապահովումն ընդհանրապես, և ընտրական վեճերի նվազեցումը մասնավորապես պայմանավորված է գործող օրենսդրությամբ, հասարակության իրավագիտակցության մակարդակով և քաղաքական կամքի դրսևորման ազատության աստիճանով:

### **§3. Ընտրական վեճերի դասակարգումը**

Սույն աշխատության շրջանակներում ընտրական վեճերի դասակարգման խնդրի ուսումնասիրությունն ինքնանպատակ չէ և նպաստում է ընտրական վեճերի համալիր հետազոտության իրականացմանը: Այն հնարավորություն է տալիս համակողմանի ուսումնասիրել ընտրական վեճի՝ որպես ընտրական իրավունքի իրավապաշտպան և իրավավերականգնող ինստիտուտի էությունը, նպաստում է դրանց քննության և լուծման ընթացակարգային առանձնահատկությունների բացահայտմանն ու օժանդակում համարժեք իրավական լուծումների մշակմանը: Ըստ էության,

<sup>35</sup> Տե՛ս Եղյան Ռ. Հ. <<Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգը>> Ուսումնական ձեռնարկ, Եր. Երևանի պետական համալս. Հրատ., . 2000. Էջ 6:

ընտրական վեճի ինստիտուտը մշտապես զարգացող մի ամբողջական համակարգ է, և դասակարգման հիմքով դրա համալիր վերլուծությունն ու առանձին տարրերի ուսումնասիրությունը կարող է բացահայտել այն ուղիները, որոնցով կարող են ընթանալ այդ ուղղությամբ կատարվող բարեփոխումները: Այն անհրաժեշտ է ընտրական վեճը որպես միջճյուղային ինստիտուտ համակողմանի ներկայացնելու, դրա էության պարզաբանման, բնորոշ գծերի առանձնացման և զարգացման միտումները կանխորոշելու համար: Այդ իսկ պատճառով հարկ ենք համարում ուսումնասիրել ընտրական վեճերի դասակարգման վերաբերյալ տեսակետները և փորձել դրանց հիման վրա առաջադրել նոր մոտեցումներ, որոնք կբխեն ընտրական համակարգի բարեփոխման պահանջներից:

Իրավաբանական գրականության մեջ գոյություն ունեն ընտրական վեճերի բազմազան դասակարգումներ, որոնց համար հիմք են հանդիսանում ընտրական վեճերի լուծման կարգը, ընտրական գործընթացի փուլը, անցկացվող ընտրությունների մակարդակը, սուբյեկտների շրջանակը, խախտված իրավունքների բնույթը և այլն:

Այսպես, բովանդակությունից ելնելով, առանձնացվում են այնպիսի ընտրական վեճեր, որոնք կապված են հետևյալ գործոնների հետ՝ ա) ընտրությունների նշանակումը, բ) ընտրողների գրանցումը, գ) ընտրատարածքների և ընտրատեղամասերի ձևավորումը, դ) ընտրական հանձնաժողովների ձևավորումը, ե) թեկնածուների առաջադրումն ու գրանցումը, զ) նախընտրական քարոզչության անցկացումը, է) ընտրությունների և թեկնածուների ընտրարշավի ֆինանսավորումը, ը) քվեարկության կազմակերպումը և թ) ընտրությունների արդյունքների ամփոփումը<sup>36</sup>:

<sup>36</sup> Ст'и Князев С. Д. Избирательные споры/ Известия ВУЗ-ов. Правоведение. 2001. N 3. էջեր 53-69:



Նմանատիպ դասակարգում է ներկայացնում Ե.Պ. Իշչենկոն, սակայն վերջինս, որպես իր կողմից առաջադրած դասակարգման հիմք է համարում վեճի առարկան: Այսպես, ընտրական վեճի առարկա կարող է լինել՝ ա) ընտրությունների նշանակումը, բ) ընտրատարածքների և ընտրատեղամասերի ձևավորումը, գ) ընտրողների ցուցակների կազմումը, դ) ընտրական հանձնաժողովների ձևավորումը և կազմը, ե) քաղաքական կուսակցությունների, որպես ընտրական միավորումներ ընտրություններին մասնակցելու իրավունքը, զ) որպես պատգամավոր թեկնածուների առաջադրումները և դրանց կողմից ներկայացվող տեղեկությունները, է) ստորագրահավաքը և ընտրական գրավը՝ ի պաշտպանություն թեկնածուի կամ թեկնածուների ցուցակի, ը) գրանցման մերժումը, թ) զանգվածային լրատվամիջոցների հնարավորությունների չարաչափումը, ժ) ծառայողական կարգավիճակի չարաչափումը, ժա) «կեղտոտ» ընտրական հնարքների կիրառումը, ժբ) նախընտրական քարոզարշավի իրականացնելու կանոնների խախտումը, ժգ) ընտրությունների ֆինանսավորման կարգի խախտումը, ժդ) քվեարկության օրվա փոփոխությունը, ժե) քվեարկության կարգի խախտումը, ժզ) ձայների հաշվարկման կարգի խախտումը, ժե) ընտրությունների արդյունքների սահմանումը, ժը) ընտրությունների արդյունքների հրապարակումը<sup>37</sup>:

Նույնաբնույթ մեկ այլ դասակարգմամբ էլ ընտրական վեճերն առանձնացվում են՝ ելնելով ընտրական գործընթացում դրանց առաջացման փուլից. ա) ընտրատարածքների ձևավորումը, բ) ընտրողների ցուցակների կազմումը, գ) թեկնածուների առաջադրումը և գրանցումը, դ) նախընտրական քարոզարշավի

<sup>37</sup> Ст'и Избирательное право и избирательный процесс в Российской Федерации; / Под ред. А.А. Вешнякова.- М., 2003. Էջեր 490-517:

անցկացու մը, ե) քվեարկութեան անցկացու մը և ձայների հաշվու մը և  
զ) քվեարկութեան արդյունքների ամփոփումը<sup>38</sup>:

Վերը թվարկված դասակարգումներից յուրաքանչյուրն ունի  
հստակեցման և ճշգրտման կարիք, հատկապես, դասակարգման հիմքի  
հետ կապված: Այսպես, Ս.Դ. Կնյազևի կողմից ներկայացված  
դասակարգումը բավականին հաջողված է և ներառում է ընտրական  
գործընթացի ողջ ընթացքը, սակայն վերջինս որպես դասակարգման  
հիմք է ընդունում ընտրական վեճի բովանդակությունը, իսկ դրա՝  
որպես իրավահարաբերություն բովանդակությունը կազմում են դրա  
մասնակիցների սուբյեկտիվ իրավունքներն ու  
պարտականությունները, մինչդեռ՝ ակնհայտ է, որ տվյալ  
դասակարգման շրջանակներում չեն քննարկվում ընտրական վեճի  
մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, այլ  
պարզապես թվարկվում են ընտրական գործընթացի մաս կազմող  
փուլերը, որոնց ընթացքում առաջանում են ընտրական վեճերը:  
Յետևաբար, ճիշտ կլիներ Ս.Դ. Կնյազևի դասակարգման պարագայում  
հիմք ընդունել ոչ թե ընտրական վեճերի բովանդակությունը, այլ  
ընտրական գործընթացի փուլերը:

Ինչ վերաբերում է Ե.Պ. Իշչենկոյի դասակարգմանը, ապա այն  
բավականին լայն ու մանրամասն է, և առաջին հայացքից թվում է, թե  
ավելի կոնկրետ դասակարգում է ներկայացնում: Սակայն, կարծում  
ենք, որ այս դասակարգման մեջ պետք է փոփոխություն ենթարկել ոչ  
միայն դասակարգման հիմքը, այլ նաև առանձնացված ընտրական  
վեճերի տարատեսակները: Մասնավորապես, դասակարգման մեջ որպես  
ընտրական վեճերի առանձին տարատեսակ է դիտարկվում  
ծառայողական կարգավիճակի ոչ իրավաչափ կիրառումը, ինչը տվյալ  
դասակարգման մեջ տեղին չէ, քանի որ ծառայողական կարգավիճակի  
ոչ իրավաչափ կիրառում կարող է դրսևորվել և ցուցակները

<sup>38</sup> Ст'и Треушников М. К. Судебная защита избирательных прав в России// Вестник Московского университета. Серия 11. Право.-2000. N 1.- էջ 14:

կազմելիս, և գրանցումը մերժելիս, և ձայները հաշվարկելիս, որոնք նույն դասակարգման մեջ թվարկված են որպես ընտրական վեճերի առանձին տեսակներ:

Որպես ընտրական վեճի տեսակ է առանձնացվում «խարդախ» ընտրական հնարքների կիրառումը, սակայն, հարկ է նշել, որ վերը նշված արտահայտությունը պատշաճ իրավաբանական եզրույթ է<sup>39</sup>, և սվյալ համատեքստում դրակիրառումը տեղին է:

Այնուամենայնիվ, փորձենք վերլուծել, թե որքանով այն կարող է ընտրական վեճի տարատեսակ հանդիսանալ: Այսպես, ընտրությունների ընթացքում հայտնի է «կրկնակ»-ի ընտրական հնարքների կիրառումը, երբ որպես թեկնածու է գրանցվում մեկ այլ թեկնածուի հետ նույն անուն-ազգանուն ունեցող անձը՝ ընտրողներին շփոթության մեջ գցելու համար: Սա, իհարկե, բարոյականության տեսակետից կարելի է համարել «խարդախ» հնարք, սակայն այն հակաիրավական է:

Շտկման կարիք ունի նաև «որպես պատգամավորի թեկնածու առաջադրվելը և նրա կողմից ներկայացվող տեղեկությունները» ձևակերպումը, քանի որ թեկնածուներն առաջադրվում են ոչ միայն որպես պատգամավոր, այլ նաև որպես նախագահ և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ: Ակնհայտ է, որ անհամաձայնության տեղիք է տալիս զուտ կիրառված «պատգամավոր» եզրույթը, առանց որի վերը նշված դրույթը առավել ասես կբխի հեղինակի կողմից ներկայացվող տեսակետից:

Կարծում ենք, որ այս դասակարգման մեջ պետք է փոփոխության ենթարկել դասակարգման հիմքը, քանի որ այստեղ հիմնականում թվարկվում են ընտրությունների առանձին փուլերը, որոնց

---

<sup>39</sup> Տե՛ս Захаров О. Ю., Порфирьев А. И. Нарушения избирательных прав и «негативные» избирательные технологии в Московской и Брянской областях: анализ, пути противодействия // Конституционное и муниципальное право.-2002.- N3.- էջեր 22-26:

ընթացքում կարող են առաջանալ ընտրական վեճեր, բայց ոչ ընտրական վեճի առարկան, որը և հիմք է ընդունել հեղինակը:

Մ.Կ. Տրեուշնիկովի դասակարգման համար նույնպես հիմք է հանդիսանում ընտրությունների անցկացման փուլերը, սակայն այստեղ բաց է թողնված ընտրությունների նշանակման փուլը, ինչը, թերևս, կամբողջացնելու վերը նշված դասակարգումը:

Ըստ էության, վերը նշված երեք դասակարգումներն էլ նույնաբնույթ են, այսինքն, ընտրական վեճերի դասակարգումն իրականացված է տարբեր անվանումներով, սակայն նույն հարթության վրա նույն մոտեցմամբ:

Մասնագիտական գրականության մեջ կան նաև դասակարգման այլ տարատեսակներ, որոնցում ավելի հստակ է արտացոլվում իրավակիրառ պրակտիկան՝ իր առանձնահատկություններով: Նմանատիպ դասակարգման համար հիմք է հանդիսանում ընտրական վեճերի լուծման կարգը, ըստ որի առանձնացվում են. ա) վարչական կարգով լուծվող ընտրական վեճեր և բ) դատական կարգով լուծվող ընտրական վեճեր<sup>40</sup>:

Այս դասակարգման համաձայն, ընտրական վեճերը լուծվում են վարչական կամ դատական կարգով, սակայն ՀՀ գործող օրենսդրությունից ելնելով, նպատակահարմար է վերը նշված դասակարգումը վերափոխել .

- 1) վարչական-դատական կարգով լուծվող ընտրական վեճեր,
- 2) դատական կարգով լուծվող ընտրական վեճեր:

Առաջին խմբի մեջ ներառվում են այն ընտրական վեճերը, որոնք կարող են քննվել ինչպես վարչական, այնպես էլ դատական կարգով:

Ընտր. օր-ի 46-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն, տեղամասային ընտրական հանձնաժողովների որոշումները և

---

<sup>40</sup> Ст'ю Ищенко Е. П., Ищенко А. Е. Избирательные споры: возникновение, разрешение, предупреждение.- М.,2002.- էջ 21:

ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները համապատասխանաբար կարող են բողոքարկվել վերադաս ընտրական հանձնաժողովներ՝ որոշ բացառություններով, որոնց կանդիդատներն են ավելին: Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր ոք ՀՀ Սահմանադրության, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող մի շարք միջազգային իրավական փաստաթղթերի համաձայն, իրավունք ունի միևնույն պահանջի վերաբերյալ համապատասխան բողոք ներկայացնել դատական ատյան՝ իր խախտված իրավունքի վերականգնման խնդրով: Սովորաբար է այն մասին, որ ՀՀ օրենսդրության համաձայն կան ընտրական վեճեր, որոնք կարող են լուծվել և վարչական, և դատական կարգով:

Այդպիսի իրավիճակ է արտացոլված Ընտր. օր-ի 12-րդ հոդվածով, որի համաձայն, ընտրողների ցուցակներում անճշտությունները վերացնելու վերաբերյալ պետական կառավարման լիազոր մարմնի որոշումը սուբյեկտը կարող է բողոքարկել վարչական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով: Տվյալ դեպքում միևնույն հոդվածը կարգավորում է ինչպես վարչական, այնպես էլ դատական կարգով՝ ընտրական վեճի լուծման կարգը: Սակայն, կան նաև ընտրական վեճեր, որոնց քննությունն ու լուծումն իրականացվում է բացառապես դատական կարգով, որոնք էլ ընդգրկված են դասակարգման երկրորդ խմբում: Այսպես, Ընտր. օր-ի 46-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի համաձայն՝ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել ՀՀ սահմանադրական դատարան: Համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների ընտրությունների արդյունքների վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել վարչական դատարան: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել վարչական դատարան,

իսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ համապետական ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել ՀՀ սահմանադրական դատարան:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ օրենսդրությունը ոչ միայն հստակ սահմանում է այն վեճերը, որոնք բացառապես լուծվում են դատական կարգով, այլև սահմանում է, թե որ դատական ատյանը պետք է քննի համապատասխան վեճը՝ վարչական դատարանը, թե սահմանադրական դատարանը:

Այսպիսով, ընտրական օրենսդրությունը որոշակիացնում է նաև տեսության մեջ տարակարծությունների առաջացնող հարցադրումները, թե արդյոք ՀՀ սահմանադրական դատարանն ընտրական վեճեր լուծող դատական ատյանների կազմում պետք է ներառել, արդյոք այն անմիջականորեն ընտրական վեճ լուծող դատական մարմին է հանդիսանում<sup>41</sup>: Վերը նշված ձևակերպումը հաստատում է ՀՀ սահմանադրական դատարանի՝ անմիջականորեն ընտրական վեճեր լուծող մարմին հանդիսանալու փաստը՝ ՀՀ Սահմանադրություն և օրենքներով հստակ սահմանելով այն ընտրական վեճերի շրջանակը, որոնց անմիջական լուծումն իրականացվում է սահմանադրական դատարանի կողմից. այն է՝ Հանրապետության Նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճեր (ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1 կետ):

Ըստ էության, դրանք այն ընտրական վեճերն են, որոնք վերաբերում են պետության համար էական նշանակություն ունեցող հարցերին, և որոնցից կախված է ողջ ընտրական գործընթացի արդյունքը: Օրինակ, ՀՀ սահմանադրական

---

<sup>41</sup> Տե՛ս Князев С. Д. Избирательные споры/ Известия ВУЗ-ов. Правоведение. 2001.№ 3. էջ. 65; Ищенко Е. П., Ищенко А. Е. Избирательные споры: возникновение, разрешение, предупреждение.-М.,2002.-էջեր 121-126; Избирательное право и избирательный процесс в Российской Федерации. / Отв. Ред. А. В. Иванченко-М., 1999.- էջեր 431-435:

դատարանի 2013 թվականի մարտի 14-ի ՍԴՈ-1077 որոշմամբ<sup>42</sup> ուժի մեջ թողնվեց ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 25-ի «Հայաստանի Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» թիվ 62-Ա որոշումը, որն էական նշանակություն ունեցավ Հայաստանի Հանրապետության պետական համակարգի հետագա զարգացման ուղիների կանխորոշման գործում:

Վերը նշված դասակարգման էությունը կայանում է նրանում, որ ընտրողին հիմնականում տրվում է խախտված իրավունքի պաշտպանության եղանակի ընտրության հնարավորություն: Կատեսակետ, որի համաձայն՝ տվյալ համակարգի առկայության պարագայում ընտրողի համար ընտրական հանձնաժողով դիմելը կորցնում է իմաստը, քանի որ վերջինս ի սկզբանե դատարան դիմելու հնարավորություն ունի<sup>43</sup>: Սակայն, կարծում ենք, վիճարկման վարչական և դատական կարգերը կոչված են մեկը մյուսին լրացնելու, և դրանցից որևէ մեկին առավելություն տալը հիմնավորված չէ, հատկապես, որ վերը նշված արակտիկան արդյունավետ գործում է բազմաթիվ ժողովրդավարական երկրներում: Ընդ որում, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի 13-րդ հոդվածը նույնպես ամրագրել է իրավունքների պաշտպանության արտադատական կարգը, ուստի դրա օրենսդրական ամրագրումն անխուսափելի է: Ավելին, առանձին դեպքերում վարչական առյանները կարող են նույնիսկ առավել օպերատիվ, արհեստավարժ և մատչելի կերպով ապահովել մարդու և քաղաքացու ընտրական իրավունքների պաշտպանությունը, քան դատական առյանները: Դա

<sup>42</sup> Տե՛ս «ՀՀ Նախագահի թեկնածուներ Րաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի և Անդրիաս Ղուկասյանի դիմումների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 25-ի՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» թիվ 62-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ գործով ՀՀ սահմանադրական դատարանի 14.03.2013թ. ՍԴՈ-1077 որոշումը:

<sup>43</sup> Տե՛ս Постников А. Е., Избирательное законодательство: необходимо четкое разделение полномочий между различными уровнями власти при проведении выборов // Журнал российского права-2002.-N 5, էջ 25:

այլ հարց է, որ այսօր Հայաստանի Հանրապետության ունեցած վեճերի՝ արտադատական կարգով լուծման ինստիտուտը գտնվում է կայացման փուլում և դեռևս հասարակության վստահության թավականաչափ չի վայելում, հակառակ դեպքում այն կարող էր լինել նախընտրելի այլ ընտրանք դառնալ դատական ատյաններին, հատկապես, որ դատական ատյաններն աշխատում են խիստ ծանրաբեռնվածության պայմաններում:

Հաջորդ դասակարգման հիմքը հանդիսանում է անցկացվող ընտրության ժամանակ, ինչի հիմքով և առաջադրվում են հետևյալ տեսակները՝ ա) համապետական ընտրության ժամանակ կապված վեճեր, որոնք առաջանում են ՀՀ Նախագահի և Ազգային ժողովի ընտրության ընթացքում, և բ) տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամանակ կապված վեճեր, որոնք առաջանում են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամանակ:

Այս հիմքով դասակարգվող ընտրական վեճերը միմյանցից տարբերվում են ոչ միայն իրավական կարգավորմամբ, այլև տարածքային առանձնահատկություններով: Եթե համապետական ընտրության ժամանակ ընտրության անցկացման տարածքը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը, ապա տեղական ինքնակառավարման մարմինների դեպքում ընտրության անցկացման տարածք է համարվում տվյալ համայնքի վարչական տարածքը, ինչը սոցիալական, մշակութային առանձնահատկություններից ելնելով, իր ուրույն հետքն է թողնում ողջ ընտրական գործընթացի, այդ թվում ընտրական վեճերի բնույթի վրա<sup>44</sup>: Համապետական ընտրության ժամանակ բնակչության քաղաքական ակտիվությունն առավել նկատելի է՝ և

<sup>44</sup> St' u Electoral Justice: The International IDEA Handbook. Jesus Orozco Henriquez. 2010. էջ 57:



ընտրություններին մասնակցելու, և ընտրական իրավունքների պաշտպանության առումով, իսկ առաջացող ընտրական վեճերն առավել ընդգրկուն, հիմնավորված, երբեմն էլ նույնիսկ մանրամասնորեն պլանավորված են լինում: Բացի այդ, ընտրական գործընթացը լինում է միջազգային հանրության ուշադրության կենտրոնում, ինչն ավելի էլայն հնարավորություններ է ընձեռում ընտրական գործընթացի մասնակիցներին՝ իրենց ընտրական իրավունքների պաշտպանությունն արդյունավետ իրականացնելու գործում:

Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին ընթացքում առաջացող ընտրական վեճերին, ապա սրանց բնույթի վրա ազդեցություն է գործում, հատկապես, տվյալ տարածաշրջանի բնակչության քաղաքական և իրավական մշակույթը: Կարևոր է այն հանգամանքը, թե ընտրություններն անցկացվում են քաղաքային, թե գյուղական համայնքներում, քանի որ, հատկապես, վերջիններում բնակչության քաղաքական ակտիվությունն ու իրավագիտակցությունը գտնվում են բավականին ցածր մակարդակի վրա, և վերջիններս հակված չեն իրենց իրավունքներն ընտրական վեճերի լուծման միջոցով պաշտպանելուն, այդ թվում՝ «ավելորդ քաջքուկներից» խուսափելու համար, ինչն էլ նպաստավոր հող է ստեղծում ընտրակեղծիքներ նախաձեռնելու և ընտրությունների արդյունքները կանխորոշելու համար: Յետևաբար, այդ հանգամանքը պետք է հարկադրի պետությանը, որ նմանատիպ տարածաշրջաններում հասարակության իրավագիտակցության, քաղաքական ակտիվության բարձրացման, իրավունքների պաշտպանության ապահովման ուղղությամբ պետական նպատակասլաց քաղաքականություն իրականացնի, որպեսզի վերջիններս հավատ տածեն պետական մարմինների գործունեության նկատմամբ և անհրաժեշտության դեպքում դիմեն դրանց օգնությանը՝ իրենց իրավունքների պաշտպանությունն իրականացնելու նկատառումներից ելնելով:

Իրավաբանական գրականության մեջ առաջարկվում է ընտրական վեճերի մեկ այլ դասակարգում, որի հիմքում ընկած է խախտված ընտրական իրավունքների բնույթը, ըստ որի առանձնացվում են. ա) վեճեր, որոնք ուղղված են ակտիվ ընտրական իրավունքի պաշտպանությանը և բ) վեճեր, որոնք ուղղված են պասիվ ընտրական իրավունքի պաշտպանությանը<sup>45</sup>:

Այս դասակարգման գիտագործնական հետաքրքրությունը կայանում է նրանում, որ կան ընտրական վեճեր, որոնք բովանդակության վերլուծության հի կոնկրետացվում, թե որ ընտրական իրավունքի (ակտիվ, թե պասիվ ընտրական իրավունքի) պաշտպանությանն է ուղղված, օրինակ, ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելուն ուղղված ընտրական վեճերը և այլ: Սակայն կան ընտրական վեճեր, որոնք կոնկրետ ուղղված են ակտիվ կամ պասիվ ընտրական իրավունքի պաշտպանությանը: Մասնավորապես, ընտրողների ցուցակներում անճշտությունները վերացնելու կապակցությամբ առաջացող վեճերը հանդիսանում են ակտիվ ընտրական իրավունքի պաշտպանությանն ուղղված վեճեր, իսկ թեկնածուի գրանցումը մերժելու վերաբերյալ որոշումը բողոքարկելու կապակցությամբ առաջացող վեճերը հանդիսանում են պասիվ ընտրական իրավունքի պաշտպանությանն ուղղված ընտրական վեճեր: Ուստի, իլրումն վերը նշված տեսակետի, կարելի է փաստել, որ բացի ակտիվ և պասիվ ընտրական իրավունքներից, ընտրական գործընթացի մասնակիցներն ունեն նաև այլ իրավունքներ, որոնք նույնպես ենթակա են պաշտպանության, և որոնք չի կարելի համարել զուտ ակտիվ կամ պասիվ, օրինակ, որպես վստահված անձ հանդես գալու իրավունքը և այլն: Յետևաբար, անհրաժեշտ է վերը նշված դասակարգումը լրացնել

---

<sup>45</sup> St' u Izбирательное право и избирательный процесс в Российской Федерации; / Под ред. А.А. Вешнякова.- М., 2003. էջ 496:

«վեճեր, որոնք ուղղված են այլ ընտրական իրավունքների պաշտպանությանը» ձևակերպմամբ:

Ընտրական վեճերը կարելի է նաև դասակարգել՝ հիմք ընդունելով պաշտպանության կողմին, մասնավորապես, ա) ընտրական վեճեր, որոնք վերաբերում են ընտրական գործընթացի կոնկրետ մասնակցի իրավունքի պաշտպանությանը, օրինակ, ընտրողի, թեկնածուի, դիտորդի, վստահված անձի, ընտրական հանձնաժողովի և այլն, և բ) ընտրական վեճեր, որոնք վերաբերում են ընտրական գործընթացի անորոշ քանակով մասնակիցների իրավունքների պաշտպանությանը:

Ընտրական օրենսդրությամբ քննվող և լուծվող բոլոր վեճերը կարելի է մատնանշել որպես տվյալ դասակարգման առաջին խմբի մեջ մտնող ընտրական վեճեր, քանի որ Ընտր. օր-ի 46-րդ հոդվածի համաձայն, ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունը (անգործությունը) կարող է բողոքարկել միայն այն սուբյեկտը, որի սուբյեկտիվ ընտրական իրավունքը խախտվել կամ կարող է խախտվել, հետևաբար, ընտրական վեճը լուծող մարմնի կայացրած որոշումը տարածվում է միայն բողոքարկող սուբյեկտի վրա:

Ինչ վերաբերում է դասակարգման երկրորդ խմբին, ապասրանք, հիմնականում, վերաբերում են ընտրական հանձնաժողովների այնպիսի որոշումների վիճարկմանը, որոնք խախտում են կամ կարող են խախտել ընտրական գործընթացի անորոշ քանակով մասնակիցների իրավունքներ<sup>46</sup>: Ընտրական վեճի այս տեսակն իր օրենսդրական ամրագրումը չի ստացել հայրենական ընտրական օրենսդրությամբ, սակայն այս ինստիտուտը, որը կոչվում է խմբային հայցի ինստիտուտ (ոչ միայն ընտրական վեճերը լուծելու, այլև առհասարակ անձի իրավունքների պաշտպանության առումով),

<sup>46</sup> Ст'ю Степанов И. Защита избирательных прав неопределенного круга лиц // Законность. 2007. N 7. Էջեր 46-48

լայն տարածում ունի, հատկապես, անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրներում, մասնավորապես ԱՄՆ-ում (class action)<sup>47</sup>՝ որպես կոլեկտիվ իրավունքների պաշտպանության գործուն միջոց :

Իրավաբանական գրականության մեջ, որպես այդպիսին, խմբային հայցի բնորոշման վերաբերյալ առկա են բազմաթիվ սահմանումներ, որոնցից յուրաքանչյուրն էլ վիճահարույց է և բազմաթիվ քննադատությունների է ենթարկվել : Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ կարելի է բնութագրել, որ խմբային հայցը հնարավորություն է տալիս ընդհանուր շահ հետապնդող խմբի անդամին կամ մի քանի անդամների հայց ներկայացնել դատարան և պաշտպանել խմբի մյուս անդամների շահերը՝ առանց վերջիններիս՝ դատավարությանը մասնակցելու :

Ըստ էության, իրավունքների պաշտպանության նմանատիպ ընթացակարգ իրավունքի տեսությանը հայտնի է դեռևս հռոմեական իրավունքից : Մասնավորապես, Յուստինիանոսի Դիգեստներում դեռևս նշվել է հանրամատչելի հայցերի (actiones populares) մասին, որոնք քաղաքացուն հնարավորություն էին տալիս հանդես գալու և հայց ներկայացնելու ի շահ հասարակական բարօրության<sup>48</sup> :

Ինչ վերաբերում է խմբային հայցին, ապա, որպես այդպիսին, այն շրջանառության մեջ է դրվել ԱՄՆ-ում՝ 1938 թ-ից : Կիրառման ընթացքում բազում փոփոխությունների է ենթարկվել, և դրանց արդյունքում, որպես կոլեկտիվ իրավունքների պաշտպանության միջոց, հիմնականում կիրառվել է քաղաքացիական դատավարության շրջանակներում : Ընդհանուր իրավունքի երկրներից այն կիրառում

<sup>47</sup>Տե՛ս ԱՄՆ-ում խմբային հայցերը քննվում են հիմնականում հետևյալ ակտերի համաձայն . Class Action Fairness. Act of 2005// [http://www.mcglinchey.com/images.pdf.int1\\_D9\\_PDF.Federal Rules of Civil Procedure. Rule 23//http://www.law.cornell.edu/rules/frcp/ Rule 23 htm](http://www.mcglinchey.com/images.pdf.int1_D9_PDF.Federal%20Rules%20of%20Civil%20Procedure.%20Rule%2023//http://www.law.cornell.edu/rules/frcp/Rule%2023.htm)

<sup>48</sup>Տե՛ս Гримм Д. Д. Лекции по догме римского права/ под ред. и с пред. Томсинова В. А., Зерцало, М., 2003, էջ 194:

Ե ստացել նաև Մեծ Բրիտանիայում, ավելի ուշ՝ Ավստրալիայում 1991թ-ից<sup>49</sup>, Կանադայի որոշ նահանգներում 1992թ-ից<sup>50</sup> և այլն:

Ինչ վերաբերում է մայրցամաքային իրավունքի երկրներում խմբային հայցի, որպես անգլոսաքսոնական իրավական համակարգին բնորոշ ինստիտուտի կիրառմանը, ապա դա վկայում է անգլոսաքսոնական և մայրցամաքային իրավական համակարգերի մերձեցման և փոխազդեցության մասին: Այնուամենայնիվ, խմբային հայցի ներմուծումը մայրցամաքային իրավական համակարգի երկրներ շարունակում է վիճելի բնույթ կրել, քանի որ մասնագետների մեծ մասի պնդմամբ այս ինստիտուտը հակասում է մայրցամաքային իրավունքի հիմնարար սկզբունքներին: Չնայած դրան, խմբային հայցը կիրառում ստացավ նաև մայրցամաքային իրավունքի երկրներում, նախ, Նիդերլանդներում՝ 1994թ-ից, Պորտուգալիայում՝ 1995-ից, Իսպանիայում՝ 2001թ-ից, ապա սկանդինավյան երկրներում<sup>51</sup>: Եվրոպական մյուս երկրները դեռևս շարունակում էին քննարկումները խմբային հայցի կիրառման վերաբերյալ, այնուամենայնիվ, կոլեկտիվ իրավունքների պաշտպանության և պահովող ընթացակարգերի կատարելագործման անհրաժեշտ էր, հետևաբար որոշ երկրներ (օրինակ, Ֆրանսիա, Գերմանիա և այլն) յուրօրինակ մոտեցում դրսևորեցին այս հարցի վերաբերյալ և խմբային հայցն ամրագրեցին ոչ թե ողջ ծավալով, այլ կերպասած՝ անգլոսաքսոնական մոդելը, այլ կոնկրետ երկրում ձևավորված իրավական ավանդույթների հաշվի առնմամբ՝ կոնկրետ

---

<sup>49</sup> St' u Clark S. S., Harris C. Multi-Plaintiff Litigation in Australia: A comparative Perspective // Duke Journal of Comparative and International Law. 2001. N 11, էջ 291:

<sup>50</sup> St' u Walker J. Crossborder Class Actions: a view from across the border // Michigan State Law Review. 2004. N 3, էջ 757-758:

<sup>51</sup> Hodges C. Europeanisation of Civil Justice. Trends and Issues // Civil Justice Quarterly, 2006, January, Vol. 26, էջ 118:

ոլորտներում, օրինակ, սպառողների իրավունքների պաշտպանության, շրջակա միջավայրի պաշտպանության և այլն<sup>52</sup>:

Ինչ վերաբերում է Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներին, ապա այստեղ նույնպես խմբային հայցի վերաբերյալ միասնական մոտեցում չկա: Մի խումբն ընդօրինակել է անգլոսաքսոնական մոդելը (Լիտվա), մյուսները՝ մայրցամաքային (Բելոռուս, Ուկրաինա), իսկ երրորդներն առհասարակ օրենսդրական ամրագրում չեն տվել խմբային հայցին (Չայաստան):

Չետաքրքիր է, որ խմբային հայցի կիրառումն իրագործվում է նաև միջպետական մակարդակով: Մասնավորապես, Եվրոպական Միության շրջանակներում հրապարակվել է Դիրեկտիվ սպառողների իրավունքների պաշտպանության վերաբերյալ (The European Directive on Injunctions for the Protection of consumer's Interests), որը խմբային հայց ներկայացնելու իրավունք է նախատեսում:

Այսպիսով, չնայած խմբային հայցի՝ ինչպես անգլոսաքսոնական, այնպես էլ մայրցամաքային իրավունքի երկրներում ունեցած լայն տարածմանը՝ հատկապես քաղաքացիական արդարադատության ոլորտում, այնուամենայնիվ, խմբային հայցի ինստիտուտի համալիր հետազոտության արդյունքում կարելի է հանգել այն եզրակացության, որ այս ինստիտուտը, ունենալով հանրային բնույթ, բխում է վարչական արդարադատության էությունից, և հատկապես նպատակահարմար է ընտրական վեճերի քննության ընթացքում, քանի որ այս դեպքերում հաճախ պետական մարմնի կայացրած որոշմամբ խախտվում է ոչ թե կոնկրետ քաղաքացու, այլ մի որոշակի ընտրազանգվածի ընտրական իրավունքներ: Այս պարագայում, հատկապես, խմբային հայցը կարող է նպաստել

---

<sup>52</sup> St' u Tarruffo M. Some Remarks on Group Litigation in Comparative Perspective // Duke Journal of Comparative and International Law. 2001. N 11, էջ 406:

քաղաքացիների խախտված ընտրական իրավունքների առավել մատչելի դատական պաշտպանությունը:

Խմբային հայցի կիրառումը նախատեսվում է նաև ՌԴ քաղաքացիական և վարչական դատավարության օրենսդրությամբ, ինչը, նույնպես, միանշանակ չի ընկալվում ռուս իրավագետների կողմից<sup>53</sup>, և որի կապակցությամբ բազմաթիվ հարցադրումներ են արվել: Մասնավորապես, ինչ կարգով պետք է ձևավորել նույնաբնույթ շահերով օժտված անձանց խումբը, հնարավոր է խմբին միանալ, եթե հայցն արդեն իսկ գտնվում է դատաքննության փուլում, և եթե այո, ապա ինչպես պետք է տվյալ դեպքում ընթանա դատաքննությունը և այլն: Ինչպես տեսնում ենք, այս ինստիտուտի կիրառման վերաբերյալ առկա մտավախություններն անհիմն չեն, քանի որ այն իսկապես կարող է առաջ բերել որոշակի խնդիրներ: Սակայն ակնհայտ է, որ այդ խնդիրները հիմնականում ընթացակարգային բնույթ ունեն, ինչը, կարծում ենք, հետևանք է տվյալ ինստիտուտի ոչ բավարար ուսումնասիրվածությամբ: Չետևաբար, վերը նշված նմանաբնույթ դիտարկումների արդյունքում խմբային հայցի ժխտումը նպատակահարմար չէ, քանի որ այն իրապես նախատեսում է հասարակության լայն շերտերի իրավունքների մատչելի և արդյունավետ պաշտպանություն:

Խմբային հայցի, որպես մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանություն ապահովող ինստիտուտի բնորոշ առանձնահատկություններն են, մասնավորապես,

ա) մեկ դատաքննության ընթացքում միաժամանակ քննվում է մի քանի անձանց խախտված իրավունքների վերաբերյալ վեճ,

բ) խմբի բոլոր անձանց իրավունքները կարող է պաշտպանել խմբային հայցը նախաձեռնողը՝ առանց խմբի բոլոր անդամների

<sup>53</sup> См. у. Рихтерман В. Я., Черепанов В. А. Защита прав и законных интересов группы лиц или предложение, от которого нельзя отказаться // Арбитражная практика 2010. N 12. Стр. 32 - 38. Анохин В. С. Коллективные иски в арбитражном процессе: плюсы и минусы. 2010. <http://justicemaker.ru/view-article.php?id=1&art=2020>

ներկայ ության և առանց համապատասխան լիազորագրի (որոշ դեպքերում բավարար է լինում ստորագրությունը),

գ) խմբի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի ցանկացած պահի դուրս գալ խմբից,

դ) խմբի յուրաքանչյուր անդամ իրավասու է ինքնուրույն հանդես գալ հայցով, եթե խմբային հայցը մերժվում է կամ մասնակի է բավարարվում, և եթե վերջինս ունի նոր հիմքեր,

ե) խմբի յուրաքանչյուր անդամ իրավասու է բողոքարկել ու դատական ակտը:

Այս ինստիտուտի կիրառումն արդյունավետ է ոչ միայն քաղաքացիների իրավունքների պաշտպանության, այլ նաև դատարանների աշխատանքային ծանրաբեռնվածության նվազեցման նկատառումով:

Ինչպես արդեն վերը նշվեց, հայրենական իրավական համակարգը չի նախատեսում խմբային հայցի կիրառումն ընդհանրապես, մինչդեռ միջազգային փորձը վկայում է, որ բավականին խոցելի լինելով հանդերձ, այնուամենայնիվ, խմբային հայցը կուղեկոծվի իրավունքների պաշտպանության բավականին արդյունավետ միջոց է: Ուստի, նկատի ունենալով խմբային հայցի առնչությամբ առկասուր տարածայնությունները, և հաշվի առնելով Ֆրանսիայի օրինակը, մեր կողմից առաջարկվում է նախապատվությունը տալ ոչ թե ավանդաբար ձևավորված խմբային հայցին, այլ միայն որոշակի վերապահումներով դրա կիրառման տարբերակին՝ հայրենական իրավական համակարգի առանձնահատկությունների հաշվի առնմամբ: Մանավորապես, նպատակահարմար է խմբային հայցի կիրառումը նախատեսել ընտրական վեճերի քննության ընթացքում, քանի որ այդ դեպքերում հաճախ պետական մարմնի կայացրած որոշմամբ խախտվում է ոչ թե կոնկրետ քաղաքացու, այլ մի որոշակի ընտրական գվածի ընտրական իրավունքներ: Մինչդեռ, ՀՀ ընտրական և վարչական



դատավարության օրենսգրքերի համապատասխան նորմերի համակարգային վերլուծությունը հիմք է տալիս եզրահանգելու, որ ՀՀ քաղաքացուն իրավունք է վերապահված բողոքարկելու ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) բացառապես այն դեպքում, երբ անձը գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր սուբյեկտիվ ընտրական իրավունքը: Մինչդեռ արտասահմանյան որոշ պետություններում գործող իրավակարգավորումների շրջանակներում քաղաքացիներին կամ նրանց խմբերին իրավունք է վերապահված բողոքարկելու նաև քվեարկության արդյունքների առնչությամբ ընդունված որոշումները՝ անկախ իրենց սուբյեկտիվ իրավունքների խախտման հանգամանքից (Յունգարիա, Գերմանիա, Ղազախստան, Լեհաստան, Խորվաթիա և այլն: ) Այս իրավունքի նախատեսումն, ըստ էության, խմբային հայցի կիրառման կոնկրետ դեպք է, և արդարացված է այն հանգամանքով, որ ընտրական իրավունքն օժտված է ոչ միայն սուբյեկտիվ, այլև հանրային նշանակությամբ: Այս կապակցությամբ, հետաքրքրական է նաև Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի հետևյալ իրավական դիրքորոշումը. <<Այն հանգամանքը, որ ազատ ընտրությունները հիմնված են քվեարկության գաղտնիության սկզբունքի վրա, ինքնին, չի կարող խոչընդոտ հանդիսանալ ընտրողների՝ օրենքով պահպանվող շահերի ոլորտի սահմանափակման համար՝ մինչև քվեարկության ավարտն առկա հարաբերություններով: Արդյունքում՝ ընտրական օրենսդրության պահանջների խախտումները, այդ թվում՝ ձայները հաշվելիս, անխուսափելիորեն շոշափում են յուրաքանչյուր ընտրողի սահմանադրական շահը՝ անկախ նրա կոնկրետ կամահայտնությունից, քանզի կարող ենք հանգեցնել ընտրողների իրական կամքի խեղաթյուրմանը և դրանով հանրային իշխանության ընտրովի մարմնի կազմի ձևավորումը՝ ի հեճուկս ժողովրդաիշխանության սահմանադրական սկզբունքների, որոնց

վրա է խարսխված նաև ՌԴ քաղաքացիների ընտրական իրավունքների իրացումը<sup>54</sup>>>:

Քաղաքացիներին այդպիսի իրավունքի վերապահումն էապես կնպաստի ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության աճին, ինչի կապակցությամբ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ «Ընտրություններում ավելի մեծ ժողովրդավարության ապահովման մասին» 1897 (2012) բանաձևում նշված է. «Այսօր, երբ քաղաքացիներն ավելի ու ավելի քիչ վստահություն ունեն ներկայացուցչական ժողովրդավարության ինստիտուտների հանդեպ, առավել քան կարևորվում է ընտրությունների ժողովրդավարական բնույթը բարձրացնելու և, այդպիսով, ժողովրդի կամահայտնության և ընտրությունների փաստացի արդյունքների միջև կապն ամրապնդելու հանգամանքը<sup>55</sup>>>: Ուշագրավ է նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 31.05.2012 թ. թիվ ՍԴՈ-1028 որոշման մեջ տեղ գտած հետևյալ ձևակերպումը. «Սահմանադրական դատարանը դրական է համարում հատկապես քաղաքացիական հասարակության դերակատարության մեծացումն ընտրական գործընթացի վերահսկման նկատմամբ և գտնում է, որ ՀՀ ընտրական օրենսգիրքը հանրային վերահսկման իրավական հիմքերի ամրապնդման ուղղությամբ նոր լուծումներ պետք է նախատեսի<sup>56</sup>>>(կետ 13):

Այսպիսով, ընտրական իրավունքների պաշտպանության վերաբերյալ խմբային հայցի կիրառումն արդարացիորեն կարող է Սահմանադրական դատարանի՝ վերը նշված որոշմամբ առաջարկվող

<sup>54</sup> Տե՛ս Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի 22.04.2013թ. N 8-ՈՒ որոշում, 2.1:

<sup>55</sup> Տե՛ս Демократизация выборов, Резолюция 1897(2012), (կետ 2):

<sup>56</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2012թ. մայիսի 31-ի «Հայ Ազգային Կոնգրես» կուսակցությունների դաշինքի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 13-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորները ընտրվելու մասին» N 265-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ գործով» թիվ ՍԴՈ-1028 որոշումը (կետ 13):

Նոր լուծումը հանդիսանալ հատկապես քվեարկության արդյունքների առնչությամբ ընդունված որոշումները՝ անկախ անձի սուբյեկտիվ ընտրական իրավունքների խախտման հանգամանքից բողոքարկելու հնարավորությունն նախատեսելով, ինչպես նաև նմանատիպ այլ դեպքեր ամրագրելու միջոցով (օրինակ, ներպետական դիտորդներին խմբային հայց կիրառելու միջոցով այլոց իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավասությամբ օժտելով և այլն): Հարկ է այս ինստիտուտը համալիր ուսումնասիրության ենթարկել, կատարել ազոր ծել և, վերը նշված առանձնահատկությունների հաշվի առնմամբ, ներմուծել ՀՀ իրավական համակարգ, քանի որ խմբային հայցի՝ ժողովրդավարական և արդյունավետ ինստիտուտ լինելու հանգամանքը, իր վիճահարույց կողմերով հանդերձ, կարծում ենք, անվիճելի է:

Ինչպես տեսնում ենք, ընտրական վեճերը բազմազան են, և դրանք մեկ հիմքով դասակարգելն անհնար է<sup>57</sup>: Դրանցից յուրաքանչյուրի առանձին հետազոտությունը հնարավորություն է տալիս բացահայտել ընտրական վեճի՝ որպես ընտրական գործընթացի անցանկալի ուղեկցի առաջացմանը նպաստող գործոնների համակարգը, կանխել դրանց հետագա զարգացման միտումներն ու մշակել դրանց քննության արդյունավետ լուծումներ:

#### **§4. Իրավասուբյեկտությունն ընտրական վեճերի քննության տեսանկյունից**

---

<sup>57</sup> Ст'ю Головин А. Г. Избирательное право России. Норма. М. 2009. Стр 211:

Յուրաքանչյուր հասարակական հարաբերություն, որն իրավական կարգավորման արդյունքում վեր է ածվում իրավահարաբերության, չի կարող գոյություն ունենալ առանց որոշակի մասնակիցների՝ սուբյեկտների, որոնք էլ հանդիսանում են իրավահարաբերության բաղադրիչները:

Ընտրական վեճը նույնպես, հանդիսանալով ընտրական իրավահարաբերություն, ունի որոշակի սուբյեկտային կազմ: Ընտրական վեճերի սուբյեկտներ կարող են լինել \$իզիկական և իրավաբանական անձինք, սակայն ընտրական իրավունքի սուբյեկտի կարգավիճակ ձեռք բերելու, այսինքն՝ ընտրական իրավունքներ ու պարտականություններ ստանձնելու համար, կարևոր նախապայման է հանդիսանում ընտրական իրավասուբյեկտությունը, որն ընտրական իրավունքի սուբյեկտ լինելու հնարավորությունը և կարողությունն է<sup>58</sup>: Ընտրական իրավասուբյեկտության ձեռք բերման համար, ելնելով ընտրական իրավահարաբերությունների առանձնահատկություններից և պետական համակարգի կայացման գործընթացում դրանց դերի ու նշանակության կարևորությունից, օրենսդիրն ընդհանուր քաղաքացիական իրավասուբյեկտության ձեռքբերման համար նախատեսված պահանջներից բացի, սահմանել է նաև լրացուցիչ չափանիշներ, մասնավորապես,

- ա) օրենքով ամրագրված տարիքի վրահասնելը,
- բ) քաղաքացիությունը,
- գ) առողջական վիճակը (դատական կարգով անգործունակ ճանաչել),
- դ) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատագրվման վայրում գտնվելը,
- ե) բնակության վայրը և այլն:

---

<sup>58</sup> Ст'я Избирательное право. Под ред. К. К. Гасанова, А.С. Прудникова. – 2-е изд., перераб. и доп., Москва. ЮНИТИ-ДАНА. 2007. Էջեր 132-134:

Ակնհայտ է, որ իրավասուբյեկտությունը պայմանավորող վերը նշված հանգամանքները վերաբերում են ֆիզիկական անձանց, իսկ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, որպես ընտրական իրավահարաբերության մասնակիցներ, ունեն օրենքով հստակ սահմանված լիազորություններ, և ի տարբերություն որպես ընտրող հանդես եկող ֆիզիկական անձանց, չեն կարող ընտրական գործընթացներին մասնակցել իրենց հայեցողությամբ, այսինքն վերջիններս ընտրական գործընթացին մասնակցում են ի պաշտոնե՝ օրենքով իրենց տրված իրավասության շրջանակներում:

Ինչպես տեսնում ենք, ընտրական իրավասուբյեկտությունն ամբողջովին պայմանավորված է գործող ընտրական օրենսդրությամբ նախատեսված հիմքերով, այսինքն՝ ինչպիսի չափանիշներ կսահմանի օրենսդրությունը, դրանց համապատասխան կձևավորվի ընտրաիրավական հարաբերության սուբյեկտների կազմը: Այսպես, օրինակ, մինչև 2000թ. Հայաստանի Հանրապետությունում ընտրելու իրավունք ունեին 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները, իսկ 2000թ. ապրիլի 21-ի ՀՀ ընտրական օրենսգրքում կատարված փոփոխության համաձայն, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու իրավունք վերապահվեց նաև Հայաստանի Հանրապետությունում փախտականի կարգավիճակ ունեցող և սահմանված կարգով տրված փախտականի ընտանիքի վկայականում նշված՝ տասնութ տարին լրացած յուրաքանչյուր անձի, որոնց վրա տարածվում էին ՀՀ քաղաքացիների համար սահմանված իրավունքներն ու պարտականությունները<sup>59</sup>, այսինքն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրական իրավունքի սուբյեկտ հանդիսացան նաև Հայաստանի Հանրապետությունում փախտականի կարգավիճակ ունեցող անձինք:

---

<sup>59</sup> Տե՛ս ՀՀ պաշտոնական տեղեկագիր. 2000թ. Թիվ 8, էջ 20:

Ներկայ ումս, գործող Ընտր. օր-ի համաձայն, որը բխում է ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածից, Հայաստանի Հանրապետության ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը ՀՀ տասնութ տարին լրացած քաղաքացիները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամանակ ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք՝ քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում ունենալու դեպքում:

Ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող քաղաքացիները (Ընտր օր. 2-րդ հոդվ.):

Ընդհանուր առմամբ թվում է, թե ընտրական օրենսդրությամբ նախատեսված են ընտրական իրավասուբյեկտության ձևավորման համար անհրաժեշտ և բավարար պայմաններ, սակայն եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) և ԵԱՀԿ Մարդու իրավունքների և ժողովրդավարական հաստատության ներքին գրասենյակի կողմից մշակված չափորոշիչներից, ինչպես նաև 30.10.2002թ. Վենետիկի հանձնաժողովի 52-րդ լիազումար նստաշրջանի ընթացքում ընդունված «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք. ցուցումներ և բացատրական զեկուլյց»<sup>60</sup> փաստաթղթից բխում է, որ ընտրական իրավասուբյեկտության առաջացման համար սահմանված չափանիշներից որոշակի շեղումներ կան: Մասնավորապես, հանձնաժողովն ընդհանուր առմամբ ընդունում է քաղաքացիության ցենզի կիրառումը, սակայն նպատակահարմար է գտնում տեղական

<sup>60</sup> Տե՛ս «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք» . Վենետիկյան հանձնաժողով, 52-րդ լիազումար նստաշրջան, 18-19 հոկտեմբերի 2002թ. Վենետիկ (CDL-AD(2002)23), 1.1 կետ (a,b,c,d), էջ 5:

ինքնակառավարման մարմինների ընտրություններում թույլ աստիճանով երկրում որոշակի ժամանակ մշտական բնակություն հաստատած օտարերկրացիներին մասնակցել ընտրություններին, հատկապես, որ այս երկուսն էլ բավականին երկար ժամանակ է, ինչ կիրառվում է աշխարհում: Մասնավորապես, 1975թ. Շվեդիայում իրավունք է տրվել 3 տարուց ավելի երկրում բնակվող արտասահմանյան քաղաքացիներին մասնակցել տեղական ընտրություններին: Ավելի ուշ նման իրավունք են ստացել նաև Դանիայում, Նորվեգիայում, Յուգոսլավիայում, Մեծ Բրիտանիայում, Լիտվայում, Էստոնիայում, Սլովենիայում բնակվող արտասահմանցիները<sup>61</sup>: 2008թ. սեպտեմբերի 19-ին Եվրոպայի խորհրդի 8 անդամ-պետություններ վավերացրել են 1992թ. փետրվարի 5-ի N144 Կոնվենցիան<sup>62</sup>, որը վերաբերում է հասարակական կյանքին տեղական մակարդակով արտասահմանցիների մասնակցության իրավունքին: Բացի այս, կարելի է նշել, որ գործող օրենսդրության համաձայն օտարերկրյա քաղաքացիություն ունեցող անձանց մասնակցությունը չի սահմանափակվում միայն տեղական մակարդակով անցկացվող ընտրություններով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրությունն ընդունում է երկքաղաքացիության ինստիտուտը, ինչն իր մանրամասն ամրագրումն է ստացել «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13.1-րդ հոդվածով, ըստ որի Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին Հայաստանի Հանրապետության համար ճանաչվում է միայն որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի և ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր իրավունքները և կրում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր պարտականություններն ու

<sup>61</sup> Տե՛ս Матейкович М.С. Избирательное право и избирательный процесс. Норма-Инфра. М. 2010. Էջեր 52-53:

<sup>62</sup> Տե՛ս URL; <http://www.conventions.coe.int> . Եվրոպայի խորհրդի պաշտոնական կայք:

պատասխանատվությունը, բացառությունամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ օրենքով նախատեսված դեպքերի (<<Քաղաքացիության մասին>> ՀՀ օրենքի 13.1-րդ հոդով):

Ինչպես տեսնում ենք, ընտրական իրավահարաբերության, ուստիև ընտրական վեճի սուբյեկտներ կարող են լինել երկքաղաքացիություն ունեցող անձինք, որոնք միաժամանակ ՀՀ քաղաքացի են, և որոնց ակտիվ ընտրական իրավունքը սահմանափակված չէ միջազգային պայմանագրով կամ օրենքով:

Ինչ վերաբերում է երկքաղաքացիների պասիվ ընտրական իրավունքին, ապա Ընտր. օր-ը տալիս է այս հարցի պատասխանը՝ պասիվ ընտրական իրավունքի համար համապատասխան ցենզեր նախատեսելու միջոցով: Մասնավորապես, Ընտր. օր-ի 77-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության Նախագահ կարող է ընտրվել երեսուներեկ տարին լրացած, այլ պետության քաղաքացի չհանդիսացող, վերջին տասը տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին տասը տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք, իսկ 105-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, այլ պետության քաղաքացի չհանդիսացող, վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին հինգ տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք: Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, ապա այս դեպքում օրենսդիրը թեկնածուի համար նախատեսում է միայն համապատասխան համայնքի բնակչության ռեգիստրում մինչև քվեարկության օրն առնվազն վերջին վեց ամսվա հաշվառման ցենզ: Ինչպես տեսնում ենք, երկքաղաքացիություն ունեցող ՀՀ



քաղաքացիների պասիվ ընտրական իրավունքն օրենսդիրը սահմանափակում է՝ հնարավորություն տալով մասնակցելու միայն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին: Այս մոտեցումը խրախուսվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից, որն իր՝ 2008 թվականի նոյեմբերի 18-ի՝ Թենասեն և Կիրտոակեն ընդդեմ Մոլդովայի գործով վճռով<sup>63</sup> ամրագրեց, որ երկքաղաքացիություն կամ բազմաքաղաքացիություն ունեցող անձանց ընտրվելը որպես պատգամավոր՝ Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիային կից N1 Արձանագրության 3-րդ հոդվածի պահանջների խախտում է:

Այնուամենայնիվ, Ընտր. օր-ի վերը նշված դրույթները, որոնք համապատասխանաբար բխում են ՀՀ Սահմանադրության 50-րդ և 64-րդ հոդվածներից, միանշանակ չի ընդունվել Վենետիկյան հանձնաժողովի կողմից, հատկապես պասիվ ընտրական իրավունքի համար նախատեսված քաղաքացիության և բնակության ցենզերի վերաբերյալ դրույթները: Մասնավորապես, Ընտր. օր-ի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը ինչպես Նախագահ ընտրվելու համար տասը տարվա քաղաքացիության և տասը տարվա բնակության, այնպես էլ Ազգային ժողովի պատգամավորի համար հինգ տարվա քաղաքացիության և հինգ տարվա բնակության պահանջը դիտարկել են միջազգային չափանիշներին հակասող և առաջարկել են վերանայել վերը նշված պահանջները<sup>64</sup>: Բացի այդ, դիրքորոշում է արտահայտվել, որ բնակության որոշակի ժամկետի

<sup>63</sup> Տե՛ս «Танасе и Киртоакэ против Молдавии» /Tanase and Chirtoace v. Moldova/ (N7/08). Постановление Европейского Суда по правам человека от 18 ноября 2008г. // Бюллетень Европейского Суда по правам человека. 2009. N 3, էջ 45:

<sup>64</sup> Տե՛ս «<Join Final opinion on the Electoral Code of Armenia>>, Adopted by the Council for democratic Elections at its 38th meeting (Venice, 13 october 2011) and by the Venice Commission at its 88th Plenary Session (Venice, 14-15 october 2011). CDL-AD(2011)032, կետեր 37, 38

պահանջ կարող է նախատեսվել տեղացիների համար միայն տեղական կամ տարածքային ընտրությունների առնչությամբ<sup>65</sup>:

Հարկ է նկատել, որ դեռևս կան բավականին մեծ քանակությամբ երկրներ, որտեղ շարունակում է գործել քաղաքացիության և բնակության ցենզի բարձր շեմը, այնուամենայնիվ, մեծ ընդգրկում են ստանում տարբեր պետություններում ընթացող այն զարգացումները, երբ կրճատվում է բնակության ցենզի հիշյալ ժամանակահատվածը<sup>66</sup>: Ուստի, կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում նույնպես, հաշվի առնելով ընթացող սահմանադրափոփոխական բարեփոխումների գործընթացը, ճիշտ ժամանակն է ուշադրության արժանացնել նաև այս խնդիրը և վերը նշված դրույթները համապատասխանեցնել միջազգային-իրավական չափանիշներին:

Ինչ վերաբերում է քվեարկության իրավունքից զրկելուն, ապա, և Վենետիկի հանձնաժողովի վերը նշված փաստաթղթի, և միջազգային հանրաճանաչ այլ փաստաթղթերի համաձայն<sup>67</sup>, մատնանշված հիմքի կիրառումը թույլատրելի է, սակայն ոչ բացարձակ առումով, այսինքն, օբյեկտիվորեն ճիշտ է, որ անկախ կատարած հանցագործության ծանրությունից՝ բոլոր դատապարտյալները զրկվեն ընտրելու իրավունքից: Մասնավորապես, Վենետիկի հանձնաժողովի վերը նշված փաստաթուղթն ամրագրում է. <<Քվեարկելու և ընտրվելու իրավունքից զրկումը.

---

<sup>65</sup> Տե՛ս <<Code of Good Practice in electoral Matters: Guidelines and explanatory report>>, Adpted by the Venice Commission at its 52nd session (Venice, 18-19 october 2002), CDL-AD (2002)23 rev, 1-ին բաժին 1.1 կետի շեղակետ:

<sup>66</sup> Տե՛ս Շաթիրյան Է., Մանասյան Ա., Հովհաննիսյան Ա.. <<Ընտրական օրենսդրության արդի հիմնահարցերը և զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում>>, Չանգակ հրատ., Երևան-2013, էջ 38

<sup>67</sup> Տե՛ս ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթուղթ. 1990թ. 7.3 պարբերություն, [www.policemonitoring.org/Download\\_File/3darm\\_Law.104.pdf/](http://www.policemonitoring.org/Download_File/3darm_Law.104.pdf/), «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր 1966թ. 25-րդ հոդվ. [www.arlis.am/DocumentView.aspx?docid/18500/](http://www.arlis.am/DocumentView.aspx?docid/18500/):

ա) կարելի է նախատեսել մի դրույթով, որը կվերաբերի անձանց քվեարկելու և ընտրվելու իրավունքից զրկմանը, սակայն միայն հետևյալ ընդհանուր պայմանների դեպքում,

բ) այն պետք է նախատեսված լինի օրենքով,

գ) պետք է կիրառվի համամասնության սկզբունքով, ընտրության և նենդին առաջադրվելու իրավունքից անձանց զրկման համար անհրաժեշտ պայմանները պետք է ավելի պակաս խիստ լինեն, քան քաղաքացիական իրավունքներից նրանց զրկման պայմանները,

դ) զրկումը պետք է հիմնավորված լինի մտավոր թերության կամ լուրջ հանցագործության համար քրեական դատապարտման փաստով,

ե) բացի այդ, քաղաքական իրավունքներից զրկումը կամ մտավոր թերության բացահայտումը կարող է իրականացվել օրինական դատարանի անաչ առ որոշմամբ միայն<sup>68</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես իր որոշումներից մեկում անդրադարձել է վերը նշված հիմնախնդրին՝ ամրագրելով, որ, «... սա այն բնագավառն է, որտեղ ազգային օրենսդրին պետք է տրվի հայեցողության և այն շրջանակ, որոշելու, թե արդյոք ազատազրկման դատապարտվածների ընտրական իրավունքի սահմանափակումները կարող են արդարացված համարվել արդի ժամանակաշրջանում, և թե այդպես է, ապա ինչպես պետք է ապահովվել արդարացի հավասարակշռությունը... : Այնուամենայնիվ, Դատարանը չի կարող ընդունել, որ ազատազրկման դատապարտված և պատիժը կրող յուրաքանչյուր անձի ընտրական իրավունքի բացարձակ արգելքն ընդգրկվում է հայեցողության ընդունելի շրջանակների համատեքստում<sup>69</sup>: Չարկ է փաստել, որ մի շարք ժողովրդավարական երկրներում (օրինակ, Գերմանիա, Շվեյցարիա, Չեխիա) դատապարտված

<sup>68</sup> St' u <<Code of Good Practice in electoral Matters: Guidelines and explanatory report>>, Adopted by the Venice Commission at its 52nd session (Venice, 18-19 october 2002), CDL-AD (2002)23 rev, 1-ին բաժին 1.1 կետի ժեներալ տեքստ:

<sup>69</sup> St' u Judgment on CASE OF HIRST v. THE UNITED KINGDOM(No. 2) (Application no. 74025/01), 6 october 2005, <http://hudoc.echr.coe.int/sites/eng/pages/search.aspx?i>

և պատիժ կրող քաղաքացիների ընտրական իրավունքի սահմանափակում չի նախատեսվում, իսկ որոշներում՝ (օրինակ, Ռուսիայի) հստակ սահմանված է ընտրական իրավունքի սահմանափակման չափանիշները (օրինակ հիմնական պատժի չափը, իրավախախտման տեսակը և այլն):

Այսպիսով, հաշվի առնելով վերը շարադրվածը, հարկ է ներկայումս Յայաստանի Յանրապետությունում ընթացող սահմանադրարարական բարեփոխումների համատեքստում անդրադառնալ ընտրական իրավունքի՝ վերը նշված հիմքով սահմանափակման հիմնախնդրին, ինչը և արտացոլված է Յայաստանի Յանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ-նախագծում<sup>70</sup>, և գործող օրենսդրությունը համապատասխանեցնել միջազգային ժողովրդավարական չափանիշներին:

Ինչպես նկատում ենք, միջազգային կառույցների կողմից առաջարկվող՝ ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտների շրջանակն ավելի լայն է, քան գործող օրենսդրությամբ սահմանվածը, ինչը նաև 2012թ. մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ եզրակացության մեջ ամրագրել է ԵԱՀԿ/ԺՅԻԳ, ԵԱՀԿ/ԽՎ, ԵԽԽՎ և ԵԽ համատեղ դիտորդական առաքելությունը<sup>71</sup>:

Վերը քննարկվեց ընտրական իրավասուբյեկտության առանձնահատկություններն ընդհանուր առմամբ, ինչև ինքնանպատակ չէ, քանի որ վերջինից են բխում նաև ընտրական

<sup>70</sup> Տե՛ս Յայաստանի Յանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ /Նախագիծ՝ մշակված ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից/. Երևան, 2014թ. մարտ, էջ 30:

<sup>71</sup> Տե՛ս Յայաստանի Յանրապետության Նախագահի ընտրություններ, 18 Փետրվար, 2013 թ. ԵԱՀԿ/ԺՅԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության Վերջնական զեկույց. Վարչավա. 8 մայիսի 2013թ. էջ 43, կետ 7: ԵԱՀԿ/ԺՅԻԳ, ԵԱՀԿ/ԽՎ, ԵԽԽՎ և ԵԽ - հայտարարությունն նախնական հանգամանքների և եզրակացությունների վերաբերյալ, 7 մայիսի 2012թ., էջ 5:

վեճերի սուբյեկտային կազմի առանձնահատկությունները: Այնուամենայնիվ, վերը նշված ընդհանուր բնույթի պահանջների համատեքստում Շնտր. օր-ն ամրագրում է վարչական կարգով քննվող ընտրական վեճի սուբյեկտներին ներկայացվող պահանջներ, որոնք, կարծում ենք, ոչ միայն չեն նպաստում, այլ և երբեմն խոչընդոտում են ազատ և թափանցիկ ընտրությունների անցկացման գործընթացին: Մասնավորապես, Շնտր. օր-ի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողություններն ու անգործությունը կարող է բողոքարկել .

ա) յուրաքանչյուր ոք, եթե գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր սուբյեկտիվ ընտրական իրավունքը,

բ) վստահված անձը, եթե գտնում է, որ խախտվել են վստահված անձի կամ իր վստահորդի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքները,

գ) դիտորդը, եթե գտնում է, որ խախտվել են դիտորդի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքները,

դ) հանձնաժողովի անդամը, եթե գտնում է, որ ստորադաս հանձնաժողովը կամ հանձնաժողովը, որի անդամն է ինքը, խախտել է իր կամ այլ անձանց՝ սույն օրենսգրքով սահմանված որևէ իրավունք:

Կարծում ենք, «յուրաքանչյուր ոք» ձևակերպմամբ օրենսդիրն ինկատի ունի տասնութ տարին լրացած բոլոր 33 քաղաքացիներին (օրենքով սահմանված դեպքերում փախտականներին ու երկքաղաքացիություն ունեցող անձանց), որոնք դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված չեն ազատազրկման և գործունակ են:

Ինչպես տեսնում ենք, Շնտր. օր-ը «յուրաքանչյուր ոք» արտահայտության հետ միասին կիրառում է նաև «սուբյեկտիվ ընտրական իրավունք» արտահայտությունը, այսինքն յուրաքանչյուր ոք միայն իր սուբյեկտիվ ընտրական իրավունքի

խախտման կամ անմիջական խախտման հնարավորության դեպքում կարող է դիմել համապատասխան մարմին՝ հանձնաժողովի որոշումը, գործողությանը կամ անգործությանը բողոքարկելու նպատակով, ինչը, կարծում ենք, ինքնին հակասում է ազատ ընտրությանը և ներքին անցկացման սկզբունքին և անհարկի սահմանափակում է ընտրական իրավունքների պաշտպանության իրականացման հնարավորությունը: Այն, կարծում ենք, չի բխում նաև ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի նորմերից, որոնց համաձայն, յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք: Մեր խորին համոզմամբ, իրավական պետության կերտման ճանապարհին արդար ընտրությանը և ներքին անգնահատելի է, քանի որ ցանկացած ընտրական գործընթաց ենթադրում է հասարակության զարգացման մի նոր փուլ, ուստի, ընտրական գործընթացի յուրաքանչյուր փուլում թույլ տրված խախտման, տվյալ դեպքում ընտրական հանձնաժողովների ոչ իրավաչափ որոշման, գործողության կամ անգործության արդյունքում հասարակական շահի պաշտպանության անհրաժեշտության առաջացումն անժխտելի է, ինչի կապակցությամբ յուրաքանչյուր ոք, անկախ իր սուբյեկտիվ իրավունքի խախտումից կամ հնարավոր խախտումից, պետք է հնարավորություն ունենա օրենքով սահմանված կարգով ապահովել հասարակական շահի պաշտպանություն: Բացի այդ, պետական իշխանության ընտրովի մարմնի գործունեությանը անմիջականորեն առնչվում է տվյալ հասարակության յուրաքանչյուր անդամի անձնական շահերի հետ (հատկապես, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությանը և ներքին ժամանակ՝ փոքր համայնքներում), հետևաբար՝ այդ մարմինների ձևավորման ընթացքում դրսևորվող

յուրաքանչյուր անօրինական քայլ, անկախ անձի սուբյեկտիվ իրավունքի խախտման հանգամանքից, հանդիսանում է ոչ միայն հասարակական շահի, այլև ընտրողի շահի ոտնահարում: Հիշյալ նկատառումով Շնտր. օր-ի համապատասխան ձևակերպումն անձին, թերևս, գրկում է իր՝ վերը նշված սահմանադրական իրավունքից օգտվելու հնարավորությունից: Հետևաբար, անհրաժեշտ է, որ ՀՀ քաղաքացին ընտրական հանձնաժողովի՝ իր սուբյեկտիվ ընտրական իրավունքների խախտման կամ հնարավոր խախտման հետ չկապված որոշումները, գործողությունն ու անգործությունը բողոքարկելու իրավասությամբ օժտված լինի: Այս պարագայում, ինչպես վերը նշել ենք, նպատակահարմար է խմբային հայցի՝ որպես վերը նշված իրավունքների պաշտպանության այլ ընտրանքային տարբերակի ընտրությունը՝ հաշվի առնելով նաև ընտրական իրավունքի հասարակական նշանակությունը:

Նմանատիպ մոտեցում է դրսևորվում նաև ընտրական իրավունքի մյուս սուբյեկտների առնչությամբ, մասնավորապես, դիտորդը կարող է բողոքարկել միայն իր՝ որպես դիտորդի իրավունքների խախտման վերաբերյալ, իսկ վստահված անձը միայն իր վստահորդի և իր՝ որպես վստահված անձի իրավունքների խախտման վերաբերյալ հանձնաժողովի որոշումները, գործողությունն ու անգործությունը: Մեր համոզմամբ, օրենսդրի նման մոտեցումը հակասում է վերը նշված ինստիտուտների, հատկապես, դիտորդական առաքելության, գործառնական նպատակային նշանակությանը, քանի որ դրանցից յուրաքանչյուրի գործունեությունն ավելի մեծ արժեքների պահպանմանն ու պաշտպանությանն է ուղղված, քան, պարզապես, իրենց սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությունը: Մասնավորապես, ինչպես հայրենական, այնպես էլ միջազգային փորձը հաստատում է, որ ընտրական գործընթացներին դիտորդների ներկայությունը նպաստում է բաց և թափանցիկ միջավայրի ձևավորմանը, ինչն իր հերթին, բարձրացնում է քաղաքացիների

վստահության աստիճանն այդ գործընթացների նկատմամբ: Այլ կերպ ասած, դիտորդական առաքելության հիմնական նպատակը ընտրական գործընթացների օրինականության նկատմամբ վերահսկողության իրականացումն է, ինչն էլ իր հերթին նպաստում է իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը<sup>72</sup>:

Ըստ էության, դիտորդը հանդիսանում է անաչառ տեղեկատվության աղբյուր, որն օգնում է լուծելու վիճահարույց խնդիրները: Դիտորդի ներկայությունն ընտրատեղամասում միտված է նվազագույնի հասցնելու ընտրական գործընթացի մասնակիցների կողմից թույլ տրվող սխալները, ինչպես նաև կանխելու ընտրական ընթացակարգերի կիրառման ընթացքում դրսևորվող խախտումները: Այսպիսով, դիտորդական առաքելության հիմնական խնդիրներն են. ա) ընտրական գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացումը, բ) ընտրական ընթացակարգերի խախտման կանխումը, գ) ընտրությունների ինստիտուտի նկատմամբ վստահության ձևավորումը, դ) ընտրական օրենսդրության խախտումների վերհանումը, ե) ընտրությունների գնահատումը և այլն: Կարծում ենք, վերը նշված խնդիրների արդյունավետ իրագործման համար լավագույն երաշխիք կարող է հանդիսանալ դրանցից բխող լիազորությունների իրականացման համար Ընտր. օր-ով դիտորդներին ոչ միայն իրենց սուբյեկտիվ, այլ նաև այլոց իրավունքների պաշտպանության հայցով դատարան դիմելու իրավունք վերապահելը, բացառությամբ միջազգային կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության ու մ հավատարմագրված դիվանագիտական և հյուսիսատոսական ներկայացուցչությունների: Այլ կերպ ասած, նման իրավասությամբ պետք է օժտել միայն տեղական դիտորդներին,

<sup>72</sup> Ст'я Мишанова Е. В. Наблюдение на выборах. Учебное пособие. Под ред. Г. В. Голосова: изд-во Европейского университета в Санкт-Петербурге, С. 2007, էջ 37



որոնք Հայաստանի Հանրապետության հասարակական այն կազմակերպություններն են, որոնց կանոնադրական խնդիրները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, հատկապես, որ վերջիններիս նման իրավասությամբ օժտելը բխում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասից, որի համաձայն՝ հասարակական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպության՝ հասարակական միավորման, տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվել են ֆիզիկական անձինք՝ ՀՀ քաղաքացիներ, օտարերկրյա քաղաքացիներ, քաղաքացիություն չունեցող անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ասպահովելու, հանրօգուտայլ գործունեություն իրականացնելու նպատակներով:

Օրենսդիրն այլ մոտեցում է ցուցաբերում հանձնաժողովի անդամի նկատմամբ, վերջինիս հնարավորությունն տալով բողոքարկելու ոչ միայն իր, այլև այլ անձանց խախտված իրավունքների վերաբերյալ որոշումները, ինչը, մեր խորին համոզմամբ, ներկայիս իրականության մեջ քիչ իրատեսական է, և որպես ընտրական իրավունքների պաշտպանություն ասպահովող և րացուցիչ երաշխիք, իրեն չի արդարացնում:

Նկատելի է, որ Ընտր. օր-ը ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունն ու անգործությունը բողոքարկելու իրավասությունն ունեցող սուբյեկտների մեջ չի ներառել զանգվածային և րատվության միջոցների

ներկայացուցիչներին<sup>73</sup>: Խնդիրը նրանումն է, որ Ընտր. օր-ի 31-րդ հոդվածն ամբողջովին վերաբերում է դիտորդի և զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի իրավունքներին, պարտականություններին և գործունեության երաշխիքներին: Չամպատասխան հոդվածով վերը նշված երկու սուբյեկտներին տրվում են բավականին լայն լիազորություններ, ուստի, դիտորդին այդ իրավունքների խախտման դեպքում դրանց պաշտպանության հնարավորությամբ օժտելը, իսկ զանգվածային լրատվամիջոցի ներկայացուցչին՝ ոչ, կարծում ենք, բավարար չափով տրամաբանական չէ, քանի որ պրակտիկան ցույց է տալիս, որ ընտրական զարգացումների ընթացքում բավականին խոցելի վիճակում են հայտնվում հենց զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները՝ իրավունքների ոչ պատշաճ ապահովման տեսանկյունից, հատկապես, որ ընտրական գործընթացում վերջիններս օժտված են որոշակի կարգավիճակով: Ծիշտե, ՎԴՕ 3-րդ հոդվածը յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձի, ուստի նաև զանգվածային լրատվամիջոցի ներկայացուցչին, հնարավորություն է ընձեռում վարչական դատարան բողոքարկել խախտված իրավունքը, սակայն այդ հանգամանքը չի արդարացնում օրենսդրի անհետևողականությունը Ընտր. օր-ի վերը նշված իրավակարգավորման վերաբերյալ: Այնհայտ է, որ երկու իրավական ակտերի միջև առկա է ներքին անհիմն հակասականություն և ամբողջականության բացակայություն:

Ինչպես տեսնում ենք, վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Ընտր. օր-ի ներկայացված կարգավորումը սահմանափակում է քննարկվող հարցերով բողոք ներկայացնելու իրավունքը՝ այն տրամադրելով միայն նրանց, ում անձնական ընտրական իրավունքները վտանգված են: Մինչդեռ հարկ է նկատի

<sup>73</sup> Տե՛ս 33 Ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մաս:

ուենենալ, որ ընտրական իրավունքների՝ որպես անձի սահմանադրական կարգավիճակը ձևավորող առանցքային տարրերից մեկի կարևորությունն ընդգծվում է ոչ միայն զուտ որոշակի սուբյեկտիվ, անձնական իրավունքների իրացման, այլև ընդհանուր առմամբ պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու հնարավորության ապահովման տեսանկյունից<sup>74</sup>:

Այսպիսով, ընտրական վեճերը, իրավասուբյեկտության տեսանկյունից ելնելով, օժտված են որոշակի առանձնահատկություններով, որոնք կանխորոշում են ընտրական իրավունքի սուբյեկտի գործունեության շրջանակներն ընտրական վեճի առաջացման պարագայում: Այլ կերպ ասած, գործող ընտրական օրենսդրության համաձայն, կարող են լինել դեպքեր, երբ ընտրական իրավունքի՝ օրենքով ամրագրված սուբյեկտը, ընտրախախտում բացահայտելու դեպքում, հնարավորություն չունենա հանդես գալու այդ խախտման վերացման պահանջով և աջակցելու արդար և թափանցիկ ընտրությունների անցկացման գործին: Եթե որոշ դեպքերում այդ հանգամանքը պայմանավորված է օբյեկտիվ գործոններով, ապա վերը նշված դեպքերում, ակնհայտ է, որ դագործող ընտրական օրենսդրության թերացման արդյունք է:

Ընդհանուր առմամբ, վերը շարադրված նյութից կարելի է հետևել, որ

նախ՝ անհրաժեշտ է վերանայել ընտրական իրավունքի՝ օրենսդրությամբ ամրագրված հնարավոր սահմանափակման շրջանակները՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային-իրավական չափորոշիչներին, մասնավորապես, դատապարտյալներին տալով ընտրելու իրավունք, բացառությամբ ծանր կամ առանձնապես

---

<sup>74</sup> Տե՛ս Շաթիրյան Է., Մանասյան Ա., Յովհաննիսյան Ա.. <<Ընտրական օրենսդրության արդի հիմնահարցերը և զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում>>, Ձևակալ հրատ., Երևան-2013, էջեր 152-153:

ծանր հանցագործություններ կատարած անձանց, պասիվ ընտրական իրավունքի համար նախատեսված քաղաքացիության և բնակության ցենզերի շեմը նվազեցնել և այլն:

Երկրորդ, հարկ է ընտրական վեճի յուրաքանչյուր սուբյեկտի օրենքով սահմանված կարգով օժտել այնպիսի ծավալի իրավունքներով, որպեսզի վերջիններս կարողանան պաշտպանել ոչ միայն իրենց կարգավիճակից բխող սուբյեկտիվ ընտրական իրավունքներն, այլ նաև այլոց ընտրական իրավունքները, քանի որ յուրաքանչյուր ընտրական վեճ, լինելով անձի սուբյեկտիվ ընտրական իրավունքի խախտման արդյունք, ինքնին հանդիսանում է ինչպես հանրային շահի, այնպես էլ ազատ ընտրությունների հիմնարար սկզբունքի ոտնահարում:

Այսպիսով, ընտրական վեճերի քննության առանցքում նպատակահարմար է դնել այն գաղափարը, որ ընտրական իրավունքը՝ նաև սուբյեկտիվ առումով, առանձնանում է իր նկատելի հանրային նշանակությամբ, ինչից բխում է, որ այս դեպքում զուտ անձնական իրավունքների պաշտպանության ընթացակարգերն ու տեսական մոտեցումները բավարար չեն: Տվյալ դեպքում խոսքը ոչ թե հանրային նշանակություն ունեցող գործունեություն իրականացնող կառույցների կողմից այլոց իրավունքների պաշտպանության, այլ բացառապես հանրային այնպիսի շահերի պաշտպանության մասին է, որոնք որոշակիորեն համընկնում են անձնական շահերի հետ:

ԳԼՈՒԽ 2. ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**§1. Ընտրական հանձնաժողովները որպես ընտրական վեճեր քննող մարմիններ**

Ընտրական իրավունքները, որպես մարդու սահմանադրական իրավունքների անբաժանելի մաս, օրենքով սահմանված կարգով ենթակա են պաշտպանության ինչպես դատական, այնպես էլ արտադատական կարգով: Յետևաբար, ընտրական վեճերի քննությանը, որպես ընտրական իրավունքների պաշտպանության եղանակ, նույնպես իրականացվում է և արտադատական (վարչական), և դատական կարգով: Ընտր. օր-ը, որպես ընտրաիրավական հարաբերություններ կարգավորող հիմնական իրավական ակտ, համալիր կերպով ամրագրում է ընտրական վեճերի լուծման վարչաիրավական ընթացակարգը: Սակայն, հարկ է նշել, որ այն հիմնականում կարգավորում է ընտրական հանձնաժողովների, որպես վարչարարություն իրականացնող մարմինների գործունեությունը: Ընտր. օր-ի 46-րդ հոդվածի վերլուծությունից բխում է, որ

ամրագրված վարչական ընթացակարգը վերաբերում է ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների (անգործության) բողոքարկմանը: Այլ կերպ ասած, Ընտր. օր-ը կարգավորում է, հիմնականում, ընտրական հանձնաժողովների կողմից իրականացվող վարչարարությունը, ինչը բխում է նաև միջազգային չափորոշիչներից, քանի որ դրանց համաձայն՝ ընտրական հանձնաժողովների համակարգը պետք է վերահսկի ընտրական վարչարարության բոլոր աստիճանները՝ սկսած ընտրատեղամասերից, մինչև համապատասխան որոշումներ ընդունող և համակարգող մարմինների գործունեությունը<sup>75</sup>: Սակայն ակնհայտ է, որ ընտրությունների ընթացքում կարող են առաջանալ նաև այնպիսի ընտրական վեճեր, որոնց քննելու ու լուծելու իրավասություն ունեն ոչ թե ընտրական հանձնաժողովները, այլ ընտրական գործընթացի կազմակերպման ու անցկացման օժանդակող այլ վարչական մարմիններ, որոնց կանդիդատներն արդեն հաջորդ պարագրաֆներում:

Ինչպես արդեն նշվեց, համաձայն Ընտր. օր-ի՝ ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների (անգործության) բողոքարկման արդյունքում առաջացած ընտրական վեճերի քննությունը և լուծումն իրականացվում է ընտրական հանձնաժողովների կողմից:

Հայաստանի Հանրապետությունում գործում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ. **ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ, ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովներ:**

Ընտր. օր-ի 35-րդ հոդվածն ամրագրում է ընտրական հանձնաժողովների հիմնական գործառույթները, որոնք են՝

<sup>75</sup> St' u European Union Election Observation Handbook, Second edition, European Commission, Printed by Elanders Sverige AB, Brussels. 2008. Էջեր 35-41:

ընտրողների ընտրական իրավունքի իրականացումը և պաշտպանությունը: Կարծում ենք, որ Ընտր. օր-ի այս ձևակերպումն իմաստային կտրվածքով ավելի նեղ է, քան հանձնաժողովների կատարած գործառույթները: Ընտրական հանձնաժողովները ոչ միայն ընտրողների, այլև ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների (ընտրողներ, թեկնածուներ, վստահված անձինք, դիտորդներ և այլն) ընտրական իրավունքների իրականացումն ու պաշտպանությունն են ապահովում, իսկ ընտրական վեճերն առաջանում են ընտրական գործընթացի մասնակիցների ընտրական իրավունքների իրական, հնարավոր կամ ենթադրյալ խախտման պատճառով: Ընտրական վեճերի քննության և լուծման ընթացքում իրականացվում է այդ իրավունքների պաշտպանություն՝ ընտրական հանձնաժողովների, որպես իրավասու վարչական մարմինների կողմից՝ իրավական ակտեր ընդունելու միջոցով:

Ակնհայտ է, որ ընտրական հանձնաժողովներն իրենց գործառույթներն իրականացնելիս օժտված են իշխանական իրավասությամբ: Սակայն այս հարցի վերաբերյալ գործնականում տարակարծություն է եղել, և դրա վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը<sup>76</sup>: Մասնավորապես, «ՀՀ ԱԺ մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 17-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ գործով դիմող կողմը վիճարկել է ընտրական հանձնաժողովների իրավազորության հարցը՝ գտնելով, որ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից իշխանության իրականացումը հակասում է ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածին: Ըստ դիմողի՝ այդ նորմով սահմանված է, որ միայն Սահմանադրությամբ նախատեսված պետական

<sup>76</sup> Տե՛ս ՍԴՈ-880, 23.04.2010թ. «ՀՀ ԱԺ մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 17-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ:

և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք են օժտված «իշխանություն իրականացնելու իրավասությամբ», իսկ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը Սահմանադրությամբ չնախատեսված կազմավորում է:

Ի պատասխան, ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ ժողովուրդն իր իշխանությունը ներկայացուցչական մարմինների միջոցով իրականացնելու դեպքում իր կամքն արտահայտում է ոչ թե ուղղակիորեն, այլ իր կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով (խորհրդարան, նախագահ, տեղական ինքնակառավարման մարմիններ), որոնց հանձնարարում է իր լիազորությունների իրականացումը որոշակի ժամկետով: Ներկայացուցչական մարմինները պետք է արտահայտեն ժողովրդի կամքը և շահերը, հաշվետու լինեն ժողովրդի, ընտրողների առջև: Մնացած պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք ածանցված են ներկայացուցչական մարմիններից և կազմավորվում են նրանց միջոցով՝ Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված կարգով: Միաժամանակ, դա չի նշանակում, որ պետական ողջ համակարգն ուղղակի կախվածության մեջ է գտնվում ներկայացուցչական մարմիններից: Պետական իշխանության որոշակի հատուկ գործառնությունների և խնդիրների առկայությունը պահանջում են ներկայացուցչական կամ առաջնային մանդատով օժտված մարմինների կողմից կազմավորված առանձին պետական մարմինների գործառնական և կառուցակարգային որոշակի անկախություն և ինքնավարություն՝ Սահմանադրությամբ և/կամ օրենքով նախատեսված գործառնություն իրականացնելու համար: Դա բխում է հենց ժողովրդի և ժողովրդավարության շահերից: Այսպիսի մարմիններ են նաև ընտրական հանձնաժողովները:

Ընդ որում, ինչպես եվրոպական երկրների մեծ մասում, ՀՀ-ում նույնպես Սահմանադրությունն ի սկզբանե այդ անկախությունը և ինքնուրույնությունը երաշխավորում է ոչ թե ժողովրդի կամքի



արտահայտման իրավագործությամբ, այլ իրավունքով. Սահմանադրությամբ և օրենքով: Ուստի ընտրական հանձնաժողովները ոչ թե ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի իմաստով ներկայացուցչական ժողովրդափշխանություն իրականացնող մարմիններ են, այլ իրենց պետափշխանական իրավասության շրջանակներում կոչված են Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգի համաձայն՝ իրավունքի ուժով ապահովել ներկայացուցչական ժողովրդափշխանության մարմինների կազմավորումը: Հետևաբար, նաև այդ մարմինների կազմավորման ընթացքում ընտրական հանձնաժողովներն օժտված են տվյալ ոլորտում անձանց ընտրական իրավունքների պաշտպանության իրավասությամբ, որի դրսևորումներից մեկն էլ ընտրական վեճերի քննությունն ու լուծումն է:

Ըստ էության, վերը նշված փաստարկները որոշակի վերացական բնույթ են կրում, այնուամենայնիվ, համաձայնվելով դրանց հետ, կարելի է ՀՀ սահմանադրական դատարանի վերը նշված որոշմանը հավելել Սահմանադրության 85-րդ հոդվածի դրույթն այն առնչությամբ, որ կառավարությունն իրականացնում է կառավարման այն գործառույթները, որոնք օրենքով վերապահված չեն այլ մարմինների: Սա վկայում է այն մասին, որ նույն Սահմանադրությունը 85-րդ հոդվածով հնարավոր է համարում ընտրական հանձնաժողովների ձևավորումը: Այլ կերպ ասած, հիշյալ մարմինները կառավարման գործառույթ իրականացնող մարմիններ են, ինչը, ի տարբերություն օրենսդիր և դատական իշխանության ճյուղերի, բխում է Սահմանադրության ոգուց:

Ընտր. օր-ը պահանջում է, որ ընտրական հանձնաժողովներն իրենց գործունեությունն իրականացնեն օրինականության, կոլեգիալության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա (Ընտր. օր. 34-րդ հոդվածի 5-րդ մաս): Սրանք միմյանց հետ փոխկապակցված են, և յուրաքանչյուրի իրականացումն ուղղված է

ազատ, արդար և թափանցիկ ընտրություններ անցկացնելու<sup>77</sup>: Բացի այդ, այս սկզբունքները կանխորոշում են ընտրական իրավունքների պաշտպանության երաշխիքների և ընթացակարգերի իրավական կարգավորման հիմքերը և ապահովում են հավասարակշռված և չկեղծված ընտրություններ, իսկ դրա արդյունքում՝ նաև ընտրական իրավունքների իրականացում և պաշտպանություն:

Ընտրական հանձնաժողովները, որպես պետական մարմիններ, համաձայն ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի, իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Բացի այդ, դրանք իրենց լիազորություններն իրականացնելիս անկախ են նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից (Ընտր. օր. 34-րդ հոդվ. 4-րդ մաս), այլ կերպ ասած ընտրական հանձնաժողովները պարտավոր են իրենց գործունեությունն իրականացնել բացառապես գործող օրենսդրությանը համապատասխան՝ զերծ մնալով իշխանությունների, քաղաքական ուժերի ազդեցությունից:

Ընտրական հանձնաժողովների կողմից ընտրական վեճերի արդար քննության ևս մեկ երաշխիք է հանդիսանում ընտրական վեճերի քննությունը և լուծումը կոլեգիալության սկզբունքի հիման վրա: Սա պայմանավորված է նրանով, որ ընտրական հանձնաժողովները ձևավորվում են տարբեր մարմիններ, քաղաքական ուժեր ներկայացնող անձանցից, որի արդյունքում պետք է պահպանվի շահերի հավասարակշռությունը հանձնաժողովի գործունեության ընթացքում: Սակայն այստեղ կարևոր է այն հանգամանքը, թե ինչպիսի ինստիտուտների ներկայացուցիչներով

---

<sup>77</sup> See 'Electoral dispute resolution systems: towards a handbook and related material. Summary of concept paper developed and presented by Orozco Henriquez and dr. Raul Avila to EDR expert group workshop held in Mexico city, 27-28 may 2004, [www.idea.int/news/newsletters/upload/concept\\_paper\\_EDR.pdf](http://www.idea.int/news/newsletters/upload/concept_paper_EDR.pdf). էջեր 5-6:

կհամալրվեն ընտրական հանձնաժողովները<sup>78</sup>, որպեսզի հանձնաժողովի գործունեության ընթացքում իրականում կարողանան ապահովել շահերի հավասարակշռություն: Այս հարցում պետք է հետևել միջազգային փորձի համատեքստում տարածված այնպիսի չափորոշիչների, ինչպիսիք են չեզոքությունը, անկողմնակալությունն ու արհեստավարժությունը:

Ներկայացուցչական ժողովրդավարության տեսանկյունից ելնելով՝ անհրաժեշտ է, որ ընտրական հանձնաժողովները, հատկապես վերադաս ընտրական հանձնաժողովը, ձևավորվի բացառապես անկախ, մշտապես գործող այնպիսի մարմինների ներկայացուցիչներից, որոնց գործունեությունն ամբողջապես չի վերահսկվում պետական իշխանության կողմից: Փորձելով համապատասխանել վերը նշված գաղափարին՝ Ընտր.օր-ը սահմանել է, որ ընտրական հանձնաժողովի անդամը չի ներկայացնում իրեն նշանակողին և գործում է անկախ (Ընտր.օր. 37-րդ հոդվածի 1-ին մաս), այնուամենայնիվ, մեր կարծիքով, դրանց նշանակման ընթացակարգն ի գործ է բացառելու սուբյեկտիվ դրսևորումներ: Հատկապես, անդրադառնալով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ձևավորման կարգին, նշենք, որ այն մասամբ է համապատասխանում վերը նշված չափորոշիչներին, քանի որ ՀՀ Նախագահի կողմից ԿԸՀ բոլոր անդամներին նշանակելու պարագայում ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին հանձնաժողովի անդամների թեկնածուներ ներկայացնելու իրավասությամբ օժտելը չի բխում ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքից և հակասում է չեզոքության, անկողմնակալության սկզբունքներին, ինչը, չի կարելի ասել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին և ՀՀ փաստաբանների պալատի նախագահին նման իրավասությամբ օժտելու

<sup>78</sup> Stéu European Union Election Observation Handbook, Second edition, European Commission, Printed by Elanders Sverige AB, Brussels. 2008. Էջեր 35-41:

վերաբերյալ: Նկատենք, որ տվյալ դեպքում ներկայացուցչական մարմին կարող էր համարվել առնվազն դատարանների նախագահների խորհուրդը:

Կան երկրներ, որոնց պրակտիկայում ընտրական հանձնաժողովները, բացի այն, որ գործում են կոլեգիալ ության սկզբունքի հիման վրա, իրենց կից ձևավորում են աշխատանքային խմբեր՝ ընտրական վեճերի արդյունավետ քննություն և ապահովելու նկատառումներից ելնելով: Քանի որ ընտրական հանձնաժողովներն ընտրական գործընթացում իրականացնում են բազմաթիվ այլ գործառնություններ, որոնց համար անհրաժեշտ է ժամանակ և մասնագիտական մոտեցում, ուստի հաճախ ընտրական վեճերի լուծման համար անհրաժեշտ է լինում լրացուցիչ ներուժի կիրառում, հատկապես, որ ընտրական վեճերի լուծման համար նախատեսված են բավականին սեղմ ժամկետներ: Նմանատիպ միջոց է հանդիսանում աշխատանքային խմբի ստեղծումը, որն իրականացվում է համապատասխան հանձնաժողովի որոշման հիման վրա<sup>79</sup>: Աշխատանքային խմբի կազմում ընդգրկվում են համապատասխան հանձնաժողովի մի քանի անդամներ, մասնագետներ, փորձագետներ, որոշ դեպքերում նաև հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ: Աշխատանքային խմբերն իրենց գործունեությունը կարող են իրականացնել ինչպես նիստերի, այնպես էլ համապատասխան ընտրատեղամասեր մեկնելու միջոցով, որտեղ տեղի է ունեցել քննվող ընտրական վեճը: Չարկ է նշել, որ աշխատանքային խմբերի գործունեությունը պետք է ուղղված լինի հանձնաժողովի կողմից քննվող վեճի նախնական քննությանը և նյութերի պատրաստմանը, և

---

<sup>79</sup> Տե՛ս ՌԴ ԿԸՅ-ին կից գործում է աշխատանքային խումբ ԿԸՅ 23.07.2003թ. N 19/141-4 որոշման համաձայն: <<О рабочей группе по предвыборительному рассмотрению жалоб (заявлений) на решения и действия (бездействия) избирательных комиссий, комиссий референдума и их должностных лиц, нарушающие избирательные права и право на участие в референдуме граждан РФ>> // Вестник Центральной избирательной комиссии РФ.-2003. N 9:

ոչ մի դեպքում վերջնական որոշում կայացնելու, քանի որ տվյալ դեպքում ուղղակիորեն խախտվում է հանձնաժողովի գործունեության կոլեգիալության սկզբունքը: Յետևաբար, աշխատանքային խմբի որոշումը հանձնաժողովի համար պետք է կրի խորհրդատվական բնույթ: Նրա գործունեությունը պետք է ուղղված լինի հանձնաժողովի կողմից ընտրական վեճի արագ, օբյեկտիվ և արդյունավետ քննությանն ու լուծմանն օժանդակելուն՝ աշխատանքային խմբի անդամների կողմից մանրամասն և օպերատիվ կերպով գործի նյութերն ուսումնասիրելու և եզրակացություն կազմելու միջոցով:

Հարկ է նշել, որ աշխատանքային խմբի օգնությանը պետք է դիմել ոչ բոլոր ընտրական վեճերի, այլ միայն այնպիսիների առկայության պայմաններում, որոնց քննությունն ու լուծումը պահանջում են մեծածավալ նյութի, փաստական հանգամանքների, ինչպես նաև խորը, մասնագիտական հետազոտություն: Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում նույնպես, որոշ դեպքերում, ընտրական հանձնաժողովներին չծանրաբեռնելու նկատառումներից ելնելով, նպատակահարմար կլինի նմանատիպ միջոցի կիրառումը, քանի որ ՀՀ ընտրական հանձնաժողովների կողմից իրականացվող վարչական վարույթների և դրանց արդյունքում կայացված որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաճախ կողմերը դժգոհ են մնում ներկայացված ապացույցների ոչ պատշաճ և ոչ մասնագիտական ուսումնասիրությունից<sup>80</sup>: Ճիշտ է, գործող օրենսդրությունը նախատեսում է վարչական վարույթին անհրաժեշտության դեպքում փորձագետի ընդգրկումը (<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>>

<sup>80</sup> Տե՛ս <<Թիվ 7 ընտրատարածքում ՀՀ ԱԺ ընտրությունների մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Ն. Փաշինյանի և նրա լիազոր ներկայացուցիչ Վ. Հովակիմյանի դիմում-բողոքի քննարկման մասին>> վարչական վարույթ, 27.04.2012թ. ք. Երևան, <<Քաղաքացի Տիգրան Եգորյանի բողոքի քննության մասին>> ՀՀ ԿԸՀ վարչական վարույթ, 06.03.2013թ. ք. Երևան:

ՀՀ օր. 45-րդ հոդվ. (այ սուև հետ ԿՅՎԿՕ)), այ սուև ամենայ սիվ, ընտրական գործընթացի ժամկետների սղուևթյան ուև ընտրական հանձնաժողովների ծանրաբեռնվածուևթյան պատճառով լիսուևմ են դեպքեր, երբ ընտրական վեճը պատշաճ քննուևթյան չի արժանանուևմ, ուև ստի սմանատիպ պարագայ ուևմ շատ տեղիս կլիսի աշխատանքայիս խմբի մասնակցուևթյան ապահովուևմը՝ օրենքով սախատեսված դեպքերուևմ ս կարգով:

Ընտրական վեճի քննուևթյան ուև լուծման արդյուևնավետուևթյանը սպաստուևմ է սան հանձնաժողովների գործուևնեուևթյան հրապարակայ սուևթյան սկզբուևնքը, որի համաձայ ս ընտրական վեճի առկայ ուևթյան դեպքուևմ կողմերը պատշաճ տեղեկացվուևմ են դիմուևմի քննարկման ժամկետի վերաբերյալ ս իրավուևնք ուևնեն մասնակցել ուև հանձնաժողովի սիստուևմ իրենց դիմուևմի քննարկմանը, ներկայացնել ուև հիմնավորուևմներ, տալ ուև հարցեր ս ելուևյթ ուևնենալ ուև: Վեճերի քննուևթյանը մասնակցել ուև ս լուևսաբանել ուև իրավուևնք ուևնեն զանգվածայիս լրատվամիջոցների ներկայացուևցիչները, իսչը, ենթադրվուևմ է, պետք է բավականաչափ ապահովի հանձնաժողովների գործուևնեուևթյան հրապարակայ սուևթյուևնը: Այ սուև ամենայ սիվ, մեր կարծիքով, ի հավելուևմն վերը նշված օրենսդրական ընթացակարգերի, ընտրական վեճերի լուևծման համատեքստուևմ հրապարակայ սուևթյան սկզբուևնքի գործողուևթյուևնը ամբողջուևթյամբ կարող է երաշխավորել ընտրական հանձնաժողովների կողմից ընտրական վեճերի քննուևթյան գործընթացի սկատմամբ մոսիթորիսգի իսստիտուևտի կիրառուևմը, իսչը պետք է անցկացվի հասարակական հիմուևնքներով գործող մարմիսների կողմից: Այ ս լրացուևցիչ երաշխիք կհանդիսանա համապատասխան ոլորտուևմ հանրայիս հսկողուևթյուևն սահմանել ուև ս հասարակուևթյան վստահուևթյուևնը վերականգնել ուև

գործում (առավել մանրամասն կանդրադառնանք հաջորդ պարագրաֆում) :

Բացի վերը նշված սկզբունքներից, որոնք ընտր. օր-ն ամրագրել է որպես ընտրական հանձնաժողովների գործունեության հիմք, հարկ ենք համարում սույն պարագրաֆում անդրադառնալ նաև ՎՅՎՎՕ-ով ամրագրված վարչարարության հիմնարար սկզբունքներին, որոնք կիրառելի են վարչական վարույթի յուրաքանչյուր տեսակի դեպքում, իսկ վարույթի առանձին տեսակների մասին օրենքները չեն կարող որևէ կերպ սահմանափակել դրանք<sup>81</sup>, հետևաբար, և ընտրական հանձնաժողովների, և մյուս վարչական մարմինների կողմից դրանք ենթակա են կիրառման ընտրական վեճերի քննության և լուծման ընթացքում:

ՎՅՎՎՕ-ն ամրագրում է հետևյալ սկզբունքները. վարչարարության օրինականության, ձևական պահանջները չարաչափելու արգելքը, հայեցողական լիազորությունները սահմանափակելը, կամայականության արգելքը, վարչարարության համաչափությունը, տնտեսավարությունը, հավաստիության կանխավարկածը և առավելագույնի սկզբունքը: Հարկ է նշել, որ այս սկզբունքները միմյանց լրացնում են և կազմում են միասնական համակարգ, սակայն սպառիչ չեն և չեն կարող խոչընդոտել այլ սկզբունքների կիրառմանը:

Այս սկզբունքներից յուրաքանչյուրը կարևոր գործնական նշանակություն ունի առհասարակ վարչարարության իրականացման ընթացքում: Այնուամենայնիվ, ընտրական վեճերի քննության և լուծման տեսանկյունից, հարկ է անդրադառնալ հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքին, քանի որ և

---

<sup>81</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք. Ընդհանուր խմբագրությամբ՝ ի.գ.դ., պրոֆեսոր Գ. Դանիելյան. ԵՊՀ Հրատարակչություն. Երևան-2012. Էջ 366:

ընտրական հանձնաժողովների, և վարչական այլ մարմինների կողմից ընտրական վեճերի քննության և լուծման ընթացքում շատ կարևոր նշանակություն ունեցի այս սկզբունքը:

Հարկ ենք համարում նշել, որ դեռևս 20-րդ դարի սկզբին իրավունքի գերակայության տեսակետի կողմնակիցների կողմից բացասական վերաբերմունք է ձևավորվել ընդհանրապես հայեցողական լիազորությունների նկատմամբ՝ նշելով, որ հայեցողական լիազորությունները հանգեցնում են պետական իշխանության կամայական իրականացման անխուսափելիության<sup>82</sup>: Ավելի ուշ այս մոտեցմանն արդարացիորեն հակադրվել է այն դիտարկումը, որ հայեցողությունը ներկայիս մշտապես բարդացող հասարակության մեջ հանդիսանում է որոշումների կայացման անհրաժեշտ պայման, ուստի հայեցողական լիազորությունները կարող են իրականացվել, սակայն բացառապես օրենքի տառին և նպատակներին համապատասխան<sup>83</sup>:

Այսպիսով, ներկայումս հարց է առաջանում. սահմանել հայեցողական լիազորություններ, թե՛ ոչ, և եթե սահմանել, ապա ինչու դրանք սահմանափակել:

Ինչպես արդեն նշվեց, հայեցողության առաջացումը պայմանավորված է ներկայիս մշտապես բարդացող հասարակության սոցիալ-իրավական խնդիրների արդյունավետ լուծման, իրավունքի և իրավական համակարգի դինամիկ զարգացման անհրաժեշտությամբ, քանի որ գործող իրավական համակարգում օրենսդրական բացեր են թողնվում, գնահատողական կատեգորիաներ են կիրառվում կամ կարևոր հասարակական հարաբերությունների կարգավորումը գործադիր իշխանության մարմիններին պատվիրակվում՝ հնարավորություն տալով վերջիններիս սահմանել ու սեփական

---

<sup>82</sup> Stå Erik O. Wennerstrom. The rule of Law and the European Union, Uppsala: Iustus Forlag. 2007, էջ 61:

<sup>83</sup> Stå Доклад о верховенстве права. Принято на 86 пленарном заседании Венецианской Комиссии (Венеция, 25-26 марта 2011года), CDL-AD(2011)003rev, էջ 17:



լիազորությունները: Այս հանգամանքը, իրոք, հղի է կոռուպցիոն ռիսկերի վտանգով: Յենց այստեղ է առաջանում հայեցողական լիազորությունների օրենսդրական ձևակերպման անհրաժեշտությունը: Ճիշտ է, հայեցողության առկայությունը իջեցնում է օրենսդրության կանխատեսելիության իրավաչափակնկալիքի իրացման հավանականությունը, ոչ հազվադեպ էլ հանգեցնում է օրենքի չարաչափման, բայց դրա հետ միասին, վարչական հայեցողությունը օբյեկտիվորեն գոյություն ունեցող և սոցիալական առումով արդարացված իրավական երևույթ է, իրավակիրառ գործունեության անբաժան ուղեկիցը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ոչ թե հրաժարվել դրանից, այլ բացահայտել և սահմանել հնարավորինս օպտիմալ կարգավորիչներ, որոնք թույլ չեն տա հայեցողության ազատ կիրառման հնարավորությունը վերածվի կամայականության<sup>84</sup>: Այս նկատառումով էլ օրենսդիրը նախատեսել է հայեցողական լիազորությունների սահմանափակումը, որն իր հերթին ընկալվում է ոչ համարժեք՝ որպես դրանց ծավալի սահմանափակում: Սակայն, հարկ ենք համարում նշել, որ սահմանափակումը վերաբերում է ոչ թե հայեցողական լիազորությունների ծավալին, այլ դրանց կիրառման առաջնահերթությանն ու իրականացման նախապայմաններին: Ինչպես վերը նշվեց, վարչարարության ընթացքում կարող են լինել իրավիճակներ, որոնց կոնկրետ իրավակարգավորումն օրենսդիրը չի նախատեսում, ինչը բնական է, քանի որ օրենսդիրը չի կարող կանխատեսել կյանքի բոլոր իրավիճակները: Ուստի, նման դեպքերում, որպես օրենսդրական իմպերատիվ նորմի բացակայության այլ ընտրանք, առաջանում է հայեցողական լիազորությունների կիրառման, այսինքն մի քանի հնարավոր

<sup>84</sup> Տե՛ս Ս. Վարդանյան. Վարչական հայեցողության սահմանման և իրացման որոշ հիմնահարցեր. ԵՊՅ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայ ցորղների 2014թ. նստաշրջանի նյութերի ժողովածու. ԵՊՅ հրատարակչություն. Երևան. 2015, էջ 51:

իրավաչ ափ լ ու ծ ու մ ն եր ի ց ո Ր Լ Ե մ ե կ ի ը ն տր ու թ յ ան ան հր աժ ե շ տ ու թ յ ու ն և , որ ա լ ե ս գ ի այ ս գ ո Ր ծ ը ն թ ա ց ու մ ք ա ց առ վ ի վ ա Ր չ ա Ր ա Ր ու թ յ ու ն ի Ր ա կ ան ա ց ն ո ղ ի կ ո ղ մ ի ց ց ան կ ա ց ա ծ կ ամ այ ա կ ան ու թ յ ան դ Ր ս և ո Ր ու մ , օ Ր ե ն ս դ ի Ր ը ն ա խ ա տ ե ս ե լ Ե հ այ ե ց ո ղ ա կ ան լ ի ա զ ո Ր ու թ յ ու ն ն եր ի ս ա հ մ ան ա խ ա կ ու մ ` հ ս տ ա կ ամ Ր ա գ Ր ե լ ո վ դ Ր ան ց կ ի Ր առ մ ան առ ա ջ ն ա հ եր թ ու թ յ ու ն ը : Ա յ ն Ե ` հ այ ե ց ո ղ ա կ ան լ ի ա զ ո Ր ու թ յ ու ն ի Ր ա կ ան ա ց ն ե լ ի ս վ ա Ր չ ա կ ան մ ա Ր մ ի ն ը պ ա Ր տ ա վ ո Ր Ե առ ա ջ ն ո Ր դ վ ե լ մ ա Ր դ ու և ք ա ղ ա ք ա ց ու ` Չ այ ա ս տ ան ի Չ ան Ր ա լ ե տ ու թ յ ան Ս ա հ մ ան ա դ Ր ու թ յ ամ ք ամ Ր ա գ Ր վ ա ծ ի Ր ա վ ու ն ք ն եր ի և ա զ ա տ ու թ յ ու ն ն եր ի պ ա ջ տ պ ան ու թ յ ան ան հր աժ ե շ տ ու թ յ ամ ք , ն Ր ան ց ի Ր ա վ ա հ ա վ ա ս ա Ր ու թ յ ան , վ ա Ր չ ա Ր ա Ր ու թ յ ան ի Ր ա կ ան ա ց մ ան հ ամ ա ջ ա ի ու թ յ ան և կ ամ այ ա կ ան ու թ յ ան ա Ր գ ե լ ք ի ս կ զ ք ու ն ք ն եր ո վ , ի ն չ ա լ ե ս ն ա և հ ե տ ա պ ն դ ե լ օ Ր ե ն ք ո վ կ ան խ ո Ր ո շ վ ա ծ այ լ ն պ ա տ ա կ ն եր (Վ Չ Վ Վ Օ 6-ր դ հ ո ղ վ .):

Չ ա Ր կ Ե ն շ ե լ , ո Ր վ ե Ր ը ն շ վ ա ծ օ Ր ե ն ս դ Ր ա կ ան ն ո Ր մ ը ք ա վ ա կ ան ի ն ը ն դ ի ան Ր ա կ ան Ե և կ ա Ր ո ղ Ե ան հ ա Ր կ ի չ ա Ր ա շ ա հ ու մ ն եր ի առ ա Ր կ ա դ առ ն ա կ : Ա ն հր աժ ե շ տ Ե ս ա հ մ ան ե լ դ Ր ա կ ի Ր առ մ ան ը ն թ ա ց ա կ ա Ր գ ա յ ի ն առ ան ձ ն ա հ ա տ կ ու թ յ ու ն ն եր , ո Ր ո ն ք կ հ ս տ ա կ ե ց ն ե ն հ այ ե ց ո ղ ա կ ան լ ի ա զ ո Ր ու թ յ ու ն ն եր ի կ ի Ր առ մ ան հ ի մ ք ե Ր ն ու ս ա հ մ ան ն եր ը , և հ ն ա Ր ա վ ո Ր ի ն ս կ ք ա ց առ ե ն ս ու թ յ ե կ տ ի վ ի զ մ ի դ Ր և ո Ր ու մ ն եր ը : Մ ա ս ն ա վ ո Ր ա լ ե ս , Չ Չ վ ճ ճ ա ք ե կ դ ա տ ա Ր ան ը հ այ ե ց ո ղ ու թ յ ան վ ե Ր ա ք ե Ր յ ա լ հ ա Ր ց ի ք ն ն ա Ր կ մ ան ն ան դ Ր ա դ առ ն ա կ ի ս հ այ ե ց ո ղ ու թ յ ան հ ա ս կ ա ց ու թ յ ան , դ Ր ա ք ո վ ան դ ա կ ու թ յ ան և հ ա տ կ ան ի շ ն եր ի վ ե Ր ա ք ե Ր յ ա լ ո Ր Լ Ե հ ս տ ա կ ե ց ու մ չ ի կ ա տ ա Ր ե լ , այ ն ու ամ ե ն այ ն ի վ , ի Ր ո Ր ո շ ու մ ն եր ու մ դ ա տ ա կ ան ա կ տ ի հ ի մ ն ա վ ո Ր վ ա ծ ու թ յ ան ն ան դ Ր ա դ առ ն ա կ ի ս ն շ ե լ Ե , ո Ր ո Ր ո շ մ ան մ ե ջ ո չ մ ի այ ն պ ե տ ք Ե ց ու յ ց տ ա լ ն ո Ր մ ա տ ի վ ա կ տ ի այ ս կ ամ այ ն հ ո ղ վ ա ծ ը , ո Ր ու մ ամ Ր ա գ Ր վ ա ծ Ե կ ի Ր առ մ ան ե ն թ ա կ ա ն ո Ր մ ը , այ լ և պ ե տ ք Ե պ ա տ ճ առ ա ք ան վ ի , թ ե

հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը<sup>85</sup>: Կարծում ենք, որ հայ եցողական լիազորություններ կիրառելիս վարչական մարմինը պետք է առաջնորդվի վերը նշված դիրքորոշմամբ՝ որոշում կայացնելիս տալով համապատասխան իրավական հիմնավորում, ինչն էլ կնպաստի ինչպես կամայականությունների վերացման, այնպես էլ վարչական մարմինների՝ որպես այդպիսին կայանալու գործընթացին:

Ընտր. օր-ի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <<Ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունը (անգործությունը) կարող է բողոքարկել ...>>: Վերլուծելով տվյալ նորմի բովանդակությունը՝ ակնհայտ է, որ օրենքը հստակ սահմանում է ընտրական հանձնաժողովի որոշումների, գործողությունների (անգործության) բողոքարկման կարգը, իսկ նրա անդամների գործողությունների (անգործության)՝ վարչական կարգով բողոքարկման վերաբերյալ այն որևէ դրույթ չի պարունակում: Կարծում ենք, որ ընտրական հանձնաժողովների, հատկապես, ընտրատարածքային և ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներն այնպիսի ծավալի իրավունքներով ու պարտականություններով են օժտված, մասնավորապես, քվեարկության անցկացման և ձայների հաշվարկման ընթացքում, որ իրենց իրավասության իրացման կամ դրանց չարաչափման միջոցով հնարավորություն ունեն խախտելու քաղաքացիների ընտրական իրավունքները<sup>86</sup>: Այսպես, Ընտր. օր-ի 59-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է քվեարկության ընթացքում ապահովել սույն օրենսգրքով նախատեսված պահանջների կատարումը և անհրաժեշտ կարգ ու կանոն հաստատել տեղամասային կենտրոնում: Այսինքն,

<sup>85</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-54 (ՎԴ) որոշում

<sup>86</sup> Տե՛ս Мостовщиков В. Д. Территориальные избирательные комиссии: система, государственно-правовой статус, порядок формирования и компетенция/ Учебно-методическое пособие.- Екатеринбург, 2002, էջ 36:

տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է ապահովել ընտրական գործընթացի մասնակիցների (ընտրողներ, թեկնածուներ, վստահված անձինք, դիտորդներ, լրագրողներ և այլն) ընտրական իրավունքների իրականացումն ու պաշտպանությունն ընտրական տեղամասում, իսկ եթե վերջինիս կողմից դա չի իրականացվում, ապա Ընտր. օր-ը չի սահմանում, թե ում պետք է բողոքարկել տվյալ պաշտոնատար անձի գործողությունը կամ անգործությունը:

Պրակտիկան էլ գերծ չէ նման իրադրություններից, մասնավորապես, թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ մերժվել է «Իրավունքի եվրոպա միավորում» ՀԿ-ի կողմից 19.02.2013թ. ներկայացված դիմումը՝ թիվ 17/31, 17/37, 17/01, 17/41, 17/7, 17/16, 17/11, 17/27, 17/10, 17/4, 17/3, 17/2, 17/44, 17/5 ընտրատեղամասերում «Իրավունքի եվրոպա միավորում» ՀԿ դիտորդների կողմից 18.02.2013թ-ին իրականացված դիտորդական առաքելության ընթացքում արձանագրված խախտումների վերաբերյալ<sup>87</sup>, ընդ որում, արձանագրված են եղել ինչպես ընդհանուր բնույթի, այնպես էլ դիտորդի և լրագրողի իրավունքների խախտումներ ընտրատեղամասում՝ տարբեր անձանց կողմից, իսկ ընտրական հանձնաժողովի նախագահը որևէ միջոց չի ձեռնարկել համապատասխան ընտրախախտումների կանխման ուղղությամբ: Ի պատասխան վերը նշված դիմումի, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը նշել է, որ հանձնաժողովն իրավասու չէ այն քննել, քանի որ վերը նշված խախտումները կատարվել են կոնկրետ անձանց կողմից, իսկ գործող ընտրական օրենսդրության համաձայն՝ հանձնաժողովը կարող է քննել միայն ստորադաս հանձնաժողովի որոշումները, գործողությունն ու անգործությունը:

<sup>87</sup> Տե՛ս թիվ 17 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 23.02.2013թ. N 6-Ա որոշում:

Գործող օրենսդրության տեսակետից՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի պատասխանն իրավաչափ է և բխում է օրենքի պահանջից, քանի որ Ընտր. օր-ը սահմանում է ընտրական հանձնաժողովների՝ որպես կոլեգիալ մարմինների որոշումների, գործողությունների և անգործության դեմ ուղղված բողոքների քննության կարգը, մինչդեռ տվյալ պարագայում խախտումը թույլ է տրվել տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի, այն է՝ հանձնաժողովի նախագահի կողմից:

Ինչպես տեսնում ենք, լիովին իրական կարող է լինել այնպիսի իրավիճակը, երբ քաղաքացիների ընտրական իրավունքները խախտվեն ոչ թե ընտրական հանձնաժողովի, որպես կոլեգիալ մարմնի, այլ վերջինիս կոնկրետ անդամի կողմից: Ուստի ընտրական հանձնաժողովների անդամների գործողությունների (անգործության) բողոքարկման կարգի վերաբերյալ Ընտր. օր-ի «Ղ ու թ յ ու ն ը», կարծում ենք, արդարացված չէ, քանի որ նմանատիպ հարցերի ոչ հստակ օրենսդրական կարգավորման արդյունքում քաղաքացիների խախտված ընտրական իրավունքները կարող են մնալ առանց համապատասխան պաշտպանության, ինչը և հասարակության շրջանում կարող է թերահավատությունն ձևավորել ընտրական վեճերի լուծման վարչական ընթացակարգի նկատմամբ: Յետևաբար, առաջարկվում է օրենքի վերոնշյալ նորմը շարադրել հետևյալ ձևակերպմամբ. «Ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունը (անգործությունը), ինչպես նաև դրա անդամի գործողությունը (անգործությունը) կարող է բողոքարկել ... յ ու թ ա ք ա ն չ յ ու թ ո ք ...»:

Ուսումնասիրելով ընտրական հանձնաժողովների գործունեությունը՝ հարկ է կանգ առնել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավական կարգավիճակի որոշ առանձնահատկությունների վրա: ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը (այսուհետ՝ ԿԸՀ) ընտրությունները կազմակերպող

և ընտրությունների օրինականության նկատմամբ վերահսկողությունն իրականացնող պետական մամին է, որն այդ գործառնությունների արդյունավետ իրականացման նկատառումներից ելնելով, օժտված է բավականին լայն լիազորություններով:

ԿԸՅ յոթ անդամներից երեքը նշանակվում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի, երկուսը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի, երկուսը՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջարկությամբ՝ ՀՀ նախագահի կողմից՝ վեց տարի ժամկետով<sup>88</sup>: Պատահական չէ, որ ԿԸՅ-ի ձևավորմանը մասնակցում են մի քանի մարմիններ, քանի որ, այսպիսով, օրենսդիրը փորձել է պետական կյանքի առանցքային ոլորտ կարգավորող այս մարմինն զերծ պահել քաղաքական շահերի բախումից և ազդեցությունից, որպեսզի այն ղեկավարվի բացառապես Սահմանադրությամբ և օրենքներով՝ ապահովելով ժողովրդավարական, թափանցիկ ընտրություններ: Թե որքանով է դա արդարացնում իրեն, այս հարցի վերաբերյալ արդեն վերը նշվել է մեր դիրքորոշումը՝ մատնանշելով այդ ընթացակարգի խնդրահարույց կողմերը:

Ինչ վերաբերում է ընտրական վեճերի քննությանն ու լուծմանը, ապա ԿԸՅ-ն վերջին վարչական ատյանն է, որին կարող է դիմել ընտրական գործընթացի մասնակիցը՝ իր խախտված ընտրական իրավունքի վերականգնման դիմումով, իհարկե, եթե խախտումը թույլ է տրվել ընտրական հանձնաժողովի կողմից: Ուստի վերը նշված անկախության երաշխիքներն առանցքային նշանակություն ունեն նաև ընտրական վեճերի քննության և լուծման ընթացքում, քանի որ այս գործընթացում շատ կարևոր է հանձնաժողովի՝ օրենքի տարին համապատասխան գործելը:

---

<sup>88</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունք. Պատ. խմբ. ի.գ.դ., պրոֆեսոր Ն. Ա. Այվազյան. 5-րդ լրամշակված հրատարակություն. ԵՊՀ Հրատարակչություն. Երևան. 2012. Էջեր 486-488:

Հարկ է նշել, որ ԿԸՀ-ն վարչական կարգով ընտրական վեճի քննության ժամանակ հանդես է գալիս ոչ միայն որպես ընտրական վեճը քննող մարմին, այլև որպես մարմին, որն առանձնահատուկ իրավասությամբ է օժտված ընտրական օրենսդրության կիրառման ոլորտում: Մասնավորապես, այն օժտված է ընտրական օրենսդրության միատեսակ կիրառման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, իր լիազորությունների շրջանակներում հանրապետության ողջ տարածքում պարտադիր կատարման ենթակա որոշումներ ընդունելու (Ընտր. օր-ի 50-րդ հոդվ.), ինչպես նաև իր կողմից կիրառվող կամ ընդունված իրավական ակտերի վերաբերյալ պարզաբանումներ տալու իրավասությամբ (<<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 87-րդ հոդվ.):

Վերը թվարկած լայն լիազորությունների շրջանակը թույլ է տալիս ԿԸՀ-ն դիտարկել որպես ընտրական օրենսդրությունը պարզաբանող մարմին, ինչը, կարծում ենք, կարող է նույնիսկ խանգարել իր որոշ գործառնությունների իրականացմանը: Մասնավորապես, ընտրական վեճի քննության ընթացքում իր կողմից կիրառվող իրավական ակտի վերաբերյալ իր իսկ տված պարզաբանումը հաճախ կարող է ոչ արդարացի լինել և կողմի դժգոհության տեղիք տալ, ուստի, նմանատիպ իրավիճակները հնարավորինս նվազեցնելու համար նպատակահարմար է մշակել համարժեք իրավակարգավորումներ: Մասնավորապես, գործող իրավակարգավորման համատեքստում, կարծում ենք, որ դրա լավագույն լուծումը կարող է լինել տրված պարզաբանման համար կոնկրետ պատասխանատվության միջոց սահմանելը (օրինակ, նյութական): Այս իրավակարգավորման նախատեսումը որոշ չափով երաշխիք կհանդիսանա ԿԸՀ-ի կողմից առավել խորը, համակարգված և տեսականորեն հիմնավորված պարզաբանումների տրման համար, քանի որ իրավական ակտի վերաբերյալ պարզաբանումներ տալը ոչ թե

երկրորդական, ինչպես երբեմն ընկալվում է որպես այդպիսին, այլ ԿԸՅ-ի կարևորագույն գործառույթներից է: Այն նպաստում է միատեսակ կերպով իրավական նորմերը հասկանալուն և կիրառելուն, ինչպես նաև հասարակական կյանքի այս կարևոր ոլորտում օրինականություն և կայուն իրավակարգ ապահովելուն: Ինչպես նշվեց, այս իրավակարգավորման նախատեսումը որոշ չափով կարող է ապահովել ԿԸՅ-ի կողմից առավել հստակ և հիմնավորված պարզաբանումներ տալու գործընթաց, սակայն, մեր խորին համոզմամբ, հաշվի առնելով ընդհանրապես օրենսդրության վերաբերյալ պարզաբանումներ տալու հիմնարար նշանակությունը, առավել նպատակահարմար է օրենքով սահմանված կարգով ստեղծել մասնագիտացված մարմին, որի հիմնական գործառույթը կլինի օրենսդրության բոլոր ոլորտների վերաբերյալ պարզաբանումներ տալը, և այս գործառույթի իրականացումը սահմանափակել մյուս բոլոր մարմինների կողմից: Ընդ որում, վերոնշյալ մարմինը կարող է պարզաբանումներ տալ ինչպես շահագրգիռ կողմի, այնպես էլ համապատասխան պետական մարմնի խնդրանքով: Նմանատիպ իրավակարգավորման պարագայում, ԿԸՅ-ն ընտրական վեճի քննության ընթացքում հանդես կգա որպես անաչառ առյան և վերջինիս լիազորությունների շրջանակը համահունչ կլինի իր իրավական կարգավիճակին:

ԿԸՅ-ն համապետական ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո երեք ամսվա ընթացքում ընտրությունների կազմակերպման և անցկացման, Ընտր. օր-ի խախտումների վերլուծության, առաջարկվող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ հաղորդագրությամբ հանդես է գալիս ՀՀ Ազգային ժողովում, ինչպես նաև կարող է դիմել ՀՀ կառավարությանը՝ ընտրական գործընթացի կազմակերպման բարելավմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների մասին առաջարկություններով:



Այս ամենը թույլ է տալիս նշել, որ ԿԸՅ-ն հանդիսանում է ընտրական օրենսդրության կիրառման ոլորտում հիմնական պետական մարմինը, այդ պատճառով էլ նրա առաջնահերթ խնդիրն է ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները քաղաքացիների ընտրական իրավունքների իրացման համար, ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ այդ իրավունքների պաշտպանության, հատկապես, ընտրական վեճերի քննության և լուծման ընթացքում: ԿԸՅ-ն պետության և հասարակության առջև պարտավոր է ապահովել օրինականությունն՝ ընտրելու և ընտրվելու իրավունքների իրացման ընթացքում, և դա պարտավոր են հաշվի առնել ԿԸՅ բոլոր անդամները, քանի որ հետազոտությունները վկայում են, որ ՀՀ քաղաքացիների մի զգալի մասը չի հավատում առանց իրավախախտումների, ազատ և արդար ընտրությունների միջոցով իշխանությունների ձևավորման հնարավորությանը<sup>89</sup>:

Չնայած ընտրական օրենսդրության կողմից ԿԸՅ-ի գործունեությունը անկախության, թափանցիկության և ազատության հիման վրա կազմակերպելուն ուղղված ջանքերին, այնուամենայնիվ, ԿԸՅ-ում իրականացվող վարչական վարույթները հիմնականում ավարտվում են հանձնաժողովների օգտին<sup>90</sup>: Կարծում ենք, որ այս հանգամանքը խորհելու տեղիք է տալիս. արդյոք բոլոր դիմումներն ու բողոքներն իսկապես անհիմն են, թե ԿԸՅ-ն մեծ ջանք է գործադրում դրանք այդպիսին դիտարկելու համար: Ընտրական հանձնաժողովների գործունեության վերաբերյալ Գ. Հարությունյանը նույնպես իր մտահոգությունն է դրսևորել՝ մատնանշելով, որ. «... ընտրությունների ժամանակյուրաքանչյուր իրավախախտում անմիջապես ու համարժեք գնահատական պետք է ստանա: Վաղուց տարածված ճշմարտությունն է, որ ոչինչ հանցագործությանն այնպես չի խթանում, որքան

<sup>89</sup> Տե՛ս [www.GallupInternationalAssociation.com](http://www.GallupInternationalAssociation.com)

<sup>90</sup> Տե՛ս [www.elections.am](http://www.elections.am) ՀՀ ԿԸՅ պաշտոնական վեբ կայք:

անպատժելի ու թյուր նը: Այս քան խոսելով ընտրակեղծիքների բացառման մասին, տարօրինակ ձևով ընտրական հանձնաժողովները, այդ թվում ԿԸՀ-ն, կարծեք թե անտարբեր են անցնում արդեն իսկ կատարված փաստերի կողքով, ... այսպիսի վերաբերմունքի պարագայում նման խախտումները հետագայում անխուսափելիորեն կբազմապատկվեն»<sup>91</sup>: Յենց նմանատիպ երևույթներն են մեծացնում հասարակության անվստահությունը վարչական կարգով ընտրական իրավունքների պաշտպանության ընթացակարգի, ինչպես նաև, առհասարակ, Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքները որպես բարձրագույն արժեք դիտարկելու պատրաստակամության նկատմամբ: Կարծում ենք, որ այս իրողության հաշվի առնմամբ էլ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավական կարգավիճակի հստակեցման խնդիրն իր տեղն է գտել ներկայումս երկրում տեղի ունեցող սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ մասնագիտական հանձնաժողովի մշակած հայեցակարգում՝ որպես ՀՀ ընտրական համակարգի խնդրահարույց հարցերից մեկը, և մոտապագայում կհստակեցվի ՀՀ ԿԸՀ-ի սահմանադրական կարգավիճակը՝ հետագա համարժեք իրավական լուծումներով. այն է՝ ձևավորման կարգի փոփոխությամբ և լիազորությունների ծավալի սահմանափակմամբ:

Ընտրական իրավունքների արդյունավետ պաշտպանության իրականացման երաշխիքներից է ընտրական վեճերի լուծման ենթակայության հստակ սահմանումը, ինչը կարգավորված է Ընտր. օր-ի 46-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերով: Մասնավորապես, ա) տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործություններ), ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները կարող են բողոքարկվել

<sup>91</sup>Տե՛ս Գ. Հարությունյան «ՀՀ Ազգային ժողովի ընտրությունները և ընտրական իրավունքի դատական պաշտպանությունը», ՀՀ Սահմանադրական Դատարանի տեղեկագիր. 3(12) 1999թ. էջեր 10-11:

ընտրատարածքային ընտրական հանձնաժողով, բ) ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողության նկատմամբ (անգործությանը) (բացառությամբ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի և համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների ընտրության նկատմամբ արդյունքների վերաբերյալ որոշումների) կարող են բողոքարկվել ԿԸՀ, Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրության նկատմամբ արդյունքների վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել սահմանադրական դատարան: Համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների ընտրության նկատմամբ արդյունքների վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել վարչական դատարան, գ) ԿԸՀ-ի որոշումները, գործողության նկատմամբ (անգործությանը) (բացառությամբ համապետական ընտրության նկատմամբ արդյունքների վերաբերյալ որոշումների) կարող են բողոքարկվել վարչական դատարան: ԿԸՀ-ի՝ համապետական ընտրության նկատմամբ արդյունքների վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել ՀՀ սահմանադրական դատարան:

Հարկ է նշել, որ վերը նշված որոշումները, գործողության նկատմամբ (անգործությանը) վարչական կարգով կարելի է բողոքարկել նաև վարչական ակտն ընդունած (գործողության կատարած կամ անգործության դրսևորած) մարմին, սակայն եթե միաժամանակ բողոք է բերված նաև համապատասխան մարմնի վերադաս վարչական մարմին, ապա բողոքը ենթակա է քննարկման բողոքարկող ակտն ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմնում (ՎՅՎՎՕ 70-րդ հոդվ. 2-րդ մաս):

Ինչպես տեսնում ենք, գործում է «վերադաս հանձնաժողովի դիմելու» ընթացակարգը (բացառությամբ միայն դատական կարգով բողոքարկվող որոշումների), ինչն, ըստ էության, հանդիսանում է

կայացվող որոշումների օրինականության ապահովման լուրջ երաշխիք՝ վարչարարության համատեքստում:

Կարծում ենք, որ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի քննությունն ու լուծումը բացառապես դատական ասյանների կողմից արդարացված է, քանի որ դատարաններն ունեն բոլոր հնարավորությունները գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն ապահովելու համար: Վերջիններս որևէ կերպ չափազանցված չեն գործի ելքով (համենայն դեպս առավել մեծ է այդպիսի եզրահանգման հավանականությունը), իսկ հանձնաժողովներից յուրաքանչյուրն իր մասով պատասխանատու է կազմակերպված ընտրությունների որակի և արդյունքների համար, ուստի նրանց կողմից դրանց վերաբերյալ բացասական որոշման կայացումը ներկայիս իրավական մթնոլորտում քիչ հավանական է:

Ուսումնասիրելով ընտրական հանձնաժողովների կողմից ընտրական վեճերի քննության վերաբերյալ ընդհանուր դրույթները, կարելի է կարծել, որ վարչական կարգով ընտրական վեճերի քննությունը որոշակի առումով երկրորդական դեր ունի՝ ի համեմատություն դատական պաշտպանության, քանի որ Ընտր. օր-ի 46-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերի բովանդակությունից բխում է, որ ցանկացած պարագայում սուբյեկտը, առանց վարչական մարմին դիմելու, կարող է իր խախտված իրավունքը վերականգնել դատական կարգով (ինչը նաև բխում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածից), հատկապես, որ ՎՅՎՎՕ-ն սահմանում է, որ ակտը վարչական և դատական կարգով միաժամանակ բողոքարկելու դեպքում ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է (ՎՅՎՎՕ 70-րդ հոդվ. 3-րդ մաս): Ըստ էության, այս հարցի վերաբերյալ գործող օրենսդրության համեմատական վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ ընտրական իրավունքների պաշտպանության վարչական և դատական

ընթացակարգեր սահմանող նորմերի միջև առկա են ոչ իրավաչափ իրավակարգավորումներ: Մասնավորապես, սուբյեկտին տալով իր խախտված ընտրական իրավունքների վերականգնումն ապահովող մարմնի ընտրության հնարավորություն, օրենսդիրը, միաժամանակ, սահմանափակում է այդ հնարավորությունը: Խնդիրն այն է, որ ՎՅՎԿՕ-ն, բացի վերը նշված 70-րդ հոդվ. 3-րդ մասի դրույթից, նույնաբովանդակ նորմ է նախատեսում 50-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետով, որի համաձայն դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքով գործ: Միաժամանակ, ՅՅ ՎԴՕ 96-րդ հոդվածը նախատեսում է գործի վարույթը կարճելու հիմքեր, որոնց պարագայում կողմը չափեռք է գրկվի դարձյալ վարչական կարգով բողոքարկելու իր իրավունքից (օրինակ, հայցվորը կարող է հրաժարվել հայցից, քանի որ դատաքննության տևական ընթացքը չի բխում իր օրնական շահերից, և նա ցանկանում է իր խախտված իրավունքն ավելի օպերատիվ կերպով վերականգնել վարչական մարմնի միջոցով): Մինչդեռ ՎՅՎԿՕ 50-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, արդեն կարճված գործով չի թույլատրվում վարույթ վերսկսել և համապատասխան վարչական ակտ ընդունել: Թեպետ այս դեպքերում օրենքով բացառություններ սահմանելու վերապահում է արված, սակայն առայսօր որևէ բացառություն չի սահմանվել:

Ընտրական իրավունքների՝ վարչական և դատական պաշտպանության եղանակների հարաբերակցման վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ կատեսակետ, որ ընտրական օրենսդրության մեջ ափսոսելի է ներառվեն այնպիսի դրույթներ, որոնք կսահմանեն ընտրական հանձնաժողովների կողմից ընտրական վեճերի քննության առաջնահերթությունը դատարանների նկատմամբ, այսինքն ընտրական վեճի քննության համար դատարան

կարելի է դիմել միայն վարչական մարմնի կայացրած որոշման և դիմող սուբյեկտի՝ այդ որոշման հետ համաձայն չլինելու դեպքում<sup>92</sup>: Այլ կերպ ասած, վարչական կարգով բողոքարկման միջոցները սպառելուց հետո միայն անձն ընտրական վեճով դատարան դիմելու իրավունք կունենա: Ըստ հեղինակի, դա կթեթևացնի նաև դատարանների ծանրաբեռնվածությունը, քանի որ այդ դեպքում շատ դատական հայցեր կարող են և չհարուցվել: Սակայն այս տեսակետի հետ չի կարելի համաձայնվել, քանի որ այն համահունչ չէ հայրենական իրավական կարգավորումների հետ. այդ դեպքում օրենքը, նման դրույթ պարունակելով, ուղղակի կհակասի Սահմանադրության 19-րդ հոդվածին, որի համաձայն յուրաքանչյուր ոք իր խախտված իրավունքները դատական կարգով վերականգնելու իրավունք ունի: Ինչպես տեսնում ենք, մարդու իրավունքների պաշտպանության և վարչական, և դատական եղանակները կոչված են լրացնելու միմյանց՝ ի բարօրություն մարդուն և քաղաքացուն, ուստի և ընտրական հանձնաժողովների կողմից ընտրական վեճերի լուծումը պետք չէ ստորադասել դատական կարգով վեճերի լուծմանը, քանի որ ընտրական վեճերի վարչական կարգով լուծումը հանդիսանում է քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության իրավական միջոցների ինքնուրույն տեսակ, իսկ թե դրանցից որն է առաջնայինը՝ դատական, թե վարչական պաշտպանությունը, օրենսդիրը դա թողնում է կոնկրետ դեպքում կոնկրետ սուբյեկտի հայեցողությամբ:

Ըստ էության, վերը նշված դիտարկումների հաշվի առնմամբ, կարելի է փաստել, որ վարչական մարմինների կողմից ընտրական վեճերի արդյունավետ քննության ապահովման համար օրենսդիրը, ընդհանուր առմամբ, նախատեսել է բավականին արդյունավետ ընթացակարգեր, որոնց առավել մանրամասն կանդիդատնանք

---

<sup>92</sup> Стáа Избирательное право и избирательный процесс в РФ. / отв. Ред. А. А. Вешняков-М. 2003, էջեր 507-508:

ներքևում: Սակայն ուսումնասիրման առարկան այն ոլորտի հարցերին է պատկանում, որոնց արդյունավետության ապահովումը միայն իրավական լուծումներ նախատեսելու եղանակով, գրեթե անհնար է: Այն զգալի չափով պայմանավորված է երկրում տիրող սոցիալ-քաղաքական և տնտեսական զարգացումներով: Անհրաժեշտ է ձգտել իրավական ու քաղաքական մշակույթի այնպիսի մակարդակի ձևավորման, որի պայմաններում նվազագույնի կհասցվի իշխանության ներկայացուցչական մարմինների ձևավորման գործում քաղաքական և գործարար շահերի համընկնման որևէ հնարավորություն: Դրա անմիջական հետևանքը կհանդիսանա ընտրական վեճերի արդար և թափանցիկ քննությունը՝ առկա իրավական լուծումների հետագակատարելագործմամբ:

**§2. Ընտրական հանձնաժողովների կողմից ընտրական վեճերի քննության առանձնահատկությունները**

Ընտրական գործընթացն արդյունավետ վերահսկելու, ընտրությունների նկատմամբ հանրության վստահությունը բարձրացնելու համար նպատակահարմար է, որպեսզի հստակ ընթացակարգեր սահմանվեն ընդհանրապես ընտրական համակարգի և հատկապես ընտրական հանձնաժողովներում դիմումների (բողոքների) քննության ու դրա արդյունքում պատճառաբանված որոշումներ կայացնելու ուղղված հարաբերությունների իրավական կարգավորման վերաբերյալ: Դա ծանրակշիռ

Նախադրյալներ կստեղծի այդ հանձնաժողովների պատասխանատվության բարձրացման, դրանց որոշումների վիճարկման, ինչպես նաև անձանց ընտրական իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու ուղղությամբ, քանի որ գործնականում մատնանշված ոլորտները գտնվում են խոցելի վիճակում: Այս նկատառումներից ելնելով՝ Ընտր. օր-ի 46-րդ հոդվածը սահմանում է ընտրական իրավունքների խախտման կամ հնարավոր խախտման վերաբերյալ որոշումների բողոքարկման ընդհանուր կանոններ, որոնց առկայության պարագայում ընտրական հանձնաժողովները պարտավորվում են յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ուղղորդվել միևնույն իրավական նորմերով, ինչը սահմանափակում է վերջիններիս կողմից չարաչափումներ ու կամայականություններ դրսևորելու հնարավորությունը և ապահովում է ընտրական վեճի սուբյեկտների իրավական հավասարությունը՝ իրենց ընտրական իրավունքների պաշտպանությունն իրականացնելիս<sup>93</sup>:

Ընտր. օր-ի 45-րդ, 46-րդ, 47-րդ հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ վարչական կարգով ընտրական վեճերը լուծելիս օրենքը հստակ սահմանում է. ա) դիմումի (բողոքի) տրման և ընդունման կարգը, բ) դիմումի (բողոքի) ձևն ու բովանդակությունը, գ) շահագրգիռ կողմերին՝ հանձնաժողովի կողմից ընտրական վեճի քննության վերաբերյալ նիստին ներկա գտնվելու ծանուցման կարգը, դ) ընտրական հանձնաժողովի իրավագործությունը, ե) ընտրական վեճի քննության և որոշում կայացնելու կարգը, զ) որոշման ուժի մեջ մտնելու կարգը և այլն:

Նախքան այս հարցերի քննարկմանն անդրադառնալը, հարկ է նշել, որ Ընտր. օր-ի 45-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է

<sup>93</sup> St'u Compendium of international standards for election Second edition, European Commission, Printed by Elanders Graphic Systems AB, Brussels. 2007. Էջեր 43-58:



<<Վարչարարություն հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում, իսկ ՎՅՎԿՕ համաձայն վարչական վարույթ հարուցելու հիմքերն են. ա) անձի դիմումը, բողոքը, բ) վարչական մարմնի նախաձեռնությունը (ՎՅՎԿՕ 30-րդ հոդվ. 1-ին մաս):

Ինչպես տեսնում ենք, օրենքը հստակ տարանջատում է <<դիմում>> և <<բողոք>> հասկացությունները, մատնանշելով, որ վարչական վարույթը կարող է հարուցվել դիմումը կամ բողոքը վարչական մարմնում ստանալու օրվանից... (ՎՅՎԿՕ 30-րդ հոդվ. 2-րդ մաս): Ենթադրվում է, որ նույն տրամաբանությունն է գործում նաև Ընտր. օր-ում, որտեղ կիրառվում է <<դիմում (բողոք)>> ձևակերպումը, ինչը նշանակում է, որ կոնկրետ դեպքում պետք է կիրառել կամ <<դիմում>> կամ <<բողոք>> հասկացությունները:

Ընդհանուր առմամբ, ինչպես արդեն վերը նշվել է, <<բողոքը>> անձի (\$իզիկական անձ, իրավաբանական անձ) դիմումն է հանրային իշխանություն իրականացնող մարմին կամ դրա պաշտոնատար անձի՝ իր խախտված իրավունքների և շահերի պաշտպանության խնդրով, իսկ <<դիմումը>> ենթադրում է անձի պահանջը համապատասխան մարմին՝ Սահմանադրությանը և օրենքով նախատեսված իր իրավունքների իրացման կապակցությամբ: Այլ կերպ ասած, դիմում ներկայացնելը չի ենթադրում խախտված իրավունքի պարտադիր առկայություն, իսկ բողոքարկումը՝ կայացված որոշման հետ համաձայն չլինելու դեպքում դրսևորվող համարժեք գործողությունն է: Սակայն, ուսումնասիրելով ընտրական հանձնաժողովների կողմից քննվող վարչական վարույթները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները<sup>94</sup>, հաճախ հանդիպում ենք ինչպես դիմումների,

<sup>94</sup> Տե՛ս ԿԸՀ 21.02.2013թ. <<Քաղաքացի Գևորգ Կալեչյանի դիմումի քննության մասին>>. 56-Ա որոշում, ԿԸՀ 06.03.2013թ. <<Քաղաքացի Տիգրան Եգորյանի բողոքի քննության մասին>>. 68-Ա որոշում, ԿԸՀ 28.02.2013թ. <<Հանրապետության նախագահի թեկնածու

բողոքների, այնպես էլ դիմում-բողոքների: Սա, մեր կարծիքով, ճիշտ է, քանի որ օրենսդրությունը <<դիմում-բողոք>> ձևակերպում չի նախատեսում: Ուստի, անհրաժեշտ է, որ ընտրական հանձնաժողովները ոչ միայն իրենք գերծմնան նմանատիպ սխալ ձևակերպումների կիրառումից, այլ և դիմողի կողմից ներկայացված նմանատիպ դրսևորումները շտկեն՝ որպես ձևական սխալ, իսկ օրենսդիրը պետք է որոշակի տարբերակում սահմանի <<դիմում>> և <<բողոք>> եզրույթների իմաստային նշանակության վերաբերյալ, որպեսզի դրանք երբևէ չնույնացվեն, և հանձնաժողովներն էլ նմանատիպ սխալներ թույլ տալու հնարավորություն չունենան:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ ընտրական հանձնաժողովը կարող է իր նախաձեռնությամբ նույնպես վարույթ հարուցել: Դա իրականացվում է ինչպես իր նախաձեռնությամբ, այնպես էլ անհրաժեշտության դեպքում հանձնաժողովին ուղղված հաղորդումների հիման վրա, երբ ընտրական գործընթացի ցանկացած փուլում, ստանալով ընտրական գործընթացը խաթարող երևույթի առկայության վերաբերյալ հաղորդում, հնարավորություն ունի վարչական վարույթ հարուցելու միջոցով ուսումնասիրել փաստերը և կանխել հակաիրավական գործողությունը: Այս հանգամանքը, կարծում ենք, լրացուցիչ երաշխիք է ոչ միայն ընտրախախտումների բացահայտման և վերացման, այլ նաև ընտրական հանձնաժողովների, որպես ընտրական գործընթացների նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական մարմինների հեղինակության աճի, հասարակության վստահության բարձրացման ուղղությամբ:

Ընտրական հանձնաժողով դիմում (բողոք) ներկայացնելու հիմք է հանդիսանում ընտրական իրավունքի սուբյեկտի համոզմունքն այն մասին, որ ընտրական հանձնաժողովը խախտել է

---

Րաֆֆի Կ. Յովհաննիսյանի վստահված անձ Լուսինե Պետրոսյանի դիմում-բողոքի քննության մասին>>. 63-Ա որոշում:

կամ կարող է խախտել իր ընտրական իրավունքը: Ընդ որում, բողոքի քննության օպերատիվության նիցել նեյով, հարկ է, որ դիմումի մեջ հստակ նշվի, թե ինչում է կայանում իրավունքի խախտումը, և ընտրական օրենսդրության ինչպիսի նորմեր չեն կիրառվել:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, թե ինչպիսի ժամկետներում կարող է շահագրգիռ կողմը դիմել ընտրական հանձնաժողով՝ իր խախտված իրավունքի վերականգնման, այսինքն ընտրական վեճի լուծման համար, ապա Ընտր. օր-ը համալիր կերպով անդրադարձել է այս խնդրի կարգավորմանը: Մասնավորապես, Ընտր. օր-ի 46-րդ հոդվածի 9-րդ մասը ընտրական վեճերի քննության համար նախատեսված ժամկետները սահմանելիս տարբերակված մոտեցում է ցուցաբերել՝ կախված բողոքարկվող որոշումը կայացրած հանձնաժողովի տեսակից, և յուրաքանչյուր դեպքի համար սահմանել կոնկրետ ժամանակահատված: Օրինակ, տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողության նեների և անգործության մասին բողոքները կարող են ներկայացվել համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով օրացուցային երկու օրվա ընթացքում, իսկ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողության նեների և անգործության մասին բողոքները կարող են ներկայացվել ԿԸՅ՝ օրացուցային երեք օրվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին..... և այլն:

Այնհայտ է, որ գործող Ընտր. օր-ը, ի տարբերություն նախորդի, բավականին մանրամասնորեն սահմանում է խախտված ընտրական իրավունքների վերաբերյալ ընտրական հանձնաժողովներ ներկայացվող դիմումների (բողոքների) ընդունման և դրանց քննարկման համար նախատեսված ժամկետները, ինչը բխում է նաև ԿՅԿԿՕ-ից, որն ամրագրում է <<արագ գործելու>> սկզբունքը (ԿՅԿԿՕ 36-րդ հոդվ.): Եվ իսկապես, ընտրական գործերով վարչական վարույթը

պետք է արագ ընթացք ունենա, ինչը, միևնույն ժամանակ, չպետք է ընտրական իրավունքների խախտումներին նպաստող գործոն հանդիսանա: Ճիշտ է, հստակ ժամկետների նախատեսումը նպաստում է ողջ ընտրական գործընթացի կայունության ապահովմանն ու ընտրական հանձնաժողովների աշխատանքների բնականոն ընթացքին, սակայն մյուս կողմից, այդ ժամկետների սահմանումն առանց վերականգնման հնարավորության, կարող է էական վնաս հասցնել քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության երաշխավորվածությանը, ինչպես նաև հանձնաժողովների կողմից ընթացակարգային նորմերի կատարմանը, հատկապես, որ ընտրական վեճերը՝ պետության համար այնպիսի կարևոր հարցերի կապակցությամբ կարող են առաջանալ, որոնց լուծման համար անհրաժեշտ է առավել խորն ու համակողմանի ուսումնասիրության ապահովում և հիմնավորված որոշումների կայացում:

Պրակտիկայի ուսումնասիրություննը ցույց է տալիս, որ այն զերծ չէ նմանատիպ իրավախախտումներից, որոնք թույլ են տրվում մի կողմից շտապողականության, մյուս կողմից էլ սեղմ ժամկետները չարաչափելու պատճառով: Մասնավորապես, թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով մի քանի ընտրական տեղամասերում ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումներ կայացնելու համար դիմողը ստիպված է եղել դիմումն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամին հանձնելու վերջինիս տան բակում, քանի որ հանձնաժողովի անդամներն ընտրական հանձնաժողովում խուսափել են դիմումն ընդունել մինչև քվեարկության հաջորդ օրվա ժամը 18.00-ը, ինչպես որ սահմանված է ընտրական օրենսդրությամբ, որպեսզի դիմողն այլևս հնարավորություն

չ ու ն ե ն ա դ ր Ի մ ու մ ն երկայ աց ն ել <sup>95</sup>: Ի ն չ ա ք ս տ Ե ս ն ու մ Ե ն ք, ը ն տր ա տ ա ր ա ծ ք ա յ ի ն ը ն տր ա կ ան հ ան ձ ն ա ժ ո ղ ո վ ը մ Ի ա ժ ա մ ան ա կ մ Ի ք ան Ի խ ա Խ ա ու մ Ե թ ու յ լ տ վ ե լ : Ն ա Խ ս, փ ո Ր ծ Ե լ Ե Խ ո չ ը ն դ ո տ Ե լ դ Ի մ ու մ ա տ ու Ի կ ո ղ մ Ի ց դ Ի մ ու մ Ի ն երկայ աց մ ան ը, Երկրորդ, դ Ի մ ու մ ն ը ն դ ու ն ե լ Ե հ ան ձ ն ա ժ ո ղ ո վ Ի ան դ ամ Ի տ ան ք ա կ ու մ, մ Ի ն չ դ Ե ռ օր Ե ն ք ը հ ս տ ա կ ս ա հ մ ան ու մ Ե, որ վ ար չ ա կ ան վ ար ու յ թ ը հ ամ ար վ ու մ Ե հ ար ու ց վ ա ծ` հ ամ ա պ ա տ ա ս Խ ան դ Ի մ ու մ ը կ ամ ք ո ղ ո ք ը վ ար չ ա կ ան մ ար մ ն ու մ, տ վ յ ա լ դ Ե ա ք ու մ ը ն տր ա տ ա ր ա ծ ք ա յ ի ն ը ն տր ա կ ան հ ան ձ ն ա ժ ո ղ ո վ ու մ, ս տ ան ա կ ու օր վ ան Ի ց (Վ Յ Վ Վ Օ 30-ր դ հ ո ղ վ. 2-ր դ մ ա ս): Ու ս տ Ի կ ար ծ ու մ Ե ն ք, որ օր Ե ն ս դ Ի Ր ն ան ձ Ի ն ա ք տ ք Ե ժ ա մ կ Ե տ Ի ք ա ց թ ո ղ ու մ ը ք ո ղ ո ք ար կ Ե լ ու հ ն ար ա վ ո Ր ու թ յ ու ն ը ն ձ Ե ռ Ի:

Իր Ե ն ց Ի Ր ա վ ու ն ք ն Եր Ի ա ղ տ պ ան ու թ յ ան հ ամ ար ը ն տր ա կ ան հ ան ձ ն ա ժ ո ղ ո վ ն Եր դ Ի մ ա ժ ս ու ք յ Ե կ տ ն Եր Ի շ ա հ Եր Ի ց Ե ք Խ ու մ ն ա ն ա յ ն, որ Ը ն տր. օր-ը հ ս տ ա կ ս ա հ մ ան ու մ Ե դ Ի մ ու մ Ի ն ն երկայ աց վ ո ղ ա պ ա հ ան ջ ն Եր ը (Ը ն տր. օր. 47-ր դ հ ո ղ վ. 2-ր դ մ ա ս), դ Ի մ ու մ Ի մ Ե ջ ա ռ կ ա ձ ն ա կ ան ս Խ ա լ ն Եր Ի վ Եր ա ց մ ան հ ն ար ա վ ո Ր ու թ յ ու ն ը (Ը ն տր. օր. 47-ր դ հ ո ղ վ. 3-ր դ մ ա ս), դ Ի մ ու մ Ի ք ն ն ու թ յ ան տ Ե ղ Ի և ժ ա մ ան ա կ Ի վ Եր ա ք Եր յ ա լ ծ ան ու ց մ ան կ ար գ ը (Ը ն տր. օր. 45-ր դ հ ո ղ վ. 2-ր դ մ ա ս) և ա յ լ ն:

Ա կ ն հ ա յ տ Ե, որ ա յ ս ն ո Ր մ Եր Ի ա մ ր ա գր մ ա մ ք ս ա հ մ ան ա փ ա կ վ ու մ Ե ը ն տր ա կ ան հ ան ձ ն ա ժ ո ղ ո վ ն Եր Ի կ ո ղ մ Ի ց վ ար չ ար ար ու թ յ ան ը ն թ ա ց ք ու մ կ ամ ա յ ա կ ան ու թ յ ու ն ն Եր Ի դ Ր ս ն ո Ր մ ան հ ն ար ա վ ո Ր ու թ յ ու ն ն ու ա պ ա հ ո վ վ ու մ Ե ան ձ ան ց` Իր Ե ն ց ը ն տր ա կ ան Ի Ր ա վ ու ն ք ն Եր Ի ար դ յ ու ն ա վ Ե տ ա ղ տ պ ան ու թ յ ու ն Ի Ր ա կ ան ց ն Ե լ ու ն ու ղ ղ վ ա ժ մ Ի ջ ո ց ն Եր Ի վ Եր ա ք Եր յ ա լ Ի Ր ա գ Ե կ լ Ի ն Ե լ ու Ի Ր ա վ ու ն ք ը:

Ա ռ ա ջ Ի ն հ ա յ ա ց ք Ի ց թ վ ու մ Ե, թ Ե ս ր ան ք գ ու տ կ ա գ մ ա կ Եր ա չ ա կ ան հ ար ց Եր Ե ն և Ե ա կ ան ն շ ան ա կ ու թ յ ու ն չ Ե ն կ ար ո ղ ու ն Ե ն ա լ ը ն տր ա կ ան վ Ե ճ Ի լ ու ծ մ ան գ ո Ր ծ ը ն թ ա ց ու մ: Ա յ ն ու ա մ Ե ն ա յ ն Ի վ, ն մ ան ա տ Ի ա հ ար ց Եր Ի ո չ հ ս տ ա կ օր Ե ն ս դ Ր ա կ ան ա մ ր ա գր ու մ ը ն ա փ ս Ի ն ու մ

<sup>95</sup> Տ Ե՛ւ Կ Ը Յ 06.03.2013թ. <<Իրավունքի Եվրոպա միավորում>> Հասարակական կազմակերպության դիտորդների բողոքի քննարկման մասին >> 67-Ա ո Ր ո շ ու մ:

բազմաթիվ կամայ ականու թյուկների և չարաչափ ու մեների պատճառ է դարձել, առաջացրել է ընտրողների դժգոհությունը, ինչն, ինքնին, վարչական վարույթի նկատմամբ անվստահությունն ձևավորելու նախադրյալ է հանդիսացել:

Չարկ է նշել, որ Ընտր. օր-ով հստակ սահմանվում է ընտրական հանձնաժողովների նիստի իրավագործության և որոշումներ ընդունելու կարգը: Որպես կանոն, ընտրական հանձնաժողովի նիստն իրավագործ է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների կեսից ավելին, իսկ որոշումներն ընդունվում են, եթե կողմ է քվեարկել նիստին ներկա հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, օրինակ, Չանրապետության նախագահի թեկնածուի գրանցումը մերժվում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով (Ընտր. օր-ի 82-րդ հոդվ. 2-րդ մաս) և այլն: Ընտրական հանձնաժողովի կազմին կամ հանձնաժողովի անդամին վարույթի մասնակիցները չեն կարող բացարկ հայտնել, իսկ վարչական վարույթն իրականացնող ընտրական հանձնաժողովի անդամն ինքնաբացարկ հայտնելու իրավունք չունի:

Ինչ վերաբերում է ընտրական հանձնաժողովների՝ բերված բողոքի վերաբերյալ կայացված որոշումների բովանդակությանը, ապա Ընտր. օր-ը դրանց չի անդրադառնում, սակայն ելնելով վերջինիս 45-րդ հոդվածի 1-ին մասից, ըստ որի ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է ՎՅՎՎՕ-ին համապատասխան, ընտրական օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում, ընտրական հանձնաժողովը, ելնելով բողոքարկված վարչական ակտի իրավաչափության, իսկ հայեցողական լիազորության իրականացման դեպքում նաև նպատակահարմարության տեսնկյունից, իրավասու է:

1) բավարարել ու բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ ճանաչելով վարչական ակտն անվավեր կամ առնչինչ, կամ ընդունել նոր վարչական ակտ,

2) մերժել ու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ (ՎՅՎՎՕ 76-րդ հոդվածի 1-ին մաս):

Եթե վարչական ակտը բողոքարկվել է վարչական ակտն ընդունած մարմնի վերադաս վարչական մարմին, տվյալ դեպքում վերադաս ընտրական հանձնաժողով, ապավերը նշված որոշումներից բացի վերադաս հանձնաժողովն իրավասու է ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել գրավոր վարչական ակտը և հանձնարարել վարչական ակտն ընդունած ստորադաս ընտրական հանձնաժողովին՝ ընդունել ու նոր վարչական ակտ (ՎՅՎՎՕ 76-րդ հոդվածի 4-րդ մաս):

Նույն կարգն է գործում նաև հանձնաժողովի գործողության կամ անգործության բողոքարկման դեպքում:

Ինչպես տեսնում ենք, գործող ընտրական օրենսդրությունը հնարավորություն է տալիս վերադաս հանձնաժողովին՝ ստորադաս հանձնաժողովի կայացրած որոշումն ամբողջովին անվավեր ճանաչել և կայացնել նոր որոշում: Այս մոտեցումը պաշտպանվում է նաև իրավաբանական գրականության մեջ<sup>96</sup>, քանի որ վարչական վարույթի առաջնակի խնդիրն է հանդիսանում գործի օպերատիվ քննության ապահովումը, իսկ նոր որոշում ընդունել ու իրավասության բացակայության դեպքում, նույնիսկ, եթե վերադաս ընտրական հանձնաժողովը բեկանի ստորադաս հանձնաժողովի որոշումը և ուղարկի նոր որոշում կայացնել ու, սա անհարկի կձգձգի վեճի լուծումը՝ հատկապես ընտրական գործընթացի սեղմ ժամկետների պայմաններում: Օրինակ, վերը նշվածից ելնելով, կարելի է նշել, որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով

<sup>96</sup>Տե՛ս Туманова Л. В., Туманов М. А. Избирательный процесс в Российской Федерации, социологические и политико-правовые аспекты.-М., 2004. Էջ 362:

պատգամավորի գրանցումը մերժելու վերաբերյալ որոշումը Կենտրոնական ընտրական հանձնաժողով բողոքարկելու դեպքում, ԿԸՀ-ն իրավասու է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած ակտը վերացնել և պատգամավորի թեկնածուն ին գրանցելու վերաբերյալ որոշում ընդունել:

Այդուհանդերձ, օրենսդրություները վերադաս հանձնաժողովին հնարավորություն է ընձեռում նաև վարչական ակտը բեկանել և վերադարձնել ստորադաս հանձնաժողով, քանի որ կարող են լինել դեպքեր, երբ ներկայացված բողոքով պահանջվի վեճի նոր քննություն հենց որոշումը կայացրած ստորադաս հանձնաժողովում, քանի որ Ընտր. օր-ը որդեգրել է <<վերադաս հանձնաժողով բողոքարկելու >> սկզբունքը:

Ինչ վերաբերում է ընտրական հանձնաժողովների կայացրած որոշումների ուժի մեջ մտնելուն, ապա դասահմանված է Ընտր. օր-ի 45-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով, ըստ որի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդունած վարչական ակտն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելուց հետո՝ հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրելու պահից, իսկ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած վարչական ակտն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելուց հետո՝ հանձնաժողովում բոլորի համար տեսանելի տեղում ակտի օրինակը փակցնելու պահից:

Այսպիսով, ինչպես ողջ ընտրական գործընթացն է իրականացվում սեղմ ժամկետներում, այնպես էլ ընտրական հանձնաժողովների որոշումներն են կարճ ժամանակահատվածում ուժի մեջ մտնում, ինչը և բխում է օրենսդրի՝ արագ վարչարարություն իրականացնելու պահանջից: Սակայն կարևոր է այն հանգամանքը, որ այդ որոշումների անմիջապես ուժի մեջ մտնելը խոչընդոտ չի հանդիսանում՝ այն դատական կարգով բողոքարկելու համար:



Ամփոփելով ընտրական հանձնաժողովների կողմից ընտրական վեճերի քննության և լուծման կարգը, անհրաժեշտ է առանձնացնել դրա դրական և բացասական կողմերը: Նախ, վարչական կարգով ընտրական վեճերի լուծման արժանիքը նրա օպերատիվությամբ, այդ թվում նաև հանձնաժողովի կայացրած որոշումների անմիջականորեն ուժի մեջ մտնելու հանգամանքն է: Դրական է գնահատվում նաև այն առումով, որ ընտրական հանձնաժողովներում ընտրական վեճերի քննությունն ու լուծումն իրականացվում է այնպիսի անձանց կողմից, որոնք մասնագիտացված են ընտրափրավական հարաբերությունների ոլորտում և ունեն համապատասխան որակավորում ու փորձ՝ ընտրական օրենսդրության կիրառման ոլորտում (համենայն դեպս պետք է ունենան): Կարևոր է նաև այն հանգամանքը, որ Ընտր. օր-ը բավականին մանրակրկիտ կարգավորում է տվել այս խնդրի լուծմանն ու արդյունավետ միջոցներ է նախատեսել քաղաքացիների խախտված իրավունքների վերականգնումն ապահովելու ուղղությամբ: Սակայն այս ամենի հետ մեկտեղ, հարկ է նշել, որ վարչական կարգով իրավունքների վերականգնման համակարգը

Չայաստանի Չանրապետությունում դեռևս կայացած չէ և հասարակության անդամների վստահությունը չի վայելում: Ընտրական հանձնաժողովները հասարակության կողմից դիտվում են ոչ թե որպես անկախ մարմիններ, ինչպիսին որ պետք է լինեն գործող օրենսդրության համաձայն, այլ պետական իշխանություններ կայացնողներ: Չետևաբար, հասարակության անդամները չեն ակնկալում և չեն հավատում վերջիններիս կողմից վեճի արդար քննության և լուծման ապահովում: Դավկայում է նաև պրակտիկայի ուսումնասիրությունը, որի համաձայն, գրեթե չկան քննված ընտրական վեճերի վերաբերյալ որոշումներ, որոնք կբավարարեն դիմողի հայցը: Այս հարցին ի պատասխան՝ հաճախ ընտրական

հանձնաժողովները մատնանշում են այն հանգամանքը, որ եթե կայացված որոշման վերաբերյալ չկա դատական բողոք, հետևաբար դիմողը բավարարված է կայացված որոշմամբ<sup>97</sup>: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ մեր իրականության մեջ սառչ թե դիմող սուբյեկտի բավարարվածության, այլ ինչպես վարչական, այնպես էլ դատական մարմինների նկատմամբ անվստահության դրսևորում է<sup>98</sup>: Յետևաբար, կարելի է հանգել այն եզրակացության, որ ընտրական օրենսդրությամբ ընտրական հանձնաժողովների կողմից ընտրական վեճերի քննության համար նախատեսված առանձնահատկություններն ու երաշխիքներն անհրաժեշտ են, բայց ոչ բավարար հասարակության զարգացման ներկայիս փուլում ընտրական իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու համար: Դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ընտրական իրավունքները ոչ միայն սուբյեկտիվ իրավունքներ են, այլ նաև օժտված են առանձնահատուկ հանրային նշանակությամբ, հետևաբար, սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ ընթացակարգեր սահամանելու հետմեկտեղ անհրաժեշտ է այնպիսի մոտեցում որդեգրել, որը ոչ միայն կերաշխավորի կոնկրետ սուբյեկտի խախտված ընտրական իրավունքի արդյունավետ պաշտպանություն, այլ և կբարձրացնի ընտրական հանձնաժողովների պատասխանատվության աստիճանը: Կարծում ենք, որ նմանատիպ լավագույն միջոցն այսօր կարող է հանդիսանալ տվյալ գործընթացում մոնիթորինգի ինստիտուտի ներմուծումը, ինչը, վերը նշված գործառույթների հետմեկտեղ, կբարձրացնի ընտրական հանձնաժողովների կողմից ընտրական վեճերի քննության

---

<sup>97</sup> Տե՛ս ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Տիգրան Մուկուչյանի հարցազրույցն «Առաջին լրատվական» ծառայության «Հարցազրույց» հաղորդաշարին. 25.02.2013թ.:

<sup>98</sup> Տե՛ս Ընտրական վեճերի դատական լուծման մոնիթորինգ. ՀՀ Ազգային ժողովի 2007թ-ի մայիսի 12-ի ընտրություններ.- Ինֆորմացիայի ազատության կենտրոն (Freedom of Information Center of Armenia (FOICA):

գործընթացի նկատմամբ հասարակության վստահությունը, ինչպես նաև կնպաստի համապատասխան ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործմանը: Մոնիթորինգի ինստիտուտը համեմատաբար նոր և ժողովրդավարական ինստիտուտ է<sup>99</sup>, որը սույն համատեքստում ենթադրում է դիտորդական խմբի կողմից ընտրական վեճի քննության ընթացքում ընտրական հանձնաժողովի գործունեության արդյունավետության գնահատում, առկա թերությունների վերհանում և համակարգում ինչպես կիրառվող նորմատիվակտերում, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում, և ոլորտի կատարելագործման վերաբերյալ համապատասխան առաջարկությունների մշակում և հրապարակում: Այս գործառնությունների ապահովումը կզգաստացնի ընտրական հանձնաժողովներին և հաշվետու կդարձնի հանրության առջև: Թե ինչպիսի կազմով, ինչ կարգով պետք է ձևավորել և կազմակերպել դիտորդական խմբերի գործունեությունը, կարծում ենք, դրանք քննարկվելիք ընթացակարգային հարցեր են: Միակ նախապայմանն այն է, որ ընտրական վեճերի քննության ընթացքում անցկացվող մոնիթորինգն իրականացվի ոչ թե պետական, այլ հասարակական հիմունքներով գործող մարմինների միջոցով, որպեսզի այն պետական պատվերի բնույթ չկրի և իրավամբ ներկայացնի հանրության լայն շերտեր: Այդ պարագայում առկա կլինի հանրային հսկողություն համապատասխան պետական մարմինների գործունեության նկատմամբ, ինչը խիստ անհրաժեշտ է ինչպես գործող օրենսդրության երաշխավորման, այնպես էլ ուսումնասիրվող ոլորտում հանրության վստահության վերականգնման և քաղաքացիական հասարակության ձևավորման նախադրյալներ ստեղծելու համար:

---

<sup>99</sup> Стів Арзамасов Ю.Г., Наконечный Я.Е. Концепция мониторинга нормативных правовых актов. – М.: Юрлитинформ, 2011. Стр 5:

**§3. Ընտրական վեճերի քննությանը նույն պարզական մարմինների կողմից**

Ընտր. օր-ը, ընդհանուր առմամբ, համալիր կերպով կարգավորում է միայն ընտրական հանձնաժողովների, որպես ընտրական վեճերի քննություն և լուծում իրականացնող մարմինների գործունեությունը: Այնուամենայնիվ, ՀՀ գործող ընտրական օրենսդրության վերլուծությունից բխում է, որ ընտրական վեճեր լուծող վարչական մարմիններ են հանդիսանում ոչ միայն ընտրական հանձնաժողովները, այլ նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք, ի տարբերություն ընտրական հանձնաժողովների, մասնագիտացված չեն որպես ընտրություններ կազմակերպող, դրանց օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններ, սակայն իրենց հիմնական գործառնություններն իրականացնելու ընթացքում օրենքով սահմանված կարգով աջակցում են ընտրությունների կազմակերպմանն ու անցկացմանը, իրենց իրավասությունից բխող հարցերի շուրջ ընտրախախտումների առաջացման դեպքերում՝ իրականացնում նաև ընտրական վեճերի քննություն:

Գործող օրենսդրությամբ նախատեսված են ինչպես մի շարք պետական մարմիններ, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնց վրա դրված են ընտրությունների կազմակերպմանն ու անցկացմանն օժանդակելու պարտականություններ: Հետևաբար, այս մարմինների մասնակցությունն ընտրական գործընթացին ուղղված է

քաղաքացիների ընտրական իրավունքների իրացման ապահովմանը, որից բխում է, որ օրենսդրությամբ նախատեսված լայն լիազորությունների շրջանակներում հնարավոր է ինչպես այդ մարմինների, այնպես էլ դրանց պաշտոնատար անձանց կողմից իրենց որոշումների, գործողությունների և անգործության միջոցով քաղաքացիների ընտրական իրավունքների խախտում: Հենց նմանատիպ ընտրախախտումների արդյունքում առաջացած ընտրական վեճերի քննությունն ու լուծումը վերապահված է այս մարմինների իրավասությանը:

Անդրադառնալով այս մարմինների գործունեության վերը նշված ուղղության ուսումնասիրությանը, նախևառաջ, հարկ ենք համարում առանձնացնել ՀՀ ոստիկանության մարմինների գործունեությունը: Ընտր. օր-ի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը վարում և ընտրողների ցուցակը կազմում է բնակչության պետական ռեգիստրը վարող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը, որը և հանդիսանում է ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչությունը: Ընտրողների ցուցակները կազմվում են ըստ ընտրական տեղամասերի, որում ընդգրկվում են համապատասխան ընտրության ժամանակ տվյալ տարածքում հաշվառված՝ ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիները: Հաճախ ինում են դեպքեր, երբ ընտրելու իրավունք ունեցող անձինք ինչ-ինչ պատճառներով դուրս են մնում ընտրողների ցուցակից, ինչի արդյունքում զրկվում են ընտրություններից մասնակցելու հնարավորությունից, հետևաբար նաև իրենց ընտրական իրավունքի իրացումից: Նման դեպքերի համար Ընտր. օր-ը նախատեսում է ոչ միայն դատական, այլ նաև վարչական կարգով ընտրողների ցուցակների անճշտությունները վերացնելու և ցուցակները ճշտելու հնարավորություն: Մասնավորապես, Ընտր. օր-ի 12-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր ոք իրավունք ունի

քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտության նկատմամբ (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում ներկայացնելու և լիազորմամբ, սվյալ դեպքում ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության համապատասխան տարածքային բաժին: Լիազորմամբ դիմումը ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում, սակայն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 4 օր առաջ, սույն օրենսգրքով սահմանված բավարար հիմքերի առկայության դեպքում ընտրողների ցուցակում կատարում է անհրաժեշտ փոփոխություններ կամ ուղղումներ՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով դիմողին (Ընտր. օր-ի 12-րդ հոդվ.1-ին մաս), որից հետո դիմողին տրվում է ԿԸՀ-ի կողմից սահմանված ձևի տեղեկանք, ինչի հիման վրա տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության օրը ընտրողների ցուցակում կատարվում է լրացում:

Չնայած ընտրական օրենսդրության վերլուծությանից բխում է, որ վերը նշված ընթացակարգը օրենսդիրը չի դիտարկում որպես ընտրական վեճ, քանի որ նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ընտրողների ցուցակներում անճշտության նկատմամբ վերացման և ցուցակում լրացում կատարելու վերաբերյալ վեճերը լուծվում են ՀՀ վարչական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով, այնուամենայնիվ, կարծում ենք, որ Ընտր. օր-ի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ընթացակարգը վարչական կարգով ընտրական վեճի լուծման դասական օրինակ է, քանի որ առկա է ընտրական իրավունքի խախտում՝ այն է անձի, որպես ընտրող գրանցված չլինելու փաստը, որը թույլ է տրված պետական կառավարման մարմնի կողմից, և նախատեսված է համապատասխան մարմնի կողմից խախտումը վերացնելու ուղղված իրավական ընթացակարգ, որն ավարտվում է արտաքին ներգործության որոշման, այսինքն վարչական ակտի կայացմամբ, իսկ վարչական վարույթն, ինչպես գիտենք, վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելու և

ուղղված գործունեությունն է, որը նախատեսված է ՎՅՎԿՕ 19-րդ հոդվածով:

Ընտր. օր-ի՝ ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները վերացնելու կարգը սահմանող հոդվածն ամրագրում է մի կարևոր դրույթ, որը չափազանց արդիական նշանակություն ունի ժամանակակից ընտրական գործընթացների համար. այն է՝ ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները վերացնելու մասին դիմում կարելի է ներկայացնել նաև այն դեպքերում, երբ տեղ գտած անճշտությունները չեն վերաբերում դիմողին: Լինում են դեպքեր, երբ ընտրողների ցուցակներում ընդգրկվում են համապատասխան հասցեի՝ հանրապետությանից դուրս գտնվող, համապատասխան հասցեից տեղափոխված, ինչպես նաև մահացած քաղաքացիներ, որոնց՝ ընտրողների ցուցակներում ընդգրկվելու փաստը հող է ստեղծում կեղծ քվեարկություն իրականացնելու համար: Հայաստանի Հանրապետությունում անցկացվող յուրաքանչյուր ընտրության ընթացքում այս հարցը մեծ ինչեղություն է ստանում ինչպես քաղաքական ուժերի, այնպես էլ հասարակության շրջանակներում, ուստի վերը նշված նորմի ամրագրումը ևս մի միջոց է հանդիսանում ընտրողների ցուցակների նկատմամբ հսկողություն իրականացնելու և կեղծարարությունը կանխելու գործում:

Ընտրական գործընթացում, բացի վերը նշված գործառույթի իրականացումը, Հայաստանի Հանրապետության ոստիկանության կենտրոնական և տարածքային մարմինները, դրանց ծառայություններն ու ստորաբաժանումները պարտավոր են ապահովել ընտրությունների անցկացման բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովների ու դրանց անդամների անկաշկանդ գործունեությունը, ինչպես նաև ընտրությունների հետ կապված միջոցառումներում ապահովել պատշաճ կարգ ու կանոն և այլն: Ակնհայտ է, որ վերը նշված պարտականությունների կատարման

ընթացքում ոստիկանության ծառայողների կողմից կարող են խախտվել անձանց ընտրական իրավունքներ, որոնց պաշտպանության համար անձինք պետք է դիմեն համապատասխան ծառայողների ղեկավար մարմիններ, քանի որ նրանք տվյալ իրավահարաբերության մեջ հանդես են գալիս ոչ թե որպես քաղաքացիներ, այլ որպես պետական ծառայողներ, հատկապես որ <<Ոստիկանության մասին>> ՀՀ օրենքի<sup>100</sup> 43-րդ հոդվածը սահմանում է, որ ոստիկանության ծառայողն իր ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ծառայողական դիրքը չարաչափելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունների սահմանն անցնելու, օրենքով ուղղակի նախատեսված՝ ոստիկանության ծառայողի էթիկայի կանոնները խախտելու համար ենթարկվում է պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Ոստիկանության ծառայողի անօրինական գործողության կամ անգործության հետևանքով կազմակերպության ներքին և քաղաքացիներին պատճառված վնասը ենթակա է փոխհատուցման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությանը և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան: Ոստիկանության ծառայողների անօրինական գործողությունները կարող են բողոքարկվել վերադասության կարգով կամ դատական կարգով (<<Ոստիկանության մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվ.):

Վերը նշվածից բխում է, որ ոստիկանության ծառայողի կողմից անձի ընտրական իրավունքի խախտման դեպքում համապատասխան ծառայողի ղեկավար մարմինը կարող է հանդես գալ որպես վարչական կարգով ընտրական վեճ քննող և լուծող մարմին:

<sup>100</sup> Տե՛ս <<Ոստիկանության մասին>> ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2001.05.31/15(147):



Նույն տրամաբանությանը ներկայացվել է փաստել, որ տեղական ինքնակառավարման մարմինները նույնպես անհրաժեշտության դեպքում կարող են վարչական կարգով ընտրական վեճեր լուծել: Այսպես, ընտրական օրենսդրության համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները նույնպես պետք է աջակցություն հրականացնեն ընտրական գործընթացի ժամանակահատվածում, մասնավորապես, սահմանելով տեղամասային կենտրոններ, թեկնածուների, կուսակցությունների նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ ընտրողների հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով հավասար հիմունքներով նրանց դահլիճներ և այլ շինություններ տրամադրելով և այլն: Այս ընթացքում նույնպես կարող են կամայականությանը ու չարաչափումներ դրսևորվել՝ խախտելով այս կամ այն թեկնածուի իրավունքը, ինչը կարող է բողոքարկվել նաև վարչական կարգով:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում զանգվածային լրատվության միջոցների, որպես վարչական կարգով ընտրական վեճեր քննող և լուծող մարմիններ լինելու հանգամանքը:

Իրավաբանական գրականության մեջ կատեսակետ, որ զանգվածային լրատվամիջոցները հանդիսանում են ընտրական իրավունքի, բայց ոչ վարչական կարգով լուծվող ընտրական վեճերի սուբյեկտներ, և վերջիններիս ընտրական իրավունքները կարող են պաշտպանվել բացառապես վարչադատավարական կարգով<sup>101</sup>:

Արդեն վերը նշվել է, որ Ընտր. օր-ը, չնայած զանգվածային լրատվության միջոցներին տրված լիազորությունների լայն շրջանակին, վերջիններիս՝ ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողություններն ու անգործությունը

<sup>101</sup> Ст'и Князев С. Д., Охотников Р. А. Избирательные споры: юридическая природа и порядок рассмотрения: Монография.-Владивосток, Изд-во Дальневост. ун-та, 2005, էջ 123:

բողոքարկելու հնարավորությունն չի տալիս<sup>102</sup>, այսինքն վարչական կարգով քննվող և լուծվող ընտրական վեճի սուբյեկտ դառնալու հնարավորությունից զրկում է, ինչը բխում է վերը նշված կարծիքից, որ զանգվածային լրատվամիջոցների կողմից ընտրական իրավունքների խախտումները, կամ վերջիններիս ընտրական իրավունքների խախտումները կարող են բողոքարկվել բացառապես դատավարական կարգով: Սակայն այս երևույթը բացարձակացնել չի կարելի, քանի որ Ընտր. օր-ի՝ նախընտրական քարոզչությունը կարգավորող նորմերի բովանդակությունից բխում է, որ վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության՝ օրենքով սահմանված կարգի կատարման նկատմամբ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը իրականացնում է վերահսկողություն, այսինքն թեկնածուները, կուսակցությունները, վերը նշված հեռարձակողների կողմից իրենց իրավունքները խախտելու, օրինակ, թեկնածուներին եթերաժամ տրամադրելիս խորականություն դրսևորելու դեպքում, կարող են դիմել նշված հանձնաժողով՝ վերջիններիս կողմից իրենց խախտված իրավունքները վերականգնելու համար: Բացի այդ, «Հանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի համաձայն<sup>103</sup>՝ անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ այդ փաստերը համապատասխանում են իրականությանը, իսկ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ թեկնածուի մասին տարածված

<sup>102</sup> Տե՛ս ՀՀ Ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մաս:

<sup>103</sup> Տե՛ս «Հանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2004.01.29/6(305):

տեղեկատվության հերքումը կատարվում է 24 ժամվա ընթացքում: Եթե մինչև քվեարկության սկիզբը մնացել է ոչ ավելի, քան 24 ժամ, ապա հերքումը կատարվում է դրա մասին պահանջն ստանալու և պես (<<Չանգվածային լրատվության մասին>> 33 օր. 8-րդ հոդվ.):

Այն հայտ է, որ այս տեղն ունյալ պես առկա է ընտրական վեճ, որը կարող է լուծվել վարչական կարգով: Սակայն մասնագիտական գրականության մեջ կատեսակետ, որ զանգվածային լրատվամիջոցների մասնակցությամբ վեճերը ոչ թե ընտրական, այլ <<տեղեկատվական վեճեր>> են հանդիսանում<sup>104</sup> և դրանց լուծումը իրականացվում է վարչական օրենսդրության համաձայն՝ վարչարարությունն իրականացնելու միջոցով:

Մեկ այլ մոտեցմամբ էլ ընտրությունների ընթացքում զանգվածային լրատվամիջոցների մասնակցությամբ վեճերը կոչվում են ընտրական-տեղեկատվական վեճեր<sup>105</sup>, որոնք կապված են ընտրությունների ժամանակ տեղեկատվության ապահովման ընթացքում ընտրական իրավունքների խախտման հետ<sup>106</sup>:

Անկախ այն հանգամանքից, թե հեղինակները վեճերն ինչ անուններով կկոչեն, դրանց էությունը չի փոխվում, քանի որ յուրաքանչյուր դեպքում առկա է ընտրական իրավունքի խախտում, և անկախ այն հանգամանքից, թե որ մարմնի կողմից է թույլ տրվել խախտումը, և թե ինչ պիսի պատասխանատվության միջոց պետք է կիրառել, տվյալ վեճը համարվում է ընտրական: Ուստի վերը նշվածից բխում է, որ զանգվածային լրատվամիջոցների ղեկավար վարչական մարմինները կարող են լինել ընտրական վեճեր քննող և լուծող մարմիններ, եթե վերջիններիս ներկայացուցիչների

<sup>104</sup> Տե՛ս . Головин А. Г. Избирательное право и избирательный процесс в Российской Федерации: Норма. М., 2009. Էջ 494:

<sup>105</sup> Տե՛ս Чилингарян А. М. <<Защита избирательных прав граждан Республики Армении>>. Диссертация кандидата юридических наук. Москва-2010. Էջ 46:

<sup>106</sup> Տե՛ս Большаков С. В., Головин А. Г. Информационное обеспечение выборов и референдумов в Российской Федерации. 2-е издание, перераб. и доп., М. РЦОИТ, Изд-во Весь мир, - М. 2007, Էջ 102:

կողմից խախտվել են ընտրողների, թեկնածուների, կուսակցությունների ընտրական իրավունքները՝ հաշվի առնելով վերը նշված օրենսդրական նորմերի առանձնահատկությունները:

Ամփոփելով պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընտրական վեճերի քննության և լուծման առանձնահատկություններին վերաբերող հարցերի ուսումնասիրությունը, նշենք, որ այս քանակով այս մարմինների շրջանակը չի սահմանափակվում, պարզապես մեր կողմից առանձնացվել են հատկապես վերը նշվածներն այն նկատառումից ելնելով, որ դրանց գործունեության ընթացքում առավել հաճախ են առաջանում ընտրական վեճեր, և այս մարմինների կողմից ընտրական վեճերի քննության և լուծման վերաբերյալ որոշ չափով առկա է ձևավորված իրավակիրառ պրակտիկա:

Ընդհանրապես, հետազոտությունը բերում է այն համոզման, որ վարչարարության ցանկացած ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների խախտման առնչությամբ վեճերը չեն կարող ենթակալիս ել բացառապես մեկ պետական մարմնի իրավասությանը: Արդի պետական համակարգն առանձնանում է ակնհայտ բարդ կառուցվածքով, գործառույթների առավել բազմաթիվ կազմով, պետական կառավարման յուրաքանչյուր խնդիր հնարավորինս մասնագիտական պատշաճ մակարդակով լուծելու ընթացակարգերով և այլն: Բոլոր այս գործոնները հանգեցնում են նրան, որպեսզի նախապատվությունը տրվի պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմնում ծագած վեճի արդյունավետ քննությանը, ինչը հնարավոր է միայն այն դեպքում, երբ տվյալ մարմինն առնվազն օժտված է հետևյալ որակներով՝ ա) վերջինիս վերապահված են համարժեք լիազորություններ սպառիչ վարչարարություն իրականացնելու համար (խիստ հազվադեպ պետք է լինի վարչական փոխօգնության

ինստիտուտի կիրառման անհրաժեշտությունը), բ) վեճը քննող մարմինը պետք է տիրապետի անհրաժեշտ տեղեկատվության, գ) վեճի լուծման հետառնչվող պաշտոնյաները պետք է լինեն սվյալ հարցի առնչությամբ առավել արհեստավարժներ:

Ակնհայտ է, որ վերը նշված որակներով ընտրական հանձնաժողովները, միանգամայն օբյեկտիվ պատճառներով, միշտ է, որ բավարար չափով օժտված են: Յետևաբար, Յայաստանի Յանրապետության ներկայիս սոցիալ-տնտեսական, իրավաբանական պայմաններում, կարծում ենք, որ նախընտրելի է ընտրական վեճերի՝ վարչական կարգով քննության գործող տարբերակը: Պարզապես, ընտրական իրավունքների պաշտպանության պաշտած համակարգի երաշխավորման տեսանկյունից, նպատակահարմար է ընտր. օր-ում հղում կատարել համապատասխան օրենսդրությանն այն բոլոր դեպքերում, երբ ներկայացվող գործի քննության առանձնահատկությունները սահմանված են այդ օրենսդրությամբ<sup>107</sup>, քանի որ ընտրական հարցերով բողոքարկման գործընթացի ընդհանուր կանոնները պահանջում են, որպեսզի վերջիններս լինեն թափանցիկ ու հեշտընկալելի<sup>108</sup>:

Սակայն այս ամենից զատ, կոնկրետ ընտրական վեճերի քննության պարագայում էական նշանակություն ունի ընտրական հանձնաժողովների անկախությունը, ուստի վերջիններս պետք է օժտված լինեն այնպիսի մարդկային ու կազմակերպարարական ներուժով, ինչը հնարավորություն կտա քննելու այն վեճերը, որոնց դեպքում վեճը քննող մարմնի կարգավիճակն ինքնին մեծ կարևորություն է ձեռք բերում:

<sup>107</sup> Տե՛ս Ծաթիրյան Է., Մանասյան Ա., Յովհաննիսյան Ա. «Ընտրական օրենսդրության արդի հիմնահարցերը և զարգացման հեռանկարները Յայաստանի Յանրապետությունում», Չանգակ հրատ., Երևան-2013, էջ 177

<sup>108</sup> Տե՛ս «Resolving Election Disputes in OSCE Area: Towards a Standard Election Dispute Monitoring System», Office for Democratic Institutions and Human Rights, <http://www.osce.org/odihr/elections/17567>

ԳԼՈՒԽ 3. ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**§1. ՀՀ վարչական դատարանի կողմից ընտրական վեճերի քննության  
սահմաններն ու առանձնահատկությունները**

Մարդու և պետության միջև հարաբերությունների զարգացմանը համընթաց պետությունը մշակել է մարդու իրավունքների դատական պաշտպանության ապահովման առավել ճկուն ընթացակարգեր, որոնք ուղղված են այդ իրավունքների արդյունավետ իրացմանը: ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներից բխում է, որ Հայաստանի Հանրապետությունում նույնպես մարդու իրավունքները ենթակա են դատական պաշտպանության, ինչն ուղղակի կերպով արտացոլված է նաև Ընտր. օր-ում՝ ընտրական իրավունքով օժտված ՀՀ քաղաքացիներին և ՀՀ քաղաքացիություն չունեցող՝ ընտրական իրավունքով օժտված անձանց ընտրական իրավունքների դատական պաշտպանության ընթացակարգեր ամրագրելու միջոցով: Ընտրական վեճերի՝ դատական կարգով քննությունն ու լուծումն, ըստ էության, հանդիսանում է ընտրական իրավունքների դատական պաշտպանության գործունե միջոց, որի այսօրվա օրենսդրական կարգավորումն ունի բավականին խորը արմատներ, և մի քանի տասնամյակներ տևած զարգացումների արդյունք է:

Այսպես, դեռևս 1964թ. Սոցիալիստական Հայաստանի Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը թույլ էր տալիս դատական կարգով գանգատարկել միայն ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները: Այնուհետև, Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո ձևավորված ընտրական

օրենսդրությամբ, որը ներառում էր «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընտրության մասին», «Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրության մասին», «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության մասին» ՀՀ օրենքները, իսկ 1995թ. փետրվարի 5-ից ՀՀ ընտրական օրենսգիրքը (վերջինիս ուժի մեջ մտնելու պահից նախկին երեք օրենքներն ուժը կորցրած են ճանաչվել), ընդհանուր առմամբ, սահմանվում էր ընտրությունների կազմակերպման, անցկացման, արդյունքների ամփոփման հետ առնչվող բոլոր մարմինների և պաշտոնատար անձանց որոշումների, գործողությունների (անգործության)՝ հատուկ հայցային վարույթի կարգով վիճարկելու հնարավորություն, այսինքն ընտրական իրավունքների խախտման վերաբերյալ վեճերը լուծվում էին ընդհանուր իրավասության դատարանների կողմից՝ քաղաքացիական դատավարության կանոններին համապատասխան:

Այնուհետև, դատաիրավական բարեփոխումների իրականացման շրջանակներում ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի ընդունմամբ և վարչական դատարանի ստեղծմամբ, կատարվեց արմատական փոփոխություն՝ ընտրական իրավունքների պաշտպանության վերաբերյալ գործերի դատական պաշտպանության իրականացումը հանձնվեց վարչական դատարանի իրավասությանը (վերը նշվածը չի վերաբերում այն ընտրական վեճերին, որոնց քննությունն ու լուծումը բացառապես իրականացվում է Սահմանադրական դատարանի կողմից)՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ վարչական արդարադատության հիմնական նպատակաուղղվածությունը մարդու իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանությունն է: Սա, ըստ էության, օրենդրի կողմից դրսևորած նորարարություն էր, ինչն իր արտացոլումը գտավ 2011թ. մայիսի 26-ին ընդունված նոր ՀՀ ընտրական օրենսգրքում, որը և հստակ կերպով ամրագրեց դատական

կարգով քննվող և լուծվող ընտրական վեճերի ենթակայ ության կարգը: Մասնավորապես, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողության ունենեքը (անգործության ունը) (բացառությամբ համապետական ընտրության ունենեքի արդյունքների վերաբերյալ որոշումների) կարող են բողոքարկվել վարչական դատարան: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ համապետական ընտրության ունենեքի արդյունքների վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել սահմանադրական դատարան: Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրության ունենեքի արդյունքների վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել սահմանադրական դատարան: Յուրաքանչյուրի դեկավարի ու ավագանու անդամների ընտրության ունենեքի արդյունքների վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել վարչական դատարան:

Ինչպես տեսնում ենք, Ընտր. օր-ի համաձայն, ընտրական վեճերի քննության ունը և լուծումն իրականացվում է ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վարչական դատարանի կողմից, որոնցից յուրաքանչյուրն այդ գործառույթն իրականացնում է օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Հարկ է նշել, որ սահմանված կարգից բացառության են կազում ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ ընտրական վեճերը, որոնց քննության ունն իրականացվում է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների կողմից՝ ՎԴՕ 208-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի համաձայն:

ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ընտրական վեճերի քննության ունն ու լուծումն, ըստ էության, նորարարությունն էր նոր Ընտր. օր-ի կողմից, որին կանդիդատներն անք հաջորդ պարագրաֆում:



Ինչ վերաբերում է ընտրական վեճերի քննությանն ու լուծումը վարչական արդարադատության իրավասությանը հանձնելուն, ապա սա միանշանակ չի ընկալվում<sup>109</sup>: Մասնավորապես, կան տեսակետներ, որ հանրային իրավական վեճերով արդարադատությունը պետք է իրականացվի քաղաքացիադատավարական կանոններով, քանի որ այդ գործընթացներում առկա են կարգավորման նման առարկա ունեցող բազմաթիվ նույնաբովանդակ նորմեր, այսինքն վարչադատավարական հարաբերությունների նկատմամբ կիրառելի են քաղաքացիադատավարական իրավանորմեր (mutatis mutandis)<sup>110</sup>: Սակայն, ակնհայտ է, որ այստեղ mutatis mutandis սկզբունքն առավել լայն մեկնաբանություն է ստացել, քանի որ վարչական դատավարությունում դա կիրառելի է այնքանով, որքանով չի հակասում վարչական դատավարության էությանը:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ ընտրական վեճերի լուծման, և առհասարակ, վարչական արդարադատության իրականացման համար բավարար են քաղաքացիադատավարական ընթացակարգերը, քանի որ այդ վեճերն ընդհանուր առմամբ կրում են հայցային բնույթ<sup>111</sup>: Սրանց ի պատասխան, մյուս տեսակետի կողմնակիցներն իրավացիորեն գտնում են, որ քաղաքացիական դատավարության սկզբունքները համատեղելի չեն վարչական արդարադատության ինստիտուտի բնույթի ու իրավական նշանակության հետ (իրավահավասարություն, մրցակցություն և այլն)<sup>112</sup>: Մասնավորապես, քաղաքացիական դատավարությանը բնորոշ է

<sup>109</sup> Տե՛ս Матейкович М. С. Необходимо усовершенствовать механизм судебной защиты избирательных прав граждан // Российская юстиция. 2003. N 3. Էջեր 21-22, Тупиков В. А. Подсудность дел по жалобам на нарушение избирательных прав и права на участие в референдуме // Российская юстиция. 2002. N 4. Էջ 34:

<sup>110</sup> Տե՛ս Մուղնեցյան Գ. Ս. «Վարչական դատավարության ընթացակարգային առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում»։ Ատենախոսություն ի.գ.թ. գիտական աստիճանի հայցման համար. Երևան - 2011, էջ 98:

<sup>111</sup> Տե՛ս Тупиков В. А. Процессуальные особенности судебной защиты избирательных прав, права на участие в референдуме граждан Российской Федерации // Российский судья.-2001. N 3, էջ 22:

<sup>112</sup> Տե՛ս Хаманева Н. Ю. Судебный контроль за реализацией прав граждан в сфере исполнительной власти. Академический правовой институт при Институте государства и права РАН. Москва, 1999, էջեր 22-51:

դիսարգիտիվությունը, որի էությունն ի հայտ է գալիս մի շարք հատկանիշներով<sup>113</sup>, ինչն ամբողջությամբ կիրառելի չէ վարչադատավարական գործընթացում: Ինչ վերաբերում է իրավահավասարության ու մրցակցության սկզբունքների կիրառմանը, ապա վարչական դատավարությունում դրանք ունեն որոշակի առանձնահատուկ դրսևորում<sup>114</sup>: Եթե քաղաքացիադատավարական գործընթացում վիճելի հարաբերության կողմերը գտնվում են իրավահավասար վիճակում, պետության միջամտությունը հասցված է հնարավորինս նվազագույնի, դատական իշխանությունը կրող սուբյեկտը՝ դատավորը, հանդես է գալիս «մաքուր» արբիտրի դերում<sup>115</sup>, ապա վարչական դատավարությունում ճիշտ հակառակն է, քանի որ այստեղ մրցակցության սկզբունքը չի կարող «մաքուր» տեսքով կիրառվել, և դատավորը պետք է ունենա անհամեմատակտիվ դեր, քանի որ գործադիր իշխանությունը, օժտված լինելով իշխանական լիազորություններով, դատավարությունում, անկասկած, փաստացի առավելություններ ունի քաղաքացու նկատմամբ<sup>116</sup>:

Վերը նշվածի հետ մեկտեղ հարկ է նշել, որ ընտրական վեճերը, որպես այդպիսին, բխում են ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից, հետևաբար, նպատակահարմար չէ դրանց քննությունն իրականացնել քաղաքացիադատավարական ընթացակարգին համապատասխան<sup>117</sup>:

Գիտագործնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մինչև վերջին տարիները Չայաստանի Չանրապետությունում

<sup>113</sup> Ст'ю Хрестоматия по гражданскому процессу, под общей редакцией М. К. Треушникова. Городец. М., 1996. Էջեր 58-59:

<sup>114</sup> Ст'ю Դանիելյան Գ. Բ. «Չայաստանի Չանրապետությունում վարչական արդարադատության ձևավորման հիմնախնդիրները», Ատենախոսությունն ի.գ.դ. գիտական աստիճանի հայցման համար. Երևան - 2004, էջ 191:

<sup>115</sup> Ст'ю Մուղնեցյան Գ. Ս., նշված աշխատությունը, էջ 101:

<sup>116</sup> Ст'ю Դանիելյան Գ. Բ. Վարչական արդարադատության կայացման հիմնախնդիրները, Երևան «ԱՌՏ», 2003, էջ 93:

<sup>117</sup> Ст'ю Треушников М. К. Судебная защита избирательных прав// Журнал российского права.- 2000. N3, էջ 18:

նույնպես վարչական դատավարությունն իրականացվել է քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ, ինչի օրինակն է հանդիսանում նաև ընտրական վեճերի լուծումն ընդհանուր իրավասության դատարանների կողմից: Սակայն, կարծում ենք, որ վարչական դատավարությունն էապես տարբերվում է քաղաքացիական դատավարությունից ինչպես իր նպատակներով ու իրականացվող գործառնությունով, այնպես էլ սկզբունքների կազմով և բովանդակությամբ: Այս խնդրին անդրադարձել է նաև Սահմանադրական դատարանն իր 2008թ. նոյեմբերի 25-ի որոշմամբ, որի համաձայն. «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող 118-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդիրը, հաշվի չառնելով վարչական արդարադատության, հանրային-իրավական վեճերի լուծման առանձնահատկությունները, քաղաքացիական դատավարության եռաստիճան համակարգում կիրառվող վճռաբեկության ինստիտուտի իրավակարգավորման բոլոր տարրերը, այդ թվում նաև վճռաբեկ բողոքի հիմքերն ու ընդունելի պայմանները, տարածել է վարչական դատարանի ակտերի բողոքարկման վրա...: Մասնագիտացված արդարադատության, այդ թվում նաև՝ վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլոց, նպատակ է հետապնդում առաջին հերթին... ապահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ»<sup>118</sup>:

Վերը նշվածից ելնելով՝ կարելի է փաստել, որ լիովին արդարացված է ինչպես վարչական արդարադատության ինստիտուտի ներդրումը հայրենական իրավական համակարգ, այնպես էլ

<sup>118</sup> Տե՛ս ՀՀ ՍԴ 25 նոյեմբերի 2008թ. «Քաղաքացի Արամ Շմավոնյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի և 118-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով»՝ ՍԴՈ-780 որոշումը:

ընտրական վեճերի, որպես հանրային-իրավական հարաբերությունների, քննության իրականացումը վարչական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՎԴՕ ընտրական վեճերի քննությանն ու լուծումը կարգավորող նորմերն ամրագրված են «Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ 28-րդ գլուխում՝ որպես հատուկ վարույթ: Չատուկ վարույթի գործերը հանդիսանում են հանրային իրավահարաբերություններից բխող գործերի առանձին տեսակներ, որոնք ունեն հանրային-իրավական յուրահատուկ նշանակություն, սուբյեկտային հատուկ կազմ, քննությանն ու լուծման որոշակի առանձնահատկություններ, որոնք բխում են հանրային-իրավական վիճելի հարաբերության բնույթից: Չատուկ վարույթի գործերի հարուցումը, քննությունն ու լուծումն իրականացվում է վարչադատավարական օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կանոններով, այն բացառություններով, որոնք սահմանված են ՎԴՕ՝ տվյալ վարույթի վերաբերյալ նորմերով:

ՎԴՕ՝ «Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ գլուխը ընտրական վեճերի քննությանն ու լուծման, որպես հատուկ վարույթի, վերաբերյալ տարբերակված մոտեցում է ցուցաբերել հետևյալ հարաբերությունների կարգավորման գործում.

- ընտրական գործերով վարչական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի,
- ընտրական գործի ընդդատության,
- գործի քննության ժամկետների,
- դատական ակտի ու ժիմեջ մտնելու վերաբերյալ:

Մնացած ընթացակարգային հարցերն, ըստ էության, լուծվում են ընդհանուր հայցային վարույթի կանոններին համապատասխան:

ՎԴՕ վերը նշված գլխում ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերը, այլ կերպասած <<ընտրական վեճերն>> անվանվում են ընտրական գործեր՝ սահմանելով. <<Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերը Յանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, հանրաքվեի կազմակերպման և անցկացման ընթացքում ընտրական ու հանրաքվեին մասնակցելու իրավունքների խախտման վերաբերյալ ներկայացված հայցադիմումների հիման վրահարուցված գործերն են>> (ՎԴՕ 206-րդ հոդվ.):

Այս ձևակերպման հետևիվին համաձայնվել է նաև կարող, քանի որ այն ամբողջությամբ չի բացահայտում վարչական դատարանի կողմից քննվող ընտրական վեճերի շրջանակը և կարող է տարաբնույթ մեկնաբանությունների առարկա դառնալ: Մասնավորապես, ճշգրտման կարիք ունի <<ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացք>> արտահայտությունը, քանի որ, եթե նմանօրինակ ձևակերպմամբ օրենսդիրն ինկատի է ունեցել ընտրությունների միայն կազմակերպման և անցկացման փուլերն, առանց ամփոփման փուլի, ապա այս ձևակերպման շրջանակներից դուրս են մնացել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների բողոքարկման վերաբերյալ ընտրական վեճերը: Եթե օրենսդիրը լայն իմաստով է ընկալել այդ ձևակերպումը՝ վերջինիս մեջ ընդգրկելով նաև ընտրությունների ամփոփման փուլը, ապա ակնհայտ է, որ այս ձևակերպումը տարածվում է նաև օրենքով ՅՅ սահմանադրական դատարանի լուծման իրավասության ներքո գտնվող ընտրական վեճերի վրա, ինչը, բնականաբար, անթույլատրելի է: Յետևաբար, անհրաժեշտ է վերը նշված նորմը արմատապես վերանայել՝ ապահովելով հասկացությունների որոշակիություն և նպատակային նշանակությունը:

Վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա, որը ՎԴՕ 73-րդ հոդվածի համաձայն ձևակերպվում է գրավոր և պետք է բովանդակի օրենքով նախատեսված մի շարք ընթացակարգային պահանջներ, այդ թվում՝ վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը վերադասության կարգով բողոքարկելու վերաբերյալ տեղեկատվություն (ՎԴՕ 73-րդ հոդվ., 2-րդ մաս, 8-րդ կետ):

Վերը նշված նորմով ամրագրված պահանջների նախատեսումն ինքնակատարելի է, քանի որ դրանցից յուրաքանչյուրի բացակայությունը կարող է կամայականություններ և չարաչափություններ դրսևորելու առիթ հանդիսանալ, սակայն դրանցից, հատկապես, կարևորում ենք 8-րդ կետի առկայությունը, որի համաձայն, հայցվոր կողմը պարտավորվում է դատարանին տեղեկացնել վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը վերադասության կարգով բողոքարկված լինելու հանգամանքը, քանի որ ՎՅՎԿՕ 70-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է: Ըստ էության, ՎԴՕ 73-րդ հոդվ., 2-րդ մասի 8-րդ կետն ապահովում է ՎՅՎԿՕ 70-րդ հոդվածի 3-րդ մասի գործողությունը, որն առանցքային նշանակություն ունի ընտրական վեճերի լուծման արտադատական և դատական ընթացակարգերի ներդաշնակ և համահունչ գործողությունն ապահովելու հարցում:

Ինչ վերաբերում է ընտրական վեճերի քննության և լուծման, որպես հատուկ վարույթի վերը նշված ընթացակարգային առանձնահատկություններին, ապա նպատակահարմար է քննարկել այդ գործերի ընդդատության հարցը՝ դրա հետ միաժամանակ անդրադառնալով ընտրական գործերով վարչական դատարան դիմելու

իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակին, քանի որ դրանք սերտորեն փոխկապակցված են:

Արդեն վերը նշվեց, որ Ընտր. օր-ի 46-րդ հոդվածի համաձայն ԿԸՅ-ի որոշումները, գործողության ունենեն և անգործությանը (բացառությամբ համապետական ընտրության ունենների արդյունքների վերաբերյալ որոշումների), ինչպես նաև համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների ընտրության ունենների արդյունքների վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել վարչական դատարան:

Ինչպես տեսնում ենք, Ընտր. օր-ի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են միայն ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողության ունենեն և անգործությանը բողոքարկելու վերաբերյալ գործերը, առանց ընդգրկելու վերջիններիս պաշտոնատար անձանց որոշումները, գործողության ունենեն և անգործությանը բողոքարկելու վերաբերյալ գործերը: Այլ կերպ ասած, ըստ Ընտր. օր-ի, վարչական դատարանին ընդդատյա են միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, որպես կոլեգիալ մարմնի որոշումները, գործողության ունենեն և անգործությանը բողոքարկելու վերաբերյալ գործերը, այնինչ ԿԴՕ 3-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարան դիմելու իրավունք ունի յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ **դրանց պաշտոնատար անձանց** (ընդգծումը մերն է՝ Ա.Ե.) վարչական ակտերով, գործողության ունեներով կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել իր՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքներն ու ազատության ունեները:

Ինչպես տեսնում ենք, վարչադատավարական օրենսդրության համաձայն վարչական դատարանին ընդդատյա են ոչ միայն պետական

կամ տեղական ինքնակառավարման մարմինների, այլ նաև դրանց պաշտոնատար անձանց որոշումների, գործողությունների կամ անգործության դեմ բերված բողոքները: Այլ կերպ ասած, երկու իրավական ակտեր նույն հարցի վերաբերյալ իրարամերժ մոտեցումներ են պարունակում: Վարչադատավարական օրենսդրությունը վարչական դատարանի համար իրավացիորեն ընդդատության ավելի լայն շրջանակ է սահմանում, քան ընտրական օրենսդրությունը, ինչը ենթակա է շտկման, քանի որ այն անմիջական բացասական ազդեցություն է ունենում գործնականում կոնկրետ գործեր քննելու ընթացքում:

Ինչ վերաբերում է ընտրական գործերով վարչական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակին, ապա ՎԴՕ 207-րդ հոդվածի համաձայն, այդպիսիք հանդիսանում են ՎԴՕ 3-րդ հոդվածով նախատեսված անձինք, ինչպես նաև Ընտր. օր-ով սահմանված դեպքերում՝ համապատասխան ընտրական հանձնաժողովները: Կարծում ենք, որ այս նորմը չի բխում հատուկ վարույթի եություններից, քանի որ ՎԴՕ 3-րդ հոդվածը համընդգրկուն բնույթ ունի, նախատեսված է վարչական դատավարության համար ընդհանուր առմամբ, համահունչ է ընտրական վեճերի վարչադատավարական քննության՝ որպես վարչական արդարադատության առանձին դրսևորման եությունը, և վերջինիս դրույթները գործնական նկատառումներից ելնելով նպատակահարմար է ամբողջությամբ տարածել դատական կարգով լուծվող ընտրական վեճերի վրա: Ուստի անհրաժեշտ է վերանայել օրենսդրի վերը նշված դիրքորոշումն ու առավել հստակեցնել ընտրական վեճերով վարչական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը:

Ընդդատության վերը նշված կանոններից բխող գործերը վարչական դատարանում միանձնյա քննում և լուծում է վարչական դատարանի դատավորը՝ վարչական դատավարության օրենսդրության



համաձայն: Սակայն օրենսգրքի 208-րդ հոդվածը ընդհանուր կանոններից բացառությամբ նախատեսում, մասնավորապես,

1) տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների, թեկնածուների ու կուսակցությունների ընտրական ցուցակները, ցուցակներում ընդգրկված թեկնածուներին գրանցելու, չգրանցելու, գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ վարչական ակտերի իրավաչափությունը վիճարկելու մասին գործերն ըստ էության քննում և լուծում է վարչական դատարանը՝ կոլեգիալ՝ 5 դատավորի կազմով,

2) ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործերը սույն օրենսգրքով սահմանված կարգով քննում են պատասխանողի գտնվելու վայրի՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները (ՎԴՕ 208-րդ հոդվ. 1-ին մաս):

Առաջին խումբ բացառություններով նախատեսված գործերի՝ կոլեգիալության կարգով քննության նախատեսումը պայմանավորված է նրանով, որ հաճախ կարող են լինել բարդ և քաղաքական հնչեղություն ունեցող գործեր, որոնց քննությունը մեկ դատավորի կողմից կարող է դժվարություն առաջացնել ինչպես գործնականում, այնպես էլ կողմնակի ճնշումների ազդեցության տակ ընկնելու առումով: Բացի այդ, կոլեգիալության կարգով գործի քննությունը նվազեցնում է կոռուպցիոն ռիսկերը, հատկապես ընտրական գործընթացում դրանց առկայության պայմաններում:

Երկրորդ խումբ բացառությունների նախատեսման հիմքում ընկած են մի քանի գործոններ: Նախ, այս գործերը գործնական տեսակետից համարվում են բավականին դյուրին ու պարզ գործեր, ընտրական օրենսդրության վերաբերյալ խորը գիտելիքներ և փորձ չեն պահանջում, հետևաբար, մասնագիտացված դատարանի կողմից դրանց քննության կարիք, որպես այդպիսին, չունեն: Բացի այդ,

հաշվի առնելով ընտրական գործերի քննության համար նախատեսված սեղմ ժամկետները, կարծում ենք, որ արդարացված է այն հանգամանքը, որ վարչական դատարանը չժանրաբեռնվի այնպիսի գործերի քննությամբ, որոնք կարող են հաջողությամբ իրականացվել ընդհանուր իրավասության դատարանների կողմից: Այս դրույթի ձևակերպումը բխում է նաև ընտրողների շահերից, քանի որ ընտրողների ցուցակների ճշգրտման համար պատասխանողի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան դիմելու հնարավորությունը տարածքային առումով առավել դյուրին է դարձնում վերջիններիս՝ խախտված իրավունքների վերականգնման գործընթացը:

Չարկ է նշել, որ ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործերը ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների կողմից քննելու կարգը արտացոլված է նաև Վենետիկյան հանձնաժողովի կողմից 2002թ-ին ընդունված «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք»-ով<sup>119</sup>, որը հանդիսանում է ընտրությունների վերաբերյալ լավագույն փորձի կանոնագիրք: Ի դեպ, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընտրական վեճերի քննության և լուծման վերաբերյալ անդրկովկասյան երեք երկրներում գործող օրենսդրություններից վերը նշված կանոնագրքին ամենից շատ համապատասխանում է ՀՀ ընտրական օրենսդրությունը<sup>120</sup>:

Վարչական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասը, որպես գործերի քննության և լուծման ընդհանուր կանոնից

---

<sup>119</sup> Տե՛ս «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք»- Վենետիկյան հանձնաժողով, 52-րդ լիազորմար նստաշրջան, 18-19 հոկտեմբերի 2002թ. Վենետիկ:

<sup>120</sup> Տե՛ս Second Eastern Partnership Facility Meeting on voter lists and election dispute resolution. Chisinau 22-23 septemer 2011 – «European standards regarding the effective system of complaints and appeals concerning violations of electoral legislation and electoral dispute resolution: Experience of some countries» S. Kalchenko, էջ 24:

բացառությամբ քննվող գործեր, առանձնացնում է նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորմատիվ բնույթ ունեցող որոշումների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը, որոնք նույնպես քննվում են վարչական դատարանի կողմից՝ 5 դատավորի կազմով: Այս դեպքում հատկապես գործում է 208-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի տրամաբանությունը:

Ընտրական գործերի, որպես հատուկ վարույթների քննության ու լուծման համար ՎԴՕ նախատեսված մյուս առանձնահատկությունները վերաբերում են ընտրական գործերի քննության և լուծման համար նախատեսված ժամկետներին:

Չաշվի առնելով ընտրական գործընթացների սեղմ ժամկետները՝ ընտրական գործերի քննության և լուծման համար օրենսդիրն արդարացիորեն ամրագրել է կոնկրետ ժամկետներ, որպեսզի դրանց անհարկի ձգձգումներով չխաթարվի ընտրական գործընթացի բնականոն ընթացքը: Այսպես, ընտրական գործերի քննության և լուծման համար նախատեսված ընդհանուր դրույթն ամրագրում է, որ հայցադիմումը վարչական դատարան կարող է ներկայացվել 3 օրացուցային օրվա ընթացքում այն օրվանից, երբ հայցվորն իմացել է կամ պարտավոր էր իմանալ իր ընտրական իրավունքի խախտման մասին (ՎԴՕ 209-րդ հոդվածի 1-ին մաս): Կարծում ենք, որ այս նորմն ամրագրելիս օրենսդիրը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ընտրական վեճերի քննության և լուծման համար նախատեսված է այլ ընտրանքային տարբերակ, այսինքն անձը հնարավորություն ունի իր խախտված իրավունքի վերականգնման վերաբերյալ դիմել նախ՝ ընտրական հանձնաժողով, ապա դատարան: Նմանատիպ իրավիճակներում հաճախ կարող է բաց թողնվել օրացուցային եռօրյա ժամկետը՝ անձին զրկելով խախտված իրավունքի դատական պաշտպանության իրականացման հնարավորությունից: Չետևաբար, կարծում ենք, որ վերը նշված

նորմը պետք է կիրառել բացառապես վարչական դատարան բողոքարկվող գործերի վերաբերյալ :

Ինչ վերաբերում է վարչական դատարանի կողմից գործի քննության համար նախատեսված ժամկետներին, ապա ՎԴՕ 209-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն, եթե սույն օրենսգրքով գործի քննության և լուծման համար այլ ժամկետ սահմանված չէ, ապա ընտրությունների և հանրաքվեների ժամանակ (ընտրությունների, հանրաքվեների նշանակման օրվանից մինչև ընտրությունների, հանրաքվեների արդյունքների ամփոփման ժամանակահատվածը) դատարանը հայցադիմումը քննում և լուծում է 7-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան մինչև քվեարկության օրը, իսկ ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում՝ 15-օրյա ժամկետում: Սակայն այս ընդհանուր կանոնից գոյություն ունեն բազմաթիվ շեղումներ, որոնք բխում են արակտիկ նկատառումներից: Մասնավորապես, այդ շեղումները վերաբերում են նախընտրական քարոզչության ընթացքում տեղի ունեցած իրավախախտումների, ընտրացուցակներում տեղ գտած անճշտությունները վերացնելու, ընտրությունների արդյունքները վիճարկելու վերաբերյալ և այլ գործերի քննության և լուծման համար նախատեսված ժամկետներին: Կարծում ենք, որ առանձին գործերի համար ժամկետների նախատեսումն օրենսդիրն իրականացրել է՝ ընտրական գործի հնարավոր ծավալի ու բարդության առանձնահատկություններից ելնելով:

Այսպես, ընտրական հանձնաժողովների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի նկատմամբ հսկողություն իրականացնելու հետ կապված հայցադիմումներ կարող են ներկայացվել նախընտրական քարոզչությունը սկսվելու օրվանից մինչև քվեարկության հաջորդ օրը ներառյալ: Այդ հայցադիմումները քննվում են հինգ օրացուցային օրվա ընթացքում, իսկ՝

1) քվեարկության օրվանից հինգից երկու օրացուցային օր առաջ ներկայացված հայցադիմումները՝ մինչև քվեարկության օրը,

2) քվեարկության օրը, դրան նախորդող կամ հաջորդող օրը ներկայացված հայցադիմումները՝ ոչ ուշ, քան ընտրությունների արդյունքների ամփոփման՝ օրենքով սահմանված ժամկետը և րանալ ու ն նախորդող օրը(ՎԴՕ 209-րդ հոդվածի 4-րդ մաս):

Թեկնածուներին, կուսակցությունների ընտրական ցուցակները գրանցելու, չգրանցելու, գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցադիմումները դատարանը քննում և և լ ու ծ ու մ է հայցադիմումն ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան քվեարկության նախորդ օրը(ՎԴՕ 209-րդ հոդվածի 8-րդ մաս):

Վերը նշված գործերի քննության համար նմանատիպ ժամկետների նախատեսումը միատեսակ չի ընկալվում, քանի որ կատեսակետ, որի համաձայն, նպատակահարմար չէ վերը նշված գործերը քննել և և լ ու ծ ե լ քվեարկությանը նախորդող մի քանի օրվա ընթացքում, քանի որ այդ դեպքում հնարավոր է նույնիսկ քվեարկությունից մեկ օր առաջ թեկնածուին, որը մասնակցել է ողջ քարոզարշավին և հավաքել ընտրազանգված, զրկել ընտրապայքարին մասնակցելու հնարավորությունից կամ հակառակը<sup>121</sup>: Սակայն չի կարելի համաձայնվել նմանատիպ մեկնաբանության հետ, քանի որ եթե կա իրավական հիմք, թեկուզ քվեարկությունից մեկ օր առաջ, թեկնածուին կամ կուսակցությանը գրանցելու կամ գրանցումն անվավեր ճանաչելու համար, ապա դա պետք է իրականացվի՝ օրինականության պահանջից ելնելով:

Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների վիճարկման վերաբերյալ հայցադիմումների քննությանը և

<sup>121</sup> Ст'а Дмитриев Ю. А., Израелян В. Б. Избирательное право и процесс в Российской Федерации. Изд-во Феникс, Ростов-на-Дону, 2004.- էջ 764:

լուծմանը, որն, ըստ էության, կարելի է համարել ամենաբարդ և կարևոր նշանակություն ունեցող ընտրական գործերից, ապա դրանք պետք է քննվեն և լուծվեն հայցադիմումները ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան 7 օրացուցային օրվա ընթացքում (ՎԴՕ 209-րդ հոդվ. 7-րդ մաս):

Վերը նշված հատուկ ժամկետների հետ մեկտեղ օրենսգիրքը նախատեսում է, որ սույն հոդվածով սահմանված հատուկ ժամկետների հաշվառմամբ դատավորը նման գործեր քննելիս պետք է ձգտի գործի քննությունն իրականացնել այնպիսի ժամկետում, որ չխաթարվեն հետագա ընտրական գործընթացները (ՎԴՕ 209-րդ հոդվ. 10-րդ մաս): Ըստ էության, այս նորմով օրենսգիրքը բացատրում է վերը նշված սեղմ ժամկետների նախատեսման անհրաժեշտությունը, որն է ընտրական գործընթացների անխաթարության ապահովումը:

Ինչպես տեսնում ենք, ՎԴՕ-ն բավականին մանրամասնորեն սահմանում է ընտրական գործերի քննության և լուծման ժամկետները, սակայն չի պարունակում որևէ նորմ, որից պարզ կլինի, թե ընտրության արդյունքների ամփոփումից հետո մինչև երբ կարելի է ընտրական իրավունքների պաշտպանության հայցով դիմել դատարան, ինչը նշանակում է, որ այս ժամկետը սահմանափակված չէ, այսինքն՝ նույնիսկ ընտրությունների արդյունքների ամփոփումից մեկ տարի անց, եթե անձը պարզի իր ընտրական իրավունքի խախտման մասին, ապա հնարավորություն ունի եռօրյա ժամկետում դիմել դատարան:

Կարծում ենք, որ նմանատիպ նորմի բացակայությունը կարող է ընտրված պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործունեության վրա բացասական ազդեցություն ունենալ՝ առաջացնելով անորոշություն և իրավական կարգավիճակի անկայություն: Ուստի անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել առավելագույն ժամանակահատված, որի բացթողումից հետո, կապված կոնկրետ

ընտրական գործընթացի հետ, ընտրական իրավունքների պաշտպանության վերաբերյալ որևէ դիմում ենթակաչ է քննության:

Ընդհանուր առմամբ, ամփոփելով ընտրական իրավունքի պաշտպանության համար դատական քննության ժամկետները, հարկ է նշել, որ օրենսդիրը բավականին մանրամասն և ամբողջական կարգավորում է տվել, ինչն անհամեմատելի է ընտրական վեճերը կարգավորող՝ նախկինում գործող օրենսդրության հետ, և դրական ազդեցություն կունենա արդյունավետ դատաքննությունն ապահովելու գործում՝ կողմերին զերծ պահելով գործի անհարկի ձգձգումներից:

Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի վերաբերյալ վարչական դատարանի կողմից՝ օրենքով նախատեսված կարգով կայացրած որոշումներին, ապա այստեղ ուշադրության է արժանի ՎԴՕ 212-րդ հոդվածի 5-րդ մասը, որի համաձայն. <<Եթե գործի քննությունից հետո վարչական դատարանը, սպառելով ապացույցներ ձեռք բերելու համար սույն օրենքով նախատեսված բոլոր միջոցները, այդուհանդերձ, հնարավորություն չի ունեցել պարզելու ընտրության իրական արդյունքները, սակայն վարչական դատարանի կողմից որպես հավաստի գնահատված ապացույցներից ակնհայտ է դարձել, որ ընտրախախտումներն ունեցել են կազմակերպված, զանգվածային, կրկնվող կամ պարբերական բնույթ, և դրանց համադրումը վկայում է դրանց միջև համակարգային այնպիսի փոխկապակցվածության մասին, որի պայմաններում խախտվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 4-րդ հոդվածով ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքները, ապա որոշում ընդունելիս վարչական դատարանն իրավասու է այդ հիմքով անվավեր ճանաչելու ընտրությունների արդյունքները>>: Կարծում ենք, որ այս նորմի առկայությունը արդար դատաքննությունն իրականացնելու

լրացուցիչ երաշխիք է հանդիսանում բոլոր այն դեպքերի համար, երբ հնարավոր չէ ապացույցներով հստակ բացահայտել ողջ իրականությունը, այսինքն ընտրությունների արդյունքների վավերականության ստուգման հարցում դատարանը լուծում է ինչպես իրավունքի, այնպես էլ փաստական հանգամանքների հարցը՝ եզրահանգելով, թե ակտիվ և պասիվ ընտրական իրավունքի խախտումները որքանով են ազդել ընտրությունների արդյունքների վավերականության վրա: Ամեն դեպքում, այս նորմի հասարակական նշանակությունը, չնայած իր հռչակագրային բնույթին, անվիճելի է: Այլ հարց է, թե գործնականում որքան արդյունավետությամբ այն կկիրառվի, ինչպես նաև ընտրախախտումներին բնորոշող վերը նշված հատկանիշները որքանով համարժեք և ճիշտ կգնահատվեն: Կարծում ենք, որ այս նորմի արդյունավետ կիրառման պրակտիկա ձևավորելուն կարող է նպաստել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական իրավասության արդյունավետ իրացումը՝ հստակ չափանիշներ սահմանելով վերը նշված նորմի գործողության համար:

Ինչ վերաբերում է վարչական դատարանի կայացրած վարչական ակտին, ապա ՎԴՕ 213-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերջնական են, վերանայման ենթակա չեն և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Սակայն այս դրույթը միանշանակ չի ընկալվում թե մասնագիտական գրականության մեջ, թե գործնականում: Մասնավորապես, 2013թ. փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցում<sup>122</sup> ընտրական



վեճերով կայացված դատական ակտերի վերջնական լինելը դիտվում է որպես ընտրությունների անչվող բողոքներ ներկայացնելու իրավունքի անհիմն սահմանափակում և առաջարկում համապատասխան օրենսդրական նորմի փոփոխում:

Որոշ հեղինակներ նույնպես միանշանակ չեն ընկալում ընտրական վեճերի վերաբերյալ կայացված դատական ակտերի անմիջական ուժի մեջ մտնելու հանգամանքը՝ առաջարկելով դատական ակտի՝ անմիջական ուժի մեջ մտնելու հետ մեկտեղ դրանց բողոքարկման հնարավորության նախատեսում<sup>123</sup>:

Ընդհանուր առմամբ և օրենսդրական համապատասխան նորմի, և վերը նշված տեսական կարծիքների մեջ առկա է ուշագրավ հանգամանք: Մասնավորապես, օրենսդիրը, ամրագրելով դատական ակտի բողոքարկման սահմանափակում, կարծում ենք, գործել է ընտրական գործընթացների արագության և ընտրությունների անխաթարության ապահովման նկատառումներից ելնելով, քանի որ կարող են լինել դատական ակտերի բազմաթիվ, հաճախ նաև անհարկի բողոքարկումներ, որոնք կձգձգեն ընտրական գործընթացները, ինչն էլ կարող է բացասական հետևանքների պատճառ դառնալ, ինչպես նաև կազմակերպական և ֆինանսական խնդիրներ առաջացնել ընտրությունների կազմակերպման համար պատասխանատու մարմինների համար:

Ինչ վերաբերում է վերը նշված տեսական դրույթներին, ապա դրանք հիմնավորվում են՝ ելնելով ընտրական իրավունքների պաշտպանության առաջնայնությունից:

Կարծում ենք, որ ներկայումս օրենսդրի դիրքորոշումն արդարացված է այնքանով, որ ընտրական գործընթացի

<sup>122</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրություններ, 18 Փետրվար, 2013 թ. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության Վերջնական զեկույց. Վարչավա. 8 մայիսի 2013թ., 3-4 էջեր:

<sup>123</sup> Տե՛ս, օրինակ, Белов С. А. Процессуальные особенности судебной защиты избирательных прав граждан/ Кодекс-Инфо. 2001, N 1, էջ 21, Князев С. Д. Избирательные споры. Известия ВУЗ-ов// Правоведение. 2001. N 3, էջ 110:

մասնակիցների իրավագիտակցության ներկայիս մակարդակը կարող է հանգեցնել դատական ակտի բողոքարկման հնարավորության շահարկման: Բացի այս, ընտրական իրավունքների՝ օրենսդրությամբ ամրագրված վարչական և դատական պաշտպանության առկայությունը համարվում է բավականին լուրջ երաշխիք, որպեսզի ընտրական իրավունքները համարվեն օրենսդրորեն պաշտպանված: Այնուամենայնիվ, վարչական արդարադատության հիմնական նպատակաուղղվածությունը մարդու իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության ապահովումն է, ինչի արդյունավետության բարձրացումը պայմանավորված է նաև դատական ակտի բողոքարկելիությամբ: Յետևաբար, չնայած օրենսդրի դիրքորոշմանը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ ընտրական վեճերով վարչական դատարանի որոշման բողոքարկման հնարավորության արգելքը չի բխում վարչական արդարադատության, որպես մարդու իրավունքների պաշտպանություն և ապահովող ընթացակարգի էությունից:

Ընդհանրացնելով վարչական դատարանի կողմից ընտրական վեճերի՝ որպես հատուկ վարույթի քննությանն ու լուծմանը վերաբերող առանձնահատկությունների բնութագրումը, նշենք, որ չնայած վարչական արդարադատության էությանն ու նշանակությանը հակասող որոշ օրենսդրական ընթացակարգերի առկայությունը, այնուամենայնիվ, օրենսդիրը բավականին հստակ կարգավորում է տվել այս խնդրից բխող հարցերի լուծմանը:

Նախ, ընտրական վեճերի լուծման հարցում արդեն իսկ դրական ազդեցություն ունի դատական պաշտպանության ինստիտուտի առկայությունը, այսինքն ընտրական իրավունքների պաշտպանության հայցով դատարան դիմելու հնարավորությունը: Այն նվազեցնում է ընտրական վեճեր լուծելու իրավասություն ունեցող վարչական մարմինների կողմից դիտավորությամբ անօրինական որոշումներ ընդունելու, անգործություն և

դրսևորելու, ինչպես նաև այլ հակաիրավական գործողություններ կատարելու հնարավորությունը, քանի որ վերջիններիս կողմից անօրինականության ցանկացած դրսևորում հավանում է վերանայվել անկողմնակալ մարմնի կողմից:

Բացի այդ, վարչական կարգով ընտրական վեճերի արդար քննության երաշխիքներ են հանդիսանում այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են դատարանի անկախությունն այլ մարմիններից, ենթարվելը միայն օրենքին, գործի անմիջական, հրապարակային քննությունը, մրցակցային ընթացակարգը, ինչպես նաև դատավարությանը բնորոշ այլ ժողովրդավարական սկզբունքները, որոնք դրական կերպով են ազդում գործի օբյեկտիվ քննության ապահովման վրա, այլ կերպ ասած, դատական կարգով ընտրական վեճերի լուծումն առանձնանում է իրավական երաշխիքներով, որոնք գործի քննության և լուծման ընթացքում ապահովում են օրինականության սկզբունքի իրացումը:

Այնուամենայնիվ, դատական պաշտպանության վերը նշված արժանիքներն այսօր գործնականում հաճախ այլ կիրառում են ստանում, որի արդյունքն է հասարակության անվստահության ձևավորումը ողջ դատական համակարգի նկատմամբ: Դրա պատճառներից են.

1) քաղաքականացված դատական համակարգի առկայությունը, որն այսօր գերխնդիր է, և որի հաղթահարման ուղղությամբ տարաբնույթ իրավական լուծումներ են առաջարկվում ներկայումս ընթացող սահմանադրական բարեփոխումների համատեքստում: Կարծում ենք, որ այս խնդրի լուծման հիմքում ընկած է հասարակության և պետության իրավագիտակցության և իրավական մշակույթի ցածր զարգացվածության մակարդակը, առանց որի բարձրացման հնարավոր չէ երկրում ապահովել որևէ ժողովրդավարական գործընթաց,

2) ընտրական օրենսդրության հաճախակի փոփոխությունները: Սատերտորեն փոխկապակցված է վերը նշված եզրահանգման հետ, ուստի չկրկնվելու համար ավելացնենք, որ լավագույնս պրակտիկ փորձի փնտրտությունները, այս կամ այն երկրում արդյունավետ գործող համակարգի ուղղակի ներդրումը դեռևս երաշխիք չէ մեր երկրում դրա արդյունավետության համար: Ավելին, հաճախակի փոփոխվող օրենսդրությունը բացասաբար է ազդում տվյալ ոլորտում կայուն և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու գործընթացի վրա: Յետևաբար, անհրաժեշտ է, որ դատափրավական բարեփոխումներին զուգընթաց պետական քաղաքականություն վարվի հասարակության իրավագիտակցության և իրավական մշակույթի զարգացման ուղղությամբ, որի արդյունքում միայն կարելի է ակնկալել ընտրական իրավունքների արդյունավետ պաշտպանություն:

**§2. 33 Սահմանադրական դատարանը որպես ընտրական վեճեր քննող մարմին**

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող դատափրավական բարեփոխումները կարևոր նշանակություն ունեցան ընտրական իրավունքի դատական պաշտպանության ոլորտում, ինչը, դեռևս պատշաճ ձևով չի ընկալվել ընտրական գործընթացի մասնակիցների կողմից: Դավերաբերում է, հատկապես, ընտրական գործընթացների իրավակարգավորման վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի դերի և նշանակության ընկալման վերաբերյալ խնդիրներին: Մասնավորապես, 2005թ-ի նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքներով կատարված սահմանադրական փոփոխությունների հիման վրա ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետն ամրագրում է, որ սահմանադրական դատարանը լուծում է ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճեր, իսկ մինչ

սահմանադրական փոփոխությունները՝ լուծում էր ընտրությունների արդյունքների հետ կապված վեճեր: <<Ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճեր>> և <<ընտրությունների արդյունքների հետ կապված վեճեր>> ձևակերպումների միջև էական տարբերության առկայությունն ի սկզբանե վիճելի է եղել ինչպես գործնականում, ինչի մասին վկայում են սահմանադրական դատարան ներկայացված դիմումներում ամրագրված պահանջները, այնպես էլ տեսական գրականության մեջ:

Մասնավորապես, կատեսակետ, որի համաձայն ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը ոչ միայն վերաբերում են ընտրական հանձնաժողովների կողմից նյութական իրավունքի սխալ կիրառմանը, այլև կարող են դրսևորվել ընտրությունների արդյունքներն ամփոփելիս նրանց թույլ տված ընթացակարգային սխալների վիճարկման տեսքով: Վեճի այս տեսակները, միանշանակ, ներառվում են <<ընտրությունների արդյունքների հետ կապված>> վեճերի շրջանակում, այնպես որ Սահմանադրության փոփոխության կարիք այդ իմաստով չկար<sup>124</sup>:

Հաշվի առնելով նմանատիպ դիրքորոշումներ, ինչպես նաև բազմաթիվ գործնական դրսևորումներ, ՀՀ սահմանադրական դատարանը դեռևս 2008թ. մարտի 8-ի ՍԴՈ-736 որոշմամբ անդրադարձել է ընտրական իրավակարգավորումների վերաբերյալ ՍԴ իրավագործության շրջանակներին՝ մատնանշելով. << 2005թ-ի նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքներով կատարված սահմանադրական փոփոխությունների հիման վրա ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1 կետի համաձայն սահմանադրական դատարանը լուծում է ընտրությունների

<sup>124</sup> Տե՛ս Գ. Մուրադյան, Հ. Թովմասյան - Ընտրական վեճեր. Ուսումնական ձեռնարկ. Ասոդիկ 2007. Էջ 37:

արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճ: Հանրապետության Նախագահի ընտրությունների արդյունքներով ՀՀ ԿԸՀ-ի որոշման իրավական հիմնավորվածությունը սահմանադրական դատարանում կարող է վիճարկվել երկու տեսանկյունից. ինչպես դրա ընդունման սահմանված կարգի (ընթացակարգի)՝ օրենքով պահանջվող ձևի պահպանվածության (ձևական հիմքեր), այնպես էլ նյութական իրավունքի նորմերի կիրառման ենթադրյալ սխալների հիմքով, որով ընտրությունների արդյունքներն ամփոփող կենտրոնական ընտրական հանձնաժողովը սխալ հետևություն է հանգել թեկնածուների ընտրվելու կամ չընտրվելու փաստի վերաբերյալ (նյութական հիմքեր)>><sup>125</sup>:

Ըստ էության, վերը նշված դիրքորոշումներն էականորեն միմյանցից չեն տարբերվում, և դրանցից յուրաքանչյուրն արտահայտում է այն հանգամանքը, որ ընտրական վեճի քննության ժամանակ ՀՀ սահմանադրական դատարանը ոչ թե պարզում է Սահմանադրության ամբամբարված ընտրական իրավունքների խախտման փաստի առկայությունը, այլ այն, թե որքանով են այդ խախտումներն ազդել ընտրությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ կայացված որոշման վրա: Այլ կերպ ասած, ՀՀ սահմանադրական դատարանի խնդիրն է ընտրությունների արդյունքների վերաբերյալ կայացված որոշման վավերականության ստուգումը, այսինքն՝ արդյոք թույլ են տրվել այնպիսի և այն չափի ընտրախախտումներ, որոնք ազդել են ընտրությունների արդյունքների համար պատասխանատու մարմինների կայացրած որոշումների իրավաչափության վրա:

---

<sup>125</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2008թ. մարտի 8-ի «Հանրապետության Նախագահի թեկնածուներ Տիգրան Կարապետյանի և Լևոն Տեր-Պետրոսյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ ԿԸՀ 2008թ. փետրվարի 24-ի՝ «Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» թիվ 24-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ գործը» թիվ ՍԴՈ-736 որոշումը:

Առաջին հայացքից թվում է, թե, իսկապես, Սահմանադրության՝ վերը նշված փոփոխության կարիքը չկար, սակայն տվյալ փոփոխության նշանակությունը հասկանալու համար անհրաժեշտ է այն դիտարկել մի քանի իրավանորմերի ամբողջության մեջ: Մասնավորապես, համապատասխան փոփոխության նշանակությունն արտահայտվում է Սահմանադրության 51-րդ հոդվածով նախատեսված փոփոխությամբ, որը սեղմ ժամկետներ է նախատեսում 100-րդ հոդվածի 3.1-րդ կետով նախատեսված վեճերի քննության համար, ինչը չէր նախատեսում ՀՀ Սահմանադրությունը՝ մինչև 2005թ-ը: Այս հանգամանքը վկայում է, որ վերը նշված սահմանադրական փոփոխությունը նախատեսում է Սահմանադրական դատարանի կողմից պարզման ենթակա իրավական նշանակություն ունեցող հարցերի առավել սեղմ շրջանակ, քանի որ Սահմանադրական դատարանը չի կարող 10-օրյա ժամկետում ստանձնել ընտրական գործընթացին մասնակից հազարավոր իրավասուբյեկտների, ընտրական հանձնաժողովների և այլ դատարանների լիազորությունների ու պարտականությունների վերակատարումը:

Վերը նշվածը լրացնում է այն հանգամանքը, որ սահմանադրական փոփոխություններին հաջորդեց ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ընդունումը (2007թ-ի նոյեմբերի 28) և ՀՀ վարչական դատարանի ստեղծումը (2008թ.), որին կարևոր իրավազորություն վերապահվեց ընտրական իրավունքի դատական պաշտպանության հարցում: Մասնավորապես, ՎԴՕ 206-213 հոդվածներն ամրագրեցին Վարչական դատարանի ինչպես վերը նշված իրավազորության շրջանակները, այնպես էլ դրանց քննության ընթացակարգերն ու ժամկետները, ինչի վերաբերյալ սահմանադրական դատարանն իր որոշմամբ սահմանել է, որ ՀՀ օրենսդրությամբ Սահմանադրական դատարանն իրավասու չէ քննության արարկա դարձնել բոլոր այն հարցերը, որոնք նախապես քննության պետք է առնվեն և իրավական լուծում ստանան ՀՀ

վարչական դատարանում, որի որոշումներն այդ հարցերում վերջնական են և վերանայման ենթակա չեն<sup>126</sup>:

Այնուամենայնիվ, մեր համոզմամբ, վերը նշված սահմանադրական փոփոխության արդյունքում գործնականում և տեսության մեջ ձևավորված տարաբնույթ մեկնաբանություններն անհիմն չեն, քանի որ, կարծում ենք, որ ոչ «ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճեր» և ոչ էլ «ընտրությունների արդյունքների հետ կապված վեճեր» ձևակերպումներն ամբողջությամբ չեն արտահայտում սահմանադրի կողմից տվյալ ձևակերպման հիմքում դրված իմաստը, ուստի ներկայումս ընթացող սահմանադրափրվական բարեփոխումների համատեքստում անխուսափելիորեն անհրաժեշտ է անդրադառնալ վերը նշված սահմանադրական ձևակերպման որոշակիացմանը՝ այն ավելի ընկալելի դարձնելու և տարաբնույթ մեկնաբանություններից զերծ մնալու համար, հատկապես, որ Սահմանադրական դատարանն իր որոշումներից մեկում հստակ պարզաբանում է տվել իր վերոնշյալ իրավասության շրջանակի վերաբերյալ՝ ամրագրելով. «ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման հետ կապված վեճերով սահմանադրական դատարանը պարզում է՝ արդյոք տվյալ որոշման ընդունման ժամանակ օրենքով սահմանված ընթացակարգին համապատասխան առկա են եղել ու հաշվի են առնվել .

ա) քվեարկության արդյունքների վերաբերյալ օրենքով սահմանված կարգով կազմված արձանագրությունը,

բ) վարչական դատարանի իրավասության շրջանակներում ընտրական գործընթացներին առնչվող վճիռները,

---

<sup>126</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2012թ. մայիսի 31-ի «Հայ Ազգային Կոնգրես» կուսակցությունների դաշինքի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 13-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին» N 265-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ գործով» թիվ ՍԴՈ-1028 որոշումը:



գ) ընտրական հանձնաժողովներում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքներով ընդունված որոշումները, դ) տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները,

ե) քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունված որոշումները<sup>127</sup>:

Այսպիսով, չնայած մասնագիտական գրականության մեջ առկա տարատեսակ կարծիքներին<sup>128</sup> և գործնականում ձևավորված թյուրըմբռնումներին, ակնհայտ է, որ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի համաձայն ՀՀ սահմանադրական դատարանը Սահմանադրությամբ նախատեսված կոնկրետ դեպքերում իրականացնում է ընտրական վեճի լուծման գործառնություն, և կարծում ենք, որ այս հանգամանքը լիովին արդարացված է, քանի որ նախագահի կամ պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերն անմիջականորեն կապված են ազատ ընտրությունների միջոցով ժողովրդի իշխանության իրականացման և ընտրելու ու ընտրվելու սահմանադրական իրավունքի իրացման հետ, հետևաբար դրանց՝ սահմանադրական արդարադատության մասնագիտացված բարձրագույն մարմնի կողմից քննելը բխում է ժողովրդավարության և մարդու իրավունքների գերակայության պահանջներից:

---

<sup>127</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2013թ. մարտի 14-ի «ՀՀ նախագահի թեկնածուներ Ռաֆֆի Կոչարյանի Զովհաննիսյանի և Անդրեաս Ղուկասյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ ԿԸՀ-ի 2013թ. փետրվարի 25-ի՝ «ՀՀ նախագահ ընտրվելու մասին» թիվ 62-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ գործով >> թիվ ՍԴՈ-1077 որոշումը:

<sup>128</sup> Տե՛ս Князев С. Д. Избирательные споры/ Известия ВУЗ-ов. Правоведение. 2001.№ 3. с. 65; Ищенко Е. П., Ищенко А. Е. Избирательные споры: возникновение, разрешение, предупреждение.-М.,2002.-с.121-126; Избирательное право и избирательный процесс в Российской Федерации. Учебник для вузов/ Отв. Ред. А. В. Иванченко-М., 1999.- էջեր 431-435:

Ներկայ ու մս աշխարհում գործող սահմանադրական արդարադատության իրականացնող մարմինների որոշ մասն ունի ընտրության նկատմամբ սահմանադրականությանն ու օրինականությանը որոշելու լիազորություն<sup>129</sup>: Դրանց մի մասում այդ մարմինները հսկողություն են իրականացնում ընտրության նկատմամբ (օրինակ՝ Ֆրանսիա, Պորտուգալիա), որոշ երկրներում վավերացնում են ընտրության արդյունքները (օրինակ՝ Մոլդովա, Ռումինիա), մի մասում էլ լուծում են ընտրության սահմանադրականության հետ կապված վեճերը (օրինակ՝ Վրաստան):

Սահմանադրական դատարանի կողմից ընտրական վեճերի քննության և լուծման առանձնահատկությունները ՀՀ Սահմանադրության 94-րդ հոդվածի համաձայն սահմանված են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենք 74-րդ հոդվածով:

Անդրադառնալով ընտրական վեճերով սահմանադրական դատավարության առանձնահատկություններին՝ կարելի է դիտարկել այդ **գործերի քննության առարկան**: Նախկինում ՀՀ սահմանադրական դատարանում քննվող գործին առնչվող փաստական հանգամանքները քննության առարկա էին հանդիսանում: Սակայն սահմանադրաիրավական բարեփոխումներից հետո 2006թ. հունիսի 1-ին ընդունված «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը նոր մոտեցում դրսևորեց այդ խնդրի նկատմամբ՝ ամրագրելով ոչ թե փաստական հանգամանքների, այլ փաստերի վերաբերյալ տեղեկությունների քննություն, ինչը կանխորոշում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե ընտրության նկատմամբ արդյունքների հետ կապված վեճերի, այլ ընտրության նկատմամբ արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի

<sup>129</sup> Տե՛ս Գյուլումյան Ա. «Սահմանադրական դատարանում ընտրական վեճերի քննության առանձնահատկությունները» // ՀՀ Սահմանադրական դատարան տեղեկագիր. N 1, 1999թ. էջ 7:

քննությունը: Նշված ձևակերպումն էլ իր հերթին հաստատում է այն հանգամանքը, որ սահմանադրական դատարանը լուծում է ոչ թե փաստի, այլ իրավունքի խնդիր:

Հարկ է նշել, որ չնայած ընտրական վեճերի քննության ընթացքում ՀՀ Սահմանադրական դատարանի առաջնահերթ խնդիրը ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման վավերականության ստուգումն է, այնուամենայնիվ, հարկ է փաստել, որ ՀՀ սահմանադրական դատարանը այդ գործերը քննելիս չի կարող զերծ մնալ իր առաջնահերթ գործառույթի իրականացումից՝ այն է՝ Սահմանադրության գերակայության ապահովումը: Ուստի, կարծում եմ, որ նման դեպքերում այն զուգահեռ իրականացնում է դատական սահմանադրական վերահսկողության գործառույթ, այսինքն գործի քննության ընթացքում լուծում է նաև կիրառված իրավական ակտի սահմանադրականության հարցը: Հետաքրքիր իրավիճակ է առաջանում, երբ ընտրական վեճի քննության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը հայտնաբերում է հակասահմանադրական նորմի կիրառում: Ինչպիսին պետք է լինեն ՀՀ սահմանադրական դատարանի գործողությունները՝ ընդհատել ընտրական վեճի քննությունը և անդրադառնալ նորմի սահմանադրականության հարցի որոշմանը, թե շարունակել գործի քննությունը: Իհարկե, ելնելով ընտրական վեճի քննության համար նախատեսված ժամկետների սեղմությունից, ՀՀ սահմանադրական դատարանը գործի քննության դադարեցման իրավասություն չունի, այնուամենայնիվ հակասահմանադրական նորմ հայտնաբերելու դեպքում հենց ընտրական վեճի քննության գործով սահմանադրական դատարանը մեկնաբանում է նաև այդ հարցը: Սակայն այդ մասին եզրահանգումներ են արվում ընտրական վեճով կայացված որոշման պատճառաբանական և ոչ թե եզրափակիչ մասում, որտեղ որ ՀՀ սահմանադրական դատարանն ամրագրում է ընտրական վեճի լուծման

արդյունքը: Այնուամենայնիվ, այս հանգամանքը չի նսեմացնում հակասահմանադրական նորմի վերաբերյալ արված եզրահանգումների նշանակությունը, քանի որ կարող են լինել դեպքեր, երբ հակասահմանադրական նորմի բացահայտմամբ պայմանավորված լինի ընտրական վեճով կայացված որոշումը, այսինքն պատճառաբանական մասում ամրագրված եզրահանգումը հիմք հանդիսանա որոշման եզրափակիչ մասի համար, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանը կարող է հանգել այն եզրակացության, որ եթե ընտրական հանձնաժողովը չկիրառեր հայտնաբերված հակասահմանադրական նորմը, այլ բնույթի որոշում կկայացներ, հետևաբար այլ կլինեին նաև ընտրության արդյունքները:

Ընտրական վեճերով սահմանադրական դատավարության առանձնահատկությունն է հանդիսանում հատուկ **դատավարական ժամկետների նախատեսումը**: Քանի որ ողջ ընտրական գործընթացը կաշկանդված է սեղմ ժամկետներով, բացառությունն չէ նաև ընտրական վեճերով սահմանադրական արդարադատությունը, որի իրականացման համար օրենքը նախատեսել է բավականին կարճ ժամկետներ: Մանավորապես, ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետկապված վեճերով ՀՀ սահմանադրական դատարան կարելի է դիմել արդյունքների պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ 5-րդ օրը, մինչև ժամը 18.00-ն:

Ինչ վերաբերում է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից կայացվող որոշումների համար նախատեսված ժամկետներին, ապա Հանրապետության Նախագահի ընտրության արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով սահմանադրական դատարանը պետք է որոշում ընդունի դիմումի մուտքագրման օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում: Պատգամավորների՝ համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ

կապված վեճերով որոշում պետք է ընդունի դիմումի մուտքագրման օրվանից ոչ ուշ, քան 15 օր հետո, իսկ պատգամավորների՝ մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով՝ դիմումի մուտքագրման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս հետո: Սակայն ՀՀ սահմանադրական դատարանի ծանրաբեռնվածությունից ելնելով, պատգամավորների՝ մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով սահմանադրական դատարանի որոշմամբ գործերի քննության ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան 50 օրով:

Ակնհայտ է, որ Հանրապետության Նախագահի և պատգամավորների՝ համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով որոշում կայացնելու համար օրենսդիրը, ի տարբերություն պատգամավորների՝ մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի վերաբերյալ կայացվող որոշումների համար տրվող ժամկետի, սահմանադրական դատարանին տվել է բավականին սեղմ ժամկետ, որը չունի երկարաձգման հնարավորություն: Դա պայմանավորված է նրանով, որ Հանրապետության Նախագահի և պատգամավորների՝ համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքներից է կախված իշխանության կարևորագույն մարմինների ձևավորումը, որի հետաձգումը կխաթարի պետական կառավարման բնականոն ընթացքը:

Անդրադառնալով ընտրական վեճերով սահմանադրական արդարադատության առանձնահատկություններին, անհրաժեշտ ենք համարում քննարկել Օրենքով նախատեսված սահմանադրարարատարական սկզբունքները, որոնք առանձնահատուկ

կիրառում են ստանում Սահմանադրական դատարանի կողմից ընտրական վեճերի քննության և լուծման ընթացքում:

Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն ՀՀ սահմանադրական դատարանում գործերի քննության հիմնական սկզբունքներն են հանդիսանում ՀՀ սահմանադրական դատարանի անկախությունը, գործի հանգամանքների ի պաշտոնե պարզումը, կողմերի իրավահավասարությունն ու մրցակցությունը, կոլեգիալությունն ու հրապարակայնությունը:

Չնայած այն հանգամանքին, որ այս սկզբունքները միմյանց հետ սերտորեն փոխկապված են, այնուամենայնիվ ընտրական վեճերի քննության և լուծման ընթացքում օրենքը որոշակի առանձնահատուկ մոտեցում է դրսևորում գործի հանգամանքների ի պաշտոնե պարզելու և կողմերի իրավահավասարության ու մրցակցության սկզբունքների կիրառման հարցում: Այսպես, օրենքն ամրագրում է կողմերի իրավահավասարությունն և մրցակցությունն, սակայն այս դրույթին համադրվում է օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասը, որի համաձայն որպես պատասխանող կողմ գործին ներգրավվում է ընտրությունների արդյունքներն ամփոփող պետական մարմինը, ի հավելումն դրա՝ կարող են ներգրավվել հարակից պատասխանողներ, որոնք նույնպես պետական իշխանության կամ տեղական ինքնակառավարման մարմիններ են, այսինքն պատասխանող կողմի դերում միշտ հանդես է գալիս պետությունը, որը, բնականաբար չի կարող հավասար <<հակառակորդ>> լինել դիմող կողմին, իսկ փաստացի անհավասար դատավարական մրցակիցների դեպքում, երբ նրանցից մեկը պետությունն է, նրա մրցակիցը համարվում է պաշտպանության հատուկ միջոցների կարիք ունեցող, որպեսզի նրա դատավարական

շանսերը հավասարվեն հզոր մրցակցի շանսերի հետ<sup>130</sup>: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ օրենսդիրը առանձնահատուկ մոտեցում է ցուցաբերել իրավահավասարության և մրցակցության սկզբունքի կիրառման վերաբերյալ և ամրագրել այնպիսի դրույթներ, որոնք շահեկան պայմաններ են նախատեսում դիմող կողմի համար: Այսպես, օրենքի 74-րդ հոդվածի համաձայն՝ փաստերի վերաբերյալ դիմող կողմի ներկայացրած տեղեկությունները համարվում են հավաստի, եթե պատասխանող կողմը խուսափում է դրանց վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտելուց, և եթե դրանք չեն հակասում սահմանադրական դատարանի կողմից ձեռք բերված, տվյալ գործով որոշում ընդունելու համար էական նշանակություն ունեցող այլ ապացույցների (74-րդ հոդվ. 10-րդ մաս): Եթե պատասխանող կողմն ընդունում է այն հանգամանքները, որոնցով դիմող կողմը հիմնավորում է իր պահանջներն ու առարկությունները, ապա վերջինս ազատվում է այդ հանգամանքների վերաբերյալ հետագայում ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությունից (74-րդ հոդվ. 11-րդ մաս): Սույն հոդվածում նշված գործերով սահմանադրական դատարանը պարզում է իրավասու ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների վերաբերյալ օրենքով սահմանված կարգով ներկայացված բողոքների քննարկումը (քննությունը) անհիմն մերժելու, նման բողոքները սահմանված ժամկետներում չքննարկելու (չքննելու) և քննարկումից (քննությունից) հրաժարվելու կամ խուսափելու հանգամանքները, և իրավասու է նման դեպքերում բողոքներում արժարժվող փաստերը գնահատելու որպես հավաստի և անվիճելի, եթե այդպիսի գնահատումը չի հակասում գործի քննության ընթացքում ձեռք բերված այլ ապացույցների (74-րդ հոդվ. 13-րդ մաս):

---

<sup>130</sup> St' u Benda/Klein, Lehrbuch des Verfassungsprozessrechts, Verlagsgruppe Huthing Jehle-Rehm, Heidelberg, 2001, էջ 101:

Ինչպես տեսնում ենք, վերը նշված դրույթների համաձայն, դիմող կողմի ներկայացված փաստերը, հիմնավոր առարկությունների չհանդիպելու դեպքում, համարվում են արժանահավատ՝ առանց Լրացուցիչ ապացուցման անհրաժեշտության: Այս նորմերի առկայությունը, ըստ էության, օրենսդրական երաշխիք է բոլոր այն սուբյեկտների իրավունքների պաշտպանության համար, ովքեր ՀՀ Սահմանադրությամբ սահմանված կարգով իրավասու են դիմելու Սահմանադրական դատարան՝ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով: Այնուամենայնիվ, վերը նշված նորմերի առկայության բացարձակ արդարացիության հետ համաձայնվել չենք կարող, քանի որ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտները, այն է՝ Հանրապետության նախագահի և պատգամավորության թեկնածուները, հաճախ այնպիսի փաստացի հնարավորություններ են ունենում, ինչը Լիարժեք ապահովում է նրանց համար իրավահավասար կարգավիճակ: Բացի այդ, գաղտնիք չէ, որ ներկայիս իրավաքաղաքական իրողությունների համատեքստում հաճախ վերը նշված սուբյեկտներն իրենց՝ Սահմանադրական դատարան դիմելու իրավունքն օգտագործում են քաղաքական նպատակներով՝ փորձելով հրապարակային քննության և դրանց ընթացքն ու արդյունքներն աղավաղելու միջոցով հրահրել հասարակության անհանդուրժողականությունը: Հետևաբար, կարծում ենք, հարկ է վերոնշյալ նորմերի կիրառումը թողնել Սահմանադրական դատարանի հայեցողությանը, ելնելով կողմերի փաստացի հնարավորություններից, այլ կերպ ասած, սահմանել ոչ թե իմպերատիվ, այլ դիսպոզիտիվ նորմ, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարանին, ելնելով յուրաքանչյուր գործի



սուբյեկտային կազմի առանձնահատկություններից, ապահովել իրական մրցակցություն և կողմերի իրավահավասարություն:

Ինչ վերաբերում է գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքին, ապասրահությունը կայանում է նրանում, որ չնայած այն հանգամանքին, որ կողմերը գործի քննության ընթացքում ներկայացնում են ապացույցներ գործի հանգամանքների պարզման համար, այնուամենայնիվ, անկախ կողմերից, դատարանն իրավասու է ինչպես իր նախաձեռնությամբ ձեռք բերել, այնպես էլ հանձնարարել կողմերից յուրաքանչյուրին ներկայացնելու անհրաժեշտ ապացույցներ՝ արդարացի որոշում կայացնելու համար: Սրանից կարելի է եզրակացնել, որ չնայած օրենքը չի մատնանշում ապացուցման բեռը կրող սուբյեկտին, ինչպես որ արված է այլ դատավարական նորմերում, այնուամենայնիվ այդ սուբյեկտը հանդիսանում է Սահմանադրական դատարանը:

Ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով սահմանադրական դատարանն ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը.

- 1) ընտրական հանձնաժողովի որոշումը թողնել ուժի մեջ.
- 2) անվավեր ճանաչել ընտրական հանձնաժողովի որոշումը և՝
  - ա) անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները,
  - բ) ընտրված ճանաչել համապատասխան թեկնածուին կամ կուսակցության (դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված համապատասխան թվով թեկնածուների,
  - գ) ընտրությունները ճանաչել չկայացած,
  - դ) նշանակել ընտրության երկրորդ փուլ:

Բացի վերը նշված որոշումներից, գործի քննության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանն իրավասու է ընդունել ևս մի որոշում, որը լրացուցիչ երաշխիք է ընտրությունների օրինականության ապահովման հարցում: Մասնավորապես, եթե գործի

քննությունն արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը, սպառելով ապացույցներ ձեռք բերելու համար սույն օրենքով նախատեսված բոլոր միջոցները, այդուհանդերձ, հնարավորություն չի ունեցել պարզելու ընտրության իրական արդյունքները, սակայն ՀՀ սահմանադրական դատարանի կողմից որպես հավաստի գնահատված ապացույցներից ակնհայտ է դարձել, որ ընտրախախտումներն ունեցել են կազմակերպված, զանգվածային, կրկնվող կամ պարբերական բնույթ, և դրանց համարումը վկայում է դրանց միջև համակարգային այնպիսի փոխկապակցվածության մասին, որի պայմաններում խախտվում են Սահմանադրության 4-րդ հոդվածով ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքները, ապա որոշում ընդունելիս սահմանադրական դատարանն իրավասու է այդ հիմքով անվավեր ճանաչելու ընտրությունների արդյունքները:

Չնայած այս նորմի, որպես ընտրությունների օրինականության ապահովման լրացուցիչ երաշխիքի առկայությունը, այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշել, որ ընտրական օրենսդրությունը չի ամրագրում ընտրական հանձնաժողովների գործունեության, դրանց որոշումների իրավաչափության գնահատման իրական չափանիշներ, որոնք հաշվի առնելով էլ ՀՀ սահմանադրական դատարանը կարողանա ստուգել դրանց հիման վրա կայացված՝ ընտրությունների արդյունքներն ամփոփող որոշման օրինականությունը: Սակայն որքան էլ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները հիմնավոր ու փաստարկված լինեն, միևնույն է, կգտնվի հանրության մի ստվար զանգված, որի կողմից այն չի ընդունվի, ինչի պատճառը ոչ միայն քաղաքական և իրավական մշակույթի ցածր մակարդակն է, այլ և երկրի քաղաքական համակարգի և իշխանության նկատմամբ անվստահությունը, ինչը զգալի չափով պայմանավորված է երկրում քաղաքական, տնտեսական և վարչական ներուժի միահյուսմամբ, որն առաջին հերթին դրսևորվում է հատկապես ընտրությունների

ընթացքում: Ուստի ընտրական իրավունքների պաշտպանության գործընթացի նկատմամբ հանրության վստահության ամրապնդման համար ընտրական հնարքների բարելավմանը գուգահեռ պետք է ապահովել ներկայացուցչական մարմինների ձևավորման ընթացքում քաղաքական և պետական շահերի համակցման բացառում, ինչը և թույլ կտա ակնկալել արդար և թափանցիկ ընտրությունների անցկացում:

## **ԵՃՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ**

Սույն աշխատության եզրակացության մեջ ամփոփվել են կատարված հետազոտության արդյունքները և ներկայացվել մի շարք եզրահանգումներ ու առաջարկություններ:

1. <<Ընտրական վեճ>> իրավական եզրույթի համալիր հետազոտությունը թույլ է տալիս հանգել այն եզրակացության, որ ընտրական վեճը հանդիսանում է միջճյուղային ինստիտուտ: Յենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ ընտրական վեճերը, կախված դրանց առարկայից, անցկացվող ընտրության մակարդակից, վեճը քննող մարմնից և այլն, կարգավորվում են իրավունքի տարբեր ճյուղերով, օրինակ, սահմանադրական, վարչական, քրեական և այլն: Սրանից էլ բխում է այն, որ գործող օրենսդրության մեջ ընտրաիրավական հարաբերություններ կարգավորող յուրաքանչյուր իրավական ակտ յուրովի մոտեցում է ցուցաբերել «ընտրական վեճ» իրավական երևույթի ինչպես բովանդակային, այնպես էլ կարգավորման ընթացակարգային առանձնահատկությունների նկատմամբ: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ նույնաբնույթ հարաբերություններ կարգավորող իրավական ակտերում տարբեր եզրույթների կիրառումը ոչ միայն չի նպաստում օրենսդրության ներդաշնակեցմանը, այլև դժվարություններ է առաջացնում իրավակիրառ գործունեության ընթացքում՝ առավել խոցելի դարձնելով կարգավորվող ոլորտը:

Ուստի, առաջարկվել է ՀՀ ընտրական օրենսգրքում ամրագրել «ընտրական վեճ» եզրույթի համապարփակ բնորոշումը, որը կիրառելի կլինի նաև այլ իրավական ակտերով կարգավորվող ընտրաիրավական հարաբերությունների կարգավորման ընթացքում:

2. Ընտրական վեճերի առաջացման պատճառների համակարգի համալիր ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ ընտրական վեճի առաջացման պատճառ է հանդիսանում իրավախախտումը, որն իր հերթին պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Հաճախ մասնագիտական գրականության մեջ դրանցից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը դիտարկվում է որպես ընտրական վեճի առաջացման պատճառ, մինչդեռ այն պարզապես նպաստում է իրավախախտման առաջացմանը, ինչն էլ հենց հիմք է հանդիսանում ընտրական վեճի առաջացման համար: Ուստի, առաջարկվել ենք արմատապես վերանայել ընտրական վեճերի առաջացման պատճառների համակարգի ուսումնասիրության վերաբերյալ ձևավորված մոտեցումը, որի դեպքում ընտրական իրավունքի խախտում հանգեցնող յուրաքանչյուր գործոն դիտարկվում է որպես ընտրական վեճի առաջացման պատճառ և խեղաթյուրում տվյալ հասկացության նպատակային նշանակությունը:

3. Կարևորելով ընտրական իրավունքների հանրային նշանակությունը և ելնելով այն հանգամանքից, որ ընտրությունների ընթացքում պետական մարմնի կայացրած որոշմամբ հաճախ խախտվում են ոչ թե մեկ անձի, այլ մի որոշակի ընտրազանգվածի ընտրական իրավունքներ, առաջարկվել է որպես ընտրական գործընթացի անորոշ քանակով մասնակիցների իրավունքների պաշտպանության միջոց կիրառել խմբային հայցը: Այն, ունենալով հանրային բնույթ, բխում է վարչական արդարադատության էությունից, և նպատակահարմար է կիրառել ընտրական վեճերի քննության ընթացքում: Միևնույն ժամանակ,

հաշվի առնելով խմբային հայցի ինստիտուտի առնչությամբ առկա սուր տարածայնություները, առաջարկվել է կիրառել ոչ թե ավանդաբար ձևավորված խմբային հայցի ինստիտուտը, այլ միայն դրա առանձին դրսևորումներ՝ համապատասխանեցնելով գործող իրավակարգավորումների հետ:

4. Ընտրական իրավասուբյեկտության համակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բացի քաղաքացիական իրավասուբյեկտության համար ներկայացվող ընդհանուր պահանջներից, օրենքը սահմանում է և րացուցիչ չափանիշներ (անձի քաղաքացիությունը, առողջական վիճակը, դատական կարգով անգործունակ ճանաչվելը, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման վայրում գտնվելը, բնակության վայրը և այլն)՝ կարևորելով դրանց դերն ու նշանակությունը պետական համակարգի կայացման գործընթացում: Ընդհանուր առմամբ թվում է, թե ընտրական օրենսդրությամբ նախատեսված ընտրական իրավասուբյեկտության առաջացման չափանիշներն անհրաժեշտ և բավարար են՝ կայուն և իրավաչափ ընտրական գործընթացի կազմակերպման հարցում, այնուամենայնիվ, ընտրական վեճի սուբյեկտային կազմի առանձնահատկությունների համալիր հետազոտությունը թույլ է տալիս հանգել այն եզրակացության, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է վարչական կարգով քննվող ընտրական վեճի սուբյեկտներին ներկայացվող այնպիսի պահանջներ, որոնք ոչ միայն չեն նպաստում, այլ և երբեմն խոչընդոտում են ազատ և թափանցիկ ընտրությունների անցկացման գործընթացին: Ուստի, ատենախոսությունում առաջարկվել է վերանայել վերոնշյալ նորմը և ամրագրել այնպիսի կարգավորում, որը չի սահմանափակի ընտրական գործընթացի մասնակիցների՝ իրենց ընտրական իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու հնարավորությունը:

5. Ընտրական վեճերի քննությանը ունենալու լուծումն, ըստ էության, իրենից ներկայացնում է անձի ընտրական իրավունքների պաշտպանության եղանակ, ինչն իրականացվում է ինչպես վարչական, այնպես էլ դատական կարգով: ԶԶ ընտրական օրենսգիրքը, որպես ընտրական վեճերի՝ վարչական կարգով քննությանը ունենալու լուծում իրականացնող մասնագիտացված մարմիններ, առանձնացնում է ընտրական հանձնաժողովներին: Այնուամենայնիվ, ուսումնասիրությունները վկայում են, որ վարչական կարգով ընտրական վեճերի լուծում իրականացվում է նաև ընտրությունների կազմակերպմանն ու անցկացմանն աջակցող մի շարք այլ մարմինների, մասնավորապես ԶԶ ոստիկանության, Զեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների և այլնի կողմից: Գիտագործնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԶԶ ներկայիս սոցիալ-տնտեսական, իրավաբաղադրական պայմաններում նախընտրելի է ընտրական վեճերի՝ վարչական կարգով քննության գործող տարբերակը: Պարզապես, ընտրական իրավունքների պաշտպանության պատշաճ համակարգի երաշխավորման տեսանկյունից, առաջարկվել է ԶԶ ընտրական օրենսգրքում հղում կատարել համապատասխան օրենսդրությանն այն բոլոր դեպքերում, երբ ներկայացվող գործի քննության առանձնահատկությունները սահմանված են այդ օրենսդրությամբ:

6. ԶԶ ընտրական օրենսդրության համաձայն, ընտրական հանձնաժողովներն ընտրական վեճերի քննությանը ունենալու լուծումն իրականացնում են մի շարք հիմնարար սկզբունքների հիման վրա, որոնցից, հատկապես, մեր կողմից առանձին քննության առարկա է դարձել հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքը: Չնայած գործնականում այս սկզբունքի վերաբերյալ ձևավորված թյուրմեկնմանը՝ որպես կոռուպցիոն ռիսկեր պարունակող երևույթի, ատենախոսության մեջ հիմնավորվել է, որ

այս սկզբունքը ենթադրում է ոչ թե ընդհանուր առմամբ պետական մարմինների լիազորությունների ծավալի կամայական սահմանափակում, այլ ամրագրում է լիազորությունների կատարման առաջնահերթությունն ու հստակեցնում իրականացման նախապայմանները: Ուստի, առաջարկվել է վերանայել այս սկզբունքի ընկալման վերաբերյալ ձևավորված պատկերացումները, քանի որ դրան շեղորեն կատարումը երաշխավորում է ընտրական վեճի օբյեկտիվ քննություն և լուծում, որովհետև այն կոչված է վարչարարության ընթացքում կամայականությունների դրսևորման բացառմանը:

7. ՀՀ ընտրական օրենսգրքի՝ ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների (անգործության) բողոքարկման կարգը սահմանող նորմի ուսումնասիրությունից բխում է, որ օրենքը սահմանում է ընտրական հանձնաժողովի՝ որպես կոլեգիալ մարմնի որոշումների, գործողությունների (անգործության) բողոքարկման կարգը, իսկ նրա անդամների գործողությունների (անգործության)՝ վարչական կարգով բողոքարկման վերաբերյալ ՀՀ ընտրական օրենսգիրքը որևէ դրույթ չի պարունակում: Մինչդեռ գործնական հետազոտությունները ցույց են տալիս, որ օրենսդիրն ընտրական հանձնաժողովների անդամներին այնպիսի լայնածավալ լիազորություններով է օժտել, որ վերջիններս իրենց իրավասության իրացման կամ դրանց չարաշահման միջոցով հնարավորություն ունեն խախտելու քաղաքացիների ընտրական իրավունքները, ուստի ընտրական հանձնաժողովների անդամների գործողությունների (անգործության) բողոքարկման կարգի վերաբերյալ ՀՀ ընտրական օրենսգրքի <<լուծությունը>> արդարացված չէ և հղի է անբարենպաստ հետևանքների առաջացման վտանգով: Հետևաբար, առաջարկվել է օրենսդրությամբ ամրագրել

նաև ընտրական հանձնաժողովների առանձին անդամների գործողությունների (անգործություն) բողոքարկման ընթացակարգ:

8. Ընտրական հանձնաժողովների կողմից ընտրական վեճերի արդյունավետ քննությունն ապահովելու, ընտրական վեճերի՝ վարչական կարգով քննության գործընթացի նկատմամբ հասարակության վստահության աճի, ընտրական հանձնաժողովների պատասխանատվության աստիճանը բարձրացնելու նպատակով ատենախոսությունում առաջարկվել է ընտրական վեճերի քննության գործընթաց ներդնել մոնիթորինգի ինստիտուտը: Այն ենթադրում է դիտորդական խմբի կողմից ընտրական վեճի քննության ընթացքում ընտրական հանձնաժողովի գործունեության արդյունավետության գնահատում, առկա թերությունների վերհանում և համակարգում ինչպես կիրառվող նորմատիվ ակտերում, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև ոլորտի կատարելագործմանն ուղղված համապատասխան առաջարկությունների մշակում և հրապարակում, որը պետք է իրականացվի հասարակական հիմունքներով:

9. Վարչական կարգով ընտրական վեճերի քննության և լուծման ընթացքում առանձնահատուկ դեր ունի ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Այն վարչական կարգով ընտրական վեճերի լուծումն իրականացնող վերադաս վարչական ասյանն է, սակայն ընտրական վեճի քննության ընթացքում հանդես է գալիս ոչ միայն որպես ընտրական վեճը քննող մարմին, այլ որպես սուբյեկտ, որն առանձնահատուկ իրավասությամբ է օժտված ընտրական օրենսդրության կիրառման ոլորտում (մասնավորապես՝ պարզաբանումներ տալու գործառույթը): Օրենսդրի կողմից ԿԸՀ-ին նման լայն լիազորություններով օժտելը, հատկապես ընտրական վեճերի քննության ընթացքում, հաճախ կարող է անբարենպաստ հետևանքներ առաջացնել ընտրական վեճի կողմի համար, ինչից էլ



բխում է նշված պետական մարմինն անհամաչափ  
լիազորություններով օժտելու գաղափարը: Քանի որ ԿԸՅ-ի կողմից  
ընտրական վեճերի քննությունն ու լուծումն արդյունավետ  
իրականացնելու գործընթացը սերտորեն կապված է ԿԸՅ-ի  
ձևավորման գործընթացի հետ, ուստի ատենախոսության մեջ  
հիմնավորվել է ինչպես ԿԸՅ-ի ձևավորման ընթացակարգի  
փոփոխության, այնպես էլ իրավասության հստակեցման  
անհրաժեշտությունը՝ ժողովրդավարության պահանջներից բխող  
իրավական լուծումներով:

10. Վարչական արդարադատության կիրառումը ընտրական  
իրավունքների պաշտպանության ոլորտում իսկապես արդարացված է,  
քանի որ հիմնականում ընտրական վեճերի կողմեն հանդիսանում  
պետական կառավարման (հատկապես ընտրական հանձնաժողովներ) և  
տեղական ինքնակառավարման մարմիններն ու դրանց պաշտոնատար  
անձինք, որոնց վարչական ակտերով, գործողություններով կամ  
անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են  
խախտվել անձի իրավունքները և ազատությունները: Օրենսդիրն  
ընտրական վեճերն իրավացիորեն դիտարկել է որպես հատուկ  
վարույթ և վերջիններիս քննության համար նախատեսել մի շարք  
ընթացակարգային առանձնահատկություններ: Այնուամենայնիվ,  
կարծում ենք, որ դրանց մի մասը, մասնավորապես, ընտրական  
գործերի ընդդատությանը, վարչական դատարան դիմելու իրավունք  
ունեցող սուբյեկտների շրջանակին, դատական ակտի ուժի մեջ  
մտնելուն ուղղված իրավակարգավորումներում առկա են ներքին  
անհամապատասխանություններ և համահունչ չեն վարչական  
արդարադատության՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության  
միջոցի էությունը:

11. Ընտրական գործընթացների իրավակարգավորման խնդրում ՀՀ  
սահմանադրական դատարանի դերի և նշանակության ընկալման  
վերաբերյալ 2005թ-ի նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքներով

կատարված սահմանադրական փոփոխությանը հետո տարատեսակ մեկնաբանություններ են ձևավորվել՝ Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակի վերաբերյալ, քանի որ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետն ամրագրում է, որ սահմանադրական դատարանը լուծում է ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետկապված վեճեր, իսկ մինչ սահմանադրական փոփոխությունները՝ Սահմանադրական դատարանը լուծում էր ընտրությունների արդյունքների հետկապված վեճեր: Այս փոփոխության արդյունքում թե՛ գործնականում, թե՛ տեսության մեջ ձևավորված տարաբնույթ մեկնաբանությունները թույլ են տալիս հանգել այն եզրակացության, որ ոչ «<ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետկապված վեճեր>>, և ոչ էլ «<ընտրությունների արդյունքների հետ կապված վեճեր>> ձևակերպումներն ամբողջությամբ չեն բացահայտում սահմանադրի կողմից տվյալ ձևակերպման հիմքում դրված իմաստը, ուստի ներկայումս ընթացող սահմանադրափոփոխական բարեփոխումների համատեքստում անխուսափելիորեն անհրաժեշտ է անդրադարձնել վերը նշված ձևակերպումն առավել ընկալելի դարձնելուն, հատկապես, որ Սահմանադրական դատարանը, որպես ուղենիշ, իր

որոշումներից մեկում<sup>131</sup> հստակ պարզաբանում է տվել վերոնշյալ իրավասության շրջանակի վերաբերյալ :

---

<sup>131</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2013թ. մարտի 14-ի «ՀՀ Նախագահի թեկնածուներ Ռաֆֆի Կոչարյանի, Յուրի Գրիգորյանի և Անդրեաս Ղուկասյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ ԿԸՀ-ի 2013թ. փետրվարի 25-ի՝ «ՀՀ Նախագահ ընտրվելու մասին» թիվ 62-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ գործով >> թիվ ՍԴՈ-1077 որոշումը:

Սույն աշխատությունը հանդիսանում է փորձ իրավագիտության տեսանկյունից ուսումնասիրելու ընտրական վեճերի հետ կապված հիմնարար խնդիրները և չի հավակնում լինել վերջնական և բացարձակ, քանի որ, ելնելով հարցի կարևորությունից ու արդիականությունից, ինչպես նաև մշտապես դինամիկ զարգացման մեջ գտնվելու տեսանկյունից, այն ունի հետագա ուսումնասիրության անհրաժեշտություն:

**ՕԳՏԱԳՈՐԾԿԱՃ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ**

ՆՈՐՄԱՏԻՎ ԵՎ ԱՅԼ ԻՐԱԿԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. ՀՀ Սահմանադրություն (ընդունվել է հանրաքվեով 1995թ-ի հունիսի 5-ին, փոփոխվել է հանրաքվեով 2005թ. նոյեմբերի 27-ին), [www.arlis.am](http://www.arlis.am):
2. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (ընդունվել է 1948թ դեկտեմբերի 10-ին), [www.un.am/res/Human Rights/Armenian Documents/UDHR\\_arm.pdf/](http://www.un.am/res/Human%20Rights/Armenian%20Documents/UDHR_arm.pdf/):
3. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա (ընդունվել է 1950 նոյեմբերի 4-ին), [www.arlis.am/Document View.aspx?docid/20870/](http://www.arlis.am/Document%20View.aspx?docid/20870/):
4. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ընդունվել է 1966թ դեկտեմբերի 16-ին), [www.arlis.am/Document View.aspx?docid/18500/](http://www.arlis.am/Document%20View.aspx?docid/18500/):
5. ՀՀ Ընտրական օրենսգիրք (ընդունվել է 05.02.1999թ., չի գործում), ՀՀ Պաշտոնական տեղեկագիր (Ոչ պաշտոնական հրատ.), Ընտրությունների մասին օրենսդրություն, Երևան, 2002:
6. ՀՀ Ընտրական օրենսգիրք (ընդունվել է 26.05.2011թ), ՀՀՊՏ 2011.06.16/36(839):
7. ՀՀ Վարչական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 05.12.2013թ.), ՀՀՊՏ 2013.12.28/73(1013)1:
8. <<Սահմանադրական դատարանի մասին>> ՀՀ օրենք (ընդունվել է 01.06.2006թ.), ՀՀՊՏ 2006.06.21(487):
9. <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենք, (ընդունվել է 18.02.2004թ.):
10. <<Քաղաքացիության մասին>> ՀՀ օրենք (ընդունվել է 06.11.1995թ.), ՀՀԱԺՏ 1995/8:
- 11.<<Ոստիկանության մասին >> ՀՀ օրենք (ընդունվել է 16.04.2001թ.), ՀՀՊՏ 2001.05.31/15(147):

12. <<Չանգվածային լրատվության մասին>> ՀՀ օրենք (ընդունվել է 13.12.2003թ.), ՀՀ ՊՏ 2004.01.29/6(305):
13. <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենք (ընդունվել է 03.04.2002թ.),  
ՀՀ ՊՏ 2002.05.21/15(190):
14. <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենք (ընդունվել է 07.05.2002թ.), ՀՀ ՊՏ 2002.06.21/21(196):
15. <<Հասարակական կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենք (ընդունվել է 04.12.2001թ.), ՀՀ ՊՏ 2001.12.27/42(174):
16. ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթուղթ. 1990թ.  
[www.policemonitoring.org/Download File/3darm\\_Law.104.pdf](http://www.policemonitoring.org/Download File/3darm_Law.104.pdf):
17. ՀՀ Սահմանադրական դատարանի 2008թ. մարտի 8-ի <<Հանրապետության նախագահի թեկնածուներ Տիգրան Կարապետյանի և Լեվոն Տեր-Պետրոսյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2008 թվականի փետրվարի 24-ի՝ «Հանրապետության նախագահ ընտրվելու մասին» թիվ 24-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ գործով>> ՍԴՈ-736 որոշում, [www.concourt.am](http://www.concourt.am):
18. ՀՀ Սահմանադրական դատարանի 2010թ. ապրիլի 23-ի <<ՀՀ ԱԺ մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին>> թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 17–Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ գործով>> ՍԴՈ-880 որոշում, [www.concourt.am](http://www.concourt.am):
19. ՀՀ Սահմանադրական դատարանի 2012թ մայիսի 31-ի <<Հայ Ազգային Կոնգրես» կուսակցությունների դաշինքի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 13-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով

- պատգամավորներ ընտրվելու մասին» N 265-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ գործով»> ՍԴՈ-1028 որոշում, [www.concourt.am](http://www.concourt.am):
20. ՀՀ Սահմանադրական դատարանի 2013թ. մարտի 14-ի «ՀՀ Նախագահի թեկնածուներ Րաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի և Անդրեաս Ղուկասյանի դիմումների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 25-ի՝ «Հայաստանի Հանրապետության նախագահ ընտրվելու մասին» թիվ 62-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ գործով»> ՍԴՈ-1077 որոշում, [www.concourt.am](http://www.concourt.am):
21. ՀՀ Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-54(ՎԴ) որոշում, <http://www.arlis.am>:
22. Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի 22.04.2013թ. N 8-Ո որոշում, [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_145469/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_145469/):
23. ՀՀ ԿԸՀ «Թիվ 7 ընտրատարածքում ՀՀ ԱԺ ընտրությունների մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Ն. Փաշինյանի և նրա լիազոր ներկայացուցիչ Վ. Հովակիմյանի դիմում-բողոքի քննարկման մասին»> 2012թ. ապրիլի 27-ի վարչական վարույթ, ք. Երևան, [www.election.am](http://www.election.am):
24. ՀՀ ԿԸՀ «Քաղաքացի Տիգրան Եգորյանի բողոքի քննության մասին»> 2013թ. մարտի 06-ի վարչական վարույթ, ք. Երևան, [www.election.am](http://www.election.am) :
25. Թիվ 17 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2013թ. փետրվարի 23-ի N6-Ա որոշում, [www.election.am](http://www.election.am):
26. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013թ. փետրվարի 21-ի «Քաղաքացի Գևորգ Կալեչյանի դիմումի քննության մասին»> 56-Ա որոշում, [www.election.am](http://www.election.am):
27. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013թ. մարտի 6-ի «Քաղաքացի Տիգրան Եգորյանի բողոքի քննության մասին»> 68-Ա որոշում, [www.election.am](http://www.election.am) :

28. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013թ. փետրվարի 28 <<Հանրապետության նախագահի թեկնածու Րաֆֆի Կ. Հովհաննիսյանի վստահված անձ Լուսինե Պետրոսյանի դիմում-բողոքի քննության մասին>> 63-Ա որոշում, [www.election.am](http://www.election.am) :

29. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013թ. մարտի 6-ի <<Իրավունքի եվրոպա միավորում>> Հասարակական կազմակերպության դիտորդների բողոքի քննարկման մասին, 67-Ա որոշում, [www.election.am](http://www.election.am):

30. Декларация о свободных и справедливых избирательных критериях. М. 1994, [http://www.democracy.ru/library/laws/international/el\\_declaration1994.html](http://www.democracy.ru/library/laws/international/el_declaration1994.html)

31. Демократизация выборов, Резолюция 1897(2012), [http://www.coe.int/T/r/Parliamentary\\_Assembly/%5BRussian\\_documents%5D/%5B2012%5D/%5BOct2012%5D/Res1897\\_rus.asp](http://www.coe.int/T/r/Parliamentary_Assembly/%5BRussian_documents%5D/%5B2012%5D/%5BOct2012%5D/Res1897_rus.asp) :

32. Федеральный закон от 12.06.2002 N 61-ФЗ, «Об основных гарантиях избирательных прав и права на референдум гражданам Российской Федерации» // Собрание законодательства Российской Федерации.-17.06.2002г.-N 24:

33. «Танасе и Киртоакэ против Молдавии» /Tanase and Chirtoace v. Moldova/ (N7/08). Постановление Европейского Суда по правам человека от 18 ноября 2008г. // Бюллетень Европейского Суда по правам человека, 2009. N 3:

36. Judgment on CASE OF HIRST v. THE UNITED KINGDOM (No. 2) (Application no. 74025/01), 6 october 2005, <http://hudoc.echr.coe.int/sites/eng/pages/search.aspx?i>.

#### ԳՐԹԵՐ, ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

37. Այվազյան Ն. Ա., Օհանյան Մ. Ս. <<Ազատ ընտրություններ և հանրաքվե կազմակերպելու հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում>>, Երևանի համալսարան հրատ., Երևան. 2010, 208 էջ (հղում 34):

38. Դանիելյան Գ. Բ. «Վարչական վարույթ և դատավարություն».  
Ուսումնական ձեռնարկ, Տիգրան Մեծ հրատ., Երևան. 2011, 380 էջ  
(հղում 18):
39. Եղյան Ռ. Յ. «Հայաստանի Հանրապետության ընտրական  
համակարգը» Ուսումնական ձեռնարկ, Եր. Երևանի պետական համալս.  
Հրատ., . 2000, 114 էջ (հղում 35):
40. Շաթիրյան Է., Մանասյան Ա., Հովհաննիսյան Ա. «Ընտրական  
օրենսդրության արդի հիմնահարցերը և զարգացման հեռանկարները  
Հայաստանի Հանրապետությունում», Չանգակ հրատ., Երևան-2013, 206  
էջ (հղում 66, 74, 107):
41. Խաչատրյան Լ. «Ընտրական իրավունքն ու ընտրակեղծիքները».  
Հեղինակային հրատ., Երևան. 2010, 175 էջ (հղում 33):
42. Խրոպանյուկ Վ. Ն. «Պետության և իրավունքի տեսություն».  
Գոշ հրատ., 1997, 433 էջ (հղում 6):
43. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունք.  
Պատ. խմբ. ի.գ.դ., պրոֆեսոր Ն. Ա. Այվազյան. 5-րդ լրամշակված  
հրատարակություն. ԵՊՀ Հրատարակչություն. Երևան. 2012, 736 էջ  
(հղում 88):
44. Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք. Ընդհանուր  
խմբագրություն՝ ի.գ.դ., պրոֆեսոր Գ. Դանիելյան. ԵՊՀ  
Հրատարակչություն. Երևան-2012, 702 էջ (հղում 81):
45. Մուրադյան Գ., Թովմասյան Յ. «Ընտրական վեճեր».  
Ուսումնական ձեռնարկ. Ասողիկ. 2007, 109 էջ (հղում 7, 22, 124):
46. Авакьян С. А. Актуальные проблемы конституционно-правовой ответственности//  
Конституционно-правовая ответственность: проблемы России, опыт зарубежных  
стран. М., 2001, 448 էջ (հղում 17):
47. Арзамасов Ю. Г. Наконечный Я. Е. Концепция мониторинга нормативных  
правовых актов.-М.: Юрлитинформ, 2011, 126 էջ (հղում 99):



48. Барак А. Судейское усмотрение. Норма. Пер. с англ; науч. Ред. В.А. Кикоть, Б.А. Страшун, М., 1999, 364 էջ (հղում 29):
49. Большой юридический словарь. М. 2010 (онлайн версия) //http.www.dictionary.ru//:
50. Большаков С. В., Головин А. Г. Информационное обеспечение выборов и референдумов в Российской Федерации. 2-е издание, перераб. и доп., М. РЦОИТ, Изд-во Весь мир, 2007, 304 էջ (հղում 106):
51. Головин А. Г. Избирательное право России. Норма. М. 2009, 541 էջ (հղում 57, 104):
52. Grimm Д. Д. Лекции по догме римского права / под ред. и с пред. Томсинова В. А., Зерцало. М., 2003, 496 էջ (հղում 48):
53. Дмитриев Ю. А., Израелян В. Б. Избирательное право и процесс в Российской Федерации. Изд-во Феникс. Ростов-на-Дону. 2004, 864 էջ (հղում 21, 121):
54. Ефремова Т. Ф. Новый словарь русского языка. Толково-словообразовательный (онлайн версия) // http.www.dictionary.ru// (հղում 27):
55. Игнатенко В.В. Юридическая ответственность в избирательном процессе. М., РЦОИТ. 2002, 106 էջ (հղում 16):
56. Ищенко Е. П., Ищенко А. Е. Избирательные споры: возникновение, разрешение, предупреждение.-М., РЦОИТ. 2002, 144 էջ (հղում 23, 40):
57. Избирательное право и избирательный процесс в Российской Федерации. / С. А. Авакьян, Л. Г. Алехичева, В. В. Альхименко и др; Отв. Ред. А. В. Иванченко, Норма. М., 1999, 856 էջ (հղում 1, 4, 15):
58. Избирательное право и избирательный процесс в Российской Федерации. / Отв. Ред. А. А. Вешняков. Норма. М., 2003, 816 էջ (հղում 5, 24, 37, 45, 92):
59. Избирательное право. Под ред. К. К. Гасанова, А.С. Прудникова. – 2-е изд., перераб. и доп., Москва. ЮНИТИ-ДАНА. 2007, 415 էջ (հղում 58):
60. Катков. Д. Б., Корчиго Е. В. Избирательное право: учебное пособие / Юриспруденция. М. 2001, 288 էջ (հղում 13):

61. Князев С. Д., Охотников Р. А. Избирательные споры: юридическая природа и порядок рассмотрения: Монография.-Владивосток, Изд-во Дальневост. ун-та, 2005, 148 էջ (հղում 11, 101):
62. Матейкович М. С. Избирательное право и избирательный процесс. Норма-Инфра. М. 2010, 287 էջ (հղում 61):
63. Мишанова Е. В. Наблюдение на выборах. Учебное пособие. Под ред. Г. В. Голосова: изд-во Европейского университета в Санкт-Петербурге, С. 2007, 113 էջ (հղում 72):
64. Мостовщиков В. Д. Территориальные избирательные комиссии: система, государственно-правовой статус, порядок формирования и компетенция/ Учебно-методическое пособие.-Екатеринбург, 2002, 249 էջ (հղում 25, 86):
65. Толковый словарь. Справочно-правовая система <<Гарант>>, (հղում 20):
66. Туманова Л. В., Туманов М. А. Избирательный процесс в Российской Федерации: социологические и политико-правовые аспекты.-Издательство Проспект. М., 2004, 416 էջ (հղում 96):
67. Хаманева Н. Ю. Судебный контроль за реализацией прав граждан в сфере исполнительной власти. Академический правовой институт при Институте государства и права РАН. Москва, 1999, 110 էջ (հղում 112):
68. Хрестоматия по гражданскому процессу, под общей редакцией М. К. Треушникова. Городец. М., 1996, 226 էջ (հղում 113):
69. Юридическая конфликтология/отв. ред. В. Н. Кудрявцев.-М. 1995/онлайн библиотека, <http://www.koob.ru> (հղում 8):
70. Benda/Klein, Lehrbuch des Verfassungsprozessrechts, Verlagsgruppe Huthing Jehle-Rehm. Heidelberg, 2001, 587 էջ (հղում 130):
71. Compendium of international standards for election Second edition, European Commission, Printed by Elanders Graphic Systems AB, Brussels. 2007, 220 էջ (հղում 93):

72. Erik O. Wennerstrom. The rule of Law and the European Union, Uppsala: Iustus Forlag. 2007, 354 էջ (հղում 82):

73. European Union Election Observation Handbook, Second edition, European Commission, Printed by Elanders Sverige AB, Brussels. 2008, 224 էջ (հղում 27, 75, 78):

74. Guide to electoral dispute resolution. The Carter center. 2010. Atlanta. GA 30307. [www.cartercenter.org](http://www.cartercenter.org), 135 էջ (հղում 3, 30, 31):

75. Jesus Orozco Henriquez. Electoral Justice: The International IDEA Handbook. 2010, 234 էջ (հղում 44):

76. Resolving election disputes in the area: OSCE. Towards a standard election dispute monitoring system. By Dennis Petit. ODIHR. Warsaw. 2000, 41 էջ (հղում 2):

ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐ, ՁԵԿՈՒՅՑՆԵՐ, ՆԱԽԱԳԾԵՐ

77. Այվազյան Ն. Ա., «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի բարելավման որոշ հիմնախնդիրներ», Բանբեր Երևանի Համալսարանի, Իրավագիտություն, 143.3, 2014, N 2, 15-27 էջեր (հղում 28):

78. Գյուլումյան Ա. Սահմանադրական դատարանում ընտրական վեճերի քննության առանձնահատկությունները» // ՀՀ Սահմանադրական դատարան տեղեկագիր. 1999թ. N 1, 3-9 էջեր (հղում 129):

79. Դանիելյան Գ. Բ. Վարչական արդարադատության կայացման հիմնախնդիրները, Երևան «ԱՌՏ», 2003 (հղում 116):

80. Գ. Հարությունյան «ՀՀ Ազգային ժողովի ընտրությունները և ընտրական իրավունքի դատական պաշտպանությունը» , ՀՀ Սահմանադրական Դատարան տեղեկագիր. 3(12) 1999թ., 9-17 էջեր (հղում 91):

81. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, ԵԱՀԿ/ԽՎ, ԵԽԽՎ և ԵԽ - հայտարարությունն նախնական հանգամանքների և եզրակացությունների վերաբերյալ , 7 մայիսի 2012թ., 21 էջ (հղում 71):

82.«Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք». Վենետիկյան հանձնաժողով, 52-րդ լիազուրկար նստաշրջան, 18-19 հոկտեմբերի 2002թ. Վենետիկ, (CDL-AD(2002)23), 33 էջ, [www.venice.coe.int](http://www.venice.coe.int) (հղում 60):

83.«Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրություններ», 2013 թ-ի փետրվարի 18-ի ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույց >>, Վարչավա. 8 մայիսի 2013թ., 49 էջ (հղում, 71, 122):

84.«Ընտրական վեճերի դատական լուծման մոնիտորինգ>>. ՀՀ Ազգային ժողովի 2007թ-ի մայիսի 12-ի ընտրություններ-ինֆորմացիայի ազատության կենտրոն (Freedom of Information Center of Armenia(FOICA), [www.foi.am/hy/projects-archive.item/419](http://www.foi.am/hy/projects-archive.item/419) (հղում 98) :

85.Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ /Նախագիծ՝ մշակված ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից/ Երևան, 2014թ. մարտ, 45 էջ (հղում 70):

86.Վարդանյան Ս. Վարչական հայեցողության սահմանման և իրացման որոշ հիմնահարցեր. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սափրանտների և հայցորդների 2014թ. նստաշրջանի նյութերի ժողովածու. ԵՊՀ հրատարակչություն. Երևան. 2015, 37- 52 էջեր (հղում 84):

87. Арутюнян Г. Г. Вступительное слово на 12 Ереванской международной конференции <<Роль конституционных судов в обеспечении демократических выборов>> (5-7 октября 2006г.). Ер. 2006, 1-7 էջեր (հղում 32):

88. Анохин В. С. Коллективные иски в арбитражном процессе: плюсы и минусы. 2010, <http://justicemaker.ru/view-article.php?id=1&art=2020> (հղում 53):

89. Баранов В. М., Худойкина Т. В. Теория юридического конфликта: философские и социолого-правовые аспекты// Юрист-правовед.-2000, N 1, 22-28 էջեր (հղում 10):
90. Белов С. А. Процессуальные особенности судебной защиты избирательных прав граждан/ Кодекс-Инфо. 2001, N 1(313), 8-12 էջեր (հղում 123):
91. Галушко И. В. Правосудие как способ разрешения юридических конфликтов в ходе выборов и источник судебной практики// Вестник Центральной избирательной комиссии Российской Федерации.-2003. N 1, 101-113 էջեր (հղում 26):
92. Доклад о верховенстве права. Принято на 86 пленарном заседании Венецианской Комиссии (Венеция, 25-26 марта 2011года), CDL-AD(2011)003rev 23 էջ [www.venice.coe.int](http://www.venice.coe.int)(հղում 83) :
93. Захаров О. Ю., Порфирьев А. И. Нарушения избирательных прав и «негативные» избирательные технологии в Московской и Брянской областях: анализ, пути противодействия // Конституционное и муниципальное право.-2002.- N3, 22-26 էջեր (հղում 39):
94. Князев С. Д. Избирательные споры/ Известия ВУЗ-ов. Правоведение. 2001. N 3, 53-70 էջեր (հղում 36, 41, 123, 128):
95. Матейкович М. С. Необходимо усовершенствовать механизм судебной защиты избирательных прав граждан // Российская юстиция. 2003. N 3. 20-22 էջեր (հղում 109):
96. Постников А. Е. Избирательное законодательство: необходимо четкое разделение полномочий между различными уровнями власти при проведении выборов // Журнал российского права-2002. N 5, 12-22 էջեր (հղում 43):
97. Пошивайлова А.В. Понятие и особенности избирательного спора // Право и политика. 2005. № 11(17), 124-133 էջեր (հղում 9, 12):
98. Рихтерман В. Я., Черепанов В. А. Защита прав и законных интересов группы лиц или предложение, от которого нельзя отказаться //Арбитражная практика 2010. N 12, 32-38 էջեր (հղում 53):

99. Степанов И. Защита избирательных прав неопределенного круга лиц // Законность. 2007. N 7, 46-48 էջ էր (հղում 46):
100. Табиханов А. Д. Проблемы ответственности за нарушения избирательного законодательства/ Академический юридический журнал.-2002.-N1, 58-60 էջ էր (հղում 14):
101. Треушников М. К. Судебная защита избирательных прав в России// Вестник Московского университета. Серия 11. Право.-2000. N 1, 3-16 էջ էր (հղում 38, 117):
102. Тупиков В. А. Процессуальные особенности судебной защиты избирательных прав, права на участие в референдуме граждан Российской Федерации// Российский судья.-2001.N 3, 19-24 էջ էր (հղում 111):
103. Штурнев А. Е. Конституционно-правовая ответственность за избирательные правонарушения в Российской Федерации: общеправовая характеристика и юридическая природа.-Владивосток.-Академический юридический журнал. 2003. N1, 11-17 էջ էր (հղում 17):
104. Clark S. S., Harris C. Multi-Plaintiff Litigation in Australia: A comparative Perspective // Duke Journal of Comparative and International Law. 2001. N 11, 289-320 էջ էր (հղում 49):
105. <<Code of Good Practice in electoral Matters: Guidelines and explanatory report>>, Adpted by the Venice Commission at its 52nd session (Venice, 18-19 october 2002), CDL-AD (2002)23 rev (հղում 65, 68):
106. Electoral dispute resolution systems: towards a handbook and related material. Summary of concept paper developed and presented by Orozco Henriquez and dr. Raul Avila to EDR expert group workshop held in Mexico city, 27-28 may 2004, [www.idea.int/news/newsletters/upload/concept\\_paper\\_EDR.pdf](http://www.idea.int/news/newsletters/upload/concept_paper_EDR.pdf) (հղում 77):
107. <<Join Final opinion on the Electoral Code of Armenia>>, Adopted by the Council for democratic Elections at its 38th meeting (Venice, 13 october 2011) and by the Venice

Commission at its 88th Plenary Session (Venice, 14-15 october 2011). CDL-AD(2011)032 (հղում 64):

108. Hodges C. Europeanisation of Civil Justice. Trends and Issues // Civil Justice Quarterly, 2007, January. Vol. 26, 96-123 էջեր (հղում 51):

109. Office for Democratic Institutions and Human Rights, <Resolving Election Disputes in OSCE Area: Towards a Standard Election Dispute Monitoring System>>, <http://www.osce.org/odihr/elections/17567> (հղում 108):

110. Second Eastern Partnership Facility meeting on voter lists and election dispute resolution. Chisinau, 22-23 september 2011- <<European standards regarding the effective system of complaints and appeals concerning violations of electoral legislation and electoral dispute resolution: Experience of some countries>> (S. KALCHENKO), 30 էջ (հղում 116):

111. Tarruffo M. Some Remarks on Group Litigation in Comparative Perspective // Duke Journal of Comparative and International Law. 2001. N 11, էջեր 405-421 (հղում 52):

112. Walker J. Crossborder Class Actions: a view from across the border // Michigan State Law Review. 2004. N 3, էջեր 755-798 (հղում 50):

#### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՍԵՂՄԱԳՐԵՐ

113. Դանիելյան Գ. Բ. <<Յայտանի Յանրապետությունը ունում վարչական արդարադատության ձևավորման հիմնախնդիրները>>,

Ատենախոսությունը ի.գ.դ. գիտական աստիճանի հայցման համար. Երևան - 2004, 300 էջ (հղում 114):

114. Մուղնեցյան Գ. Ս. <<Վարչական դատավարության ընթացակարգային առանձնահատկությունները Յայտանի Յանրապետությունում>>, Ատենախոսությունը ի.գ.թ. գիտական աստիճանի հայցման համար. Երևան - 2011, 146 էջ (հղում 110, 115):

115. Чилингарян А. М. <<Защита избирательных прав граждан Республики Армении>>. Диссертация кандидата юридических наук. Москва-2010, 167 էջ (հղում 105):

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

ՀՀ իրավական ակտերի պաշտոնական էլեկտրոնային համակարգ՝  
[www.arlis.am](http://www.arlis.am)

Օրենսդրության միջազգային էլեկտրոնային բազա՝ [www.legislation.org](http://www.legislation.org)

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վեբ կայք՝ [www.election.am](http://www.election.am)

ՀՀ Սահմանադրական դատարանի վեբ կայք՝ [www.concourt.am](http://www.concourt.am)

Միջազգային փաստաթղթերի էլեկտրոնային բազա՝

[www.conventions.coe.int](http://www.conventions.coe.int)

ԵԱՀԿ վեբ կայք՝ [www.ocse.org](http://www.ocse.org)

[www.venice.coe.int](http://www.venice.coe.int)

[www. Gallup International Association.com](http://www.GallupInternationalAssociation.com)

<http://www.electoralcommission.org.uk/our-work/our-views/law-commission-review-of-electoral-law/>

<http://www.elections2014.eu/en/in-the-member-states/electoral-law/>

[http.www.mcglinchey.com/images.pdf.int1 D9 PDF./](http://www.mcglinchey.com/images/pdf/int1_D9_PDF./) Class Action Fairness. Act of 2005

<http://www.law.cornell.edu/rules/frcp/> Rule 23 htm// Federal Rules of Civil Procedure. Rule 23//



